

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2258

2259

84

U-66

413

ԳԱԱՆԱԿԱԿԻՑ ԱԱՏԵԱՇԱՐ • թիվ 37

Վ. 8

391.99

U-42

Ա. ԱՀԱՐՈՒԵԱՆ

Մեր կամքէն անկախ պատճառներով՝ առաջին քանի մը էջերուն մէջ տառասիսալներ պատահած են:


Էջերու 1—12 թուանշանները ուէտք
է կարդալ 4—16

ՍԻԱԼ

ՈՒՂԻՊ.


ԵՐԵՒ	ՄԱԴ	ՈՒԲԵԼ	ՍԵՐՄԵԼ
» 10	» 23	ոչ	ալ
» 28	» 22	շափ	շամ
» 29	» 9	հոգու	հագաւ
» 33	» 1	բերանին	բառին
» 36	» 16	իր	իր հօր
» 47	» 2	իրենց	որ իրենք
» 92	» 15	ըսէ	լուէ
» 115	» 1	կը սուրար	կը սոսկար

ԵՐԵՒ 65-ի առաջին պարբերութիւնը
ԳԼՈՒԽ Զ. Ա. Աղեքոք է սկսի:



15262

Ohannes N. Sa'amanian
237 L St. So, Boston Mass.



I

Այս ամսում մի քանի նկարչական էտիլենիլի
համար որոշեցի արձակուրդներս գիւղում անցկացնել։
Յթունիոր համեմուն պէս՝ պայուսակս և նկարչական
պիտուբներս պատրաստեցի ու հանապարհ ընկայ։

Մտածում էի ամբողջ երեք ամիս խաղաղ կրտ-
րուել աշխարհից, ուստի մի այսպիսի գիւղ էի ընտ-
րել, ար ոչինչ և ոչ ոք ինձ չպէտք է խանդարէր։
Ճանապարհորդ օտարականներ չեն գալիս այնուեղ,
որովհետեւ կուրորտ չեր, մեծ հիւրանոցներ չկային,
մինչեփսկ մեծ ճանապարհներից էլ բոլորավին դուրս
էր։ Խուլ մենաւորութեան մէջ մոռացուելու, լայ-
նարձակ ու գեղեցիկ բնակեան ծոցում ազատորէն
ապրելու ու երազելու բոլոր յարմարութիւնները
ներկայացնում էր աղջ գիւղը։ Նրա մի կողմից հո-
սում էր սահանքաւոր լեռնացին գետակը, միշտ
աղմկայող և միշտ էլ վճիռ, միւս կողմում ցցում
էր բարձրաբերձ լեռների մի գեղանկար շվթաց, որի
ամեն մի կասարը իր մութ անտառներով առեւ թի-
կունքը մորթիով պատած մի հակայ լինէր, որ գէպի
երկինքը ձգուելու գեղեցիկ խենթոթեամբ էր բանը-
ւած։ իսկ առելի հետոն՝ լեռների սաների տակ, հրա-
շագեղ ելեկ չներով տարածւում էր գեղեցիկ դաշտա-

Տարագրիչ — Համարակալիչ Վ. Օ. Գ. Բ. Շ. Ա. Թ. Կ. Ե. Ս.



92381-472

508-ԶԵԶ

վայրը, ինչպէս մի կանաչի ծով։ Ես աշխատում եմ
մի անկիւն գտնել, ուր կարողանամ բիրտ, գտնասու,
շուա անգում գարչելի իրականութիւնից խոյս տալ
ու միայն երազել, երազել ու վայելի միայնու-
թեան խոհերով լի թախիծի պատճառած անխառն
հաճոյքը, այժմ ապրում էի մի տեղում, ուր բնու-
թիւնն ինքը մի սքանչելի երազ լիներ առես, և ուր
մարդկացին հոգին, ծարաւի ու յուղու զողամ էր
գեղեցկութեան ներդաշնակութեան սքանչելի գաղտ-
նիքի առաջ։ Եւ այս բայրը ես պիտի վայելի
ամբողջ երեք ամիս։ երջանիկ էի, և սիրոս թրր-
թուում էր անխառն հաճոյքից։

Ինձ պէս մի երազող, գեղասկաշտ ու բնութեան սիրահար առելի լաւ բնարաւթիւն ընել չըկարող :

Տանստիկինո մի հաստ, չիկնաեր ու բարի դէմ-քով գեղջկուհի էր, յիսունից անց էր երեսում, բայց անփորձ ու պարզամիտ էր, ինչոքէս մի երեխայ: Երա խոշոր թերութիւնը իր շատախօսութիւնն էր, որ ել աւելի անախորժ էր զառնում չնորհիւ լսողութեան ծանրութեանը: Պես առաջին օրը նա ինձ ընդունեց ինչոքէս իր վտարանդի որդուն, որ նոր է վերադառնում օտարութիւնից:

— Խաղաղ աշխատանքին՝ կամ պարզապես հանգստութեան տեղ է, պարան, ասաց նա ցայց տալով ինձ իր սենեակը, անցեալ տարի էլ ևս մի նկարիչ ունեի հենց այս սենեակում, առելացրից նա հպարտութեամբ, որ սե, երկար մազեր, կարճ միրուք ունէր, հաղնում էր մետաքսէ բլուզ, կրում էր լայնեզր ցողէ զիլսարկ, չատ նկարում էր և չատ էր զոհ մնաց. նման էր ձեզ, բալորսին նման, այսօր

երբ Տեղափակ ձեզ տեսաց, ինձ թւաց, թէ առ է զաւ-
լիս. լուս մարդ էր: Ես բախտ ունեմ, իմ սրբագրօնը
միշտ լուս մարդիկ են զայիս:

Եւ այդ պահսիօնը . . . ընդամենը երկու համեստ
սեանեալ վերին յարկում, խակ ներքեռում մի խոհա-
նց, մի սեղանատան և մի փոքրիկ ննջաբան տան-
տիկոց համար: Բայց պատան այսպէս էր արտա-
սանում « իմ պահսիօնը », կարծես զա մի շքեղ,
հարուստ գվեսկ լինէր: Նա երջանիկ էր, որ կա-
րգանում էր ամեն ամսա մի երկու տառալ կամ
քաղաքացի հիւր առենալ, խօսել նրանց հետ, բաներ
վաճառ և յետոյ առանձին հպարտթեամբ պատմել
իր հարեանուհիներ ու նոյնիսկ իւրաքանչիւր նոր
պահսիօնէր ամրազ ամսուայ ընթացքում սպի-
ռուած էր պատացից լսել իր նախարի կեանիքի և
արտաքինի մասին հագարածի մանրամասնութիւն-
ներ: Խեղձ կինը այսքան զահ էր լինում, եթէ նո-
րեկն առանձին ոշագրութեամբ էր լսում նրա պատ-
մութիւնները և բաժանում նրա զարմանքը, հաց-
մանքը, համակրամթիւնը զէսի բացակայ չփրեր:

ինձ պիծակուել եր տեղ մի անձանօթ ոպարշ
մասին, որ իբր թէ ինձ պէս երկար մազիր ու մի-
րուք անէր, որ շատ եր նկազում և լաւ ժարգ եր:
Հնդկաներ երկու շարաթի եր, ինչ առցում էի այս
պահախօնում, բայց արգէն զիտէի իմ նախորդի հա-
սակի բարձրացնիւնը, ասրիքը, զէմքի տաղանքը մա-
սերի ճիշտ նկարագիրը, աչքերի և մազերի զօնը,
նրա զանազան առվազութիւնները, պատելլու և վեր-
կենալու ժամերը, սիրած կերպակրները, ձաներ, շար-
ժութեները, մի խօսքով սարից գլուխ ծանօթ եր ար-
բայց իմ բարի պատաւը կարօզանում էր զեր էլի նո-

բանոք մանրամամութիւններ պատմել, որոնք բուլորն էլ ծագում էին առնում ինձանից : Դժուար չէր նկատել, որ ինչ ես անում էի, առնախինոց ասելով նոյնն անզատառ արած էր ինում իմ նախորդը : Ես իմ արտաքինով ու ներքինով, իմ ամբողջ էտթեամբ կարծես մի անսակ կրկնութիւնն էի ինձ անձանօթ, անյայտ, զոցէ և երեակայական մի մարդու :

Եթէ ես առաւօտներն իջնում էի գետակի ափը, զուրս էր գալիս, որ իմ նախորդն էլ նոյնն էր արել և միենոյն ժամին . եթէ երեկոյեան ուշ էի վերադառնում, գրունում էի խոնաւ օդի մէջ, նախորդս անզատառ նոյն անզգուշութիւնն արած էր ինում :

Միշտ կրկնում էի, ո՞րդի, ասում էր նա, երեկոնքը շուտ ներս արի, խոնաւ օդը լաւ չի, էլի չէր լուսմ, ձեզ պէս, պարոն, ձեզ պէս, ա՛խ այդ նկարիչները, զիտեմ, զիտեմ ձեզ, թափառականներ էք, եւ նա օրօրում էր պլուխը յանդիմանող եղանակով :

Ես սկզբում չափաղանց գահ էի, որ հարեան սենեակը պարապէ, որ պանսիօնում ինձ խանգարող չկայ, կարող եմ ապրել ու զածիս պէս, ժամանակս պարապեռների նուիրել, կամ մենոմենակ թափառել լիւնեներում ու խորհել : Բայց կամաց—կամաց պատափ շատախօսութիւններն ինձ այնպէս ձանձրացրին, որ ի պատէ կ'ուզէի մի բախտակից ու նենալ այս պանսիօնում, նրա հետ բաժանել վիճակիս ծաւրութիւնը, որ տանտիկինս երբեմն էլ ինձ ազատ ձգի և նպանով զբաղուի : Տարաբախտաբար ամառն արդէն մօտենում էր կիսին և սենեակը շառում էր պարապէլ :

Տանախինոջս շատախօսութիւնն ինձ սակայն մի օգուտ տուեց, ես այլես երբէք տանը չէի նըստում : Համարեա ամեն առաւօտ վաղ ձանապահն էի ընկնում լիւները, վերադառնում էի ձաշին և յեռոյ կրկին դնում՝ միայն ուշ երեկոյեան տուն գտարու համար : Երբեմն ճաշու էլ առնում էի հետո և այն ժամանակ ամբողջ օրով տուն չէի գալիս . մի քանի անգամ նոյնիսկ վեչերները չդարձաց և անցկացրի լիւնային խուզերում՝ հովիւների հետ :

Դա մի զարմանալի կեանք էր, խենթ ու զեղեցիկ, մաքուր յոցգերով հարուստ ու խորը : Ես զարձել էի մի մոլորուած, թափառական քամի, զարձել ոչ մի աեզ կայան չունի : Ես սիրում էի մենասոր ու այլանդակ ժայռերը, որոնք կարծես զալանիքների վրայ թուխս են նստել և նոթերը կիսել պառաւած հակաների պէս . սիրում էի և՛ մենասոր ծառերը, որոնք զիտես ինչ մի անհամականալի քամանուրով անստաներից խոյս տարով՝ անմատչելի լիւնակախառներն են ընտրում իրանց լուս լուսերի համար, փոփոքիների տակ տնկում են ու հեծեծում, բայց սիրում են երկնաքին մօտիկ լինել : Եւ ամսպէս հաձելի էր ահաւոր բարձրութիւններից զիսիս պայունագրին անյել անզունդները, կամ մի հայեցքով տով ցած նայել անզունդները, կամ մի հայեցքով ընդունիկի լայնարձակ հորիզոնները ու վայրինի ընունիկի թեան լուս սարսափը ձաշակել : Մանուկ օրերից ես սիրում էի երեակայել կենդանութիւնը մեսած ողջ տիեզերքում, ուր ես միայն կենդանի՝ ամպութեան ու անհամառնեան մէջ տարուելիս՝ համարուած պատուր ընտրեան մեծ վշտով : Այդ վիշտն էր, որ այժմ ես ձաշակում էի՞այս մենասոր լուսերը, ուր ժամուրի կատարներից զահաւիժուող

ջրվէժներն են հասացում, և ուր պատճառ—պատճառ
ամօքերը յազնուծ կարաւանների ովքս հեռու անզերիցց
դալիս են հանգչերու : Այս հմագիշ բնութիւնն ասես
անվերջ երազում էր վեհ լուսեթիւն մէջ, և նրա
երազները դեղեցիկ էին բնազիս զիսթական նշքիամբ-
ներ : Ես կը կամենացի այդ երազներից մէկն ու մէկը
աչքին առաջ անենալ կենուանի ու հանկանալի,
նշականար, բերանաբաց նեալ նրա առաջ, գուր-
զութիւ, փայտացել նրան, խնդալ ու լաց լինել նրա
հետ : Տարօքինակի, անկարելի մի անհնչ, բնութեան
երազն բնազիս բանել, ովք կը առաջ բնձ :

Երրեսն ինձ թւում էր, թէ իմ զնառած երազը
մարմնացած է մի գեղեցիկ թաջնի, մի թիթեսի, ո՞ի
ձալիկ մէջ՝ թուզուր բարձրանու էր, թիթեսը յանել
չէի կարպանում, միայն ծաղիկն էի քաղում, ուշ-
յում, խաղացնում ձեռքին մէջ և ապա վետում ու-
թերթիկները քամուն տալիս: Եւ նայում էի զափ-
չող թերթիկներին, որոնք զնում էին ով զբուէ ուր
և ողջ ընտիեւոր իր արտաքին գեղեցկութեան տակ
դառնում, եր իմ աշքին մի հոկայական զերեզման,
ուր մի կոյր անգիտակից ոյժ յեզիքում էր վեհօրէն,
սակազմում էր ու փշում, ծնում էր և ջնջամ զինու-
թնչու: Համար: Բնութեան երազը բանելու իմ անզօ-
րութեան մէջ՝ ևս վհատուած ու մոռլ, ցած էի
իջում զեսի գաշակը, ուր չարքաշ կեանքը եռում
էր մի անխարհուրդ թափով՝ կարծես զարձեալ ան-
զիսակից ու անսարքեր զեսի անխառափեսի վախ-
ճանը: Ես էլ այդ կեանքի մի մասն էի, որպէսից
անքաժան և ձեռք էի առնում զբճնա, կտափ վրայ
քարացնում վախչող իրականութիւնը, որա ցուռու
գալիքանները, տառազող մարդու այնքան տան-
ջանքները:

Մի քանի օրուայ բայսակայտ թիւնից յեսայ՝ մի երեկոյ տան վերպանալիս, պիւղին բարգավին մասիկ հեռակից տեսայ երկու կին, որոնք զայտ էին իմ հանդեպ զրուսպների զանդալ ու անհապ բայլուածքով։ Նրանից մէկը տարիքով էր երեսմ, իսկ միւսը ջանի, վերջին վարդադրու զգեստ ունէր և նոյնավոր հովանոց, մինչդեռ միւսը հազեր էր մուգ զգեստ և գլխին բնել մի սե հովանոց։ Արեգակը վազաց էր թեքանել դէպի հորիզոնը, Կրաշընակը հաղին էին կարստանում թափանցել հանաւաղերը հաղին էին կարստանում թափանցել հանաւաղերը կողմերի ծառերի արանքից, բաց և այսպիս զրուստով կանայք բաց էին պահում հովանոցի, երեխ հնց այսպէս, առանց մասնելու։ Ճամապարհի սառերաս վրայ վրայ և կանաչների պջանակով և կերուած նրանք ծրագրուած էին ինչ-ովէն երկու պատկերներ հետաւոր կիսախաւարի մէջ։ Այս կանայք քվասաբացի են անշատ, մասնեցի են, և երեխներ են մի զրուստը կատավելու բնելում։ Ես ո՞չ ուրախացայ, ո՞չ արտանիցի և կ'անցնելի նրանց կողքով սնաւարքեռութեամբ, առանց մանդամ ուշը զարձնելու նրանց վրայ բաց և ի անսպասիլի հուկանամաք այդ անկարգելի զարձնեց։ Դեռ հեռակից են նկատեցի, որ նրանք բնձ տեսնելով սկսեցին մի տար խօսակցութիւն։ տարիքով կինը ինչ որ պատճ, համազարդ էր, իսկ ջանիը գլխի և ձեռքի վճռական շաքժուած մերժուած էր։ Երբ ևս բալոր ինը մօնեցաց ու պիսի անցնելի ջանի կող զրուստը, վերջնա հովանոցը թափավ վար քաշեց, ամ-

բողջապէս ծածկեց ու զլոխը որ շտագով անցաւ հակառակ կողմը միւս կնոջ հովանու տակ թագնուելու կամ պաշտպանուելու համար, ինչպէս մի թոշնիկ, որ բազէն աւենիերով շտագում է մօր թեկի տակ պահուել:

Ես ապշած մնացի:

Թւում էր, թէ այդ կինն ինձ ճանաչեց ու դիտամբ խոյս տուեց, որ ես չկարողանամ իրան ճանաչել: Ուրիշ բացատրութիւն տալ անկարող էր: Առանց կանգ առնելու, առանց յևս նայելու՝ շարունակեցի ճանապարհ, բայց ոչք ու միտքս այն կանանց հետ էր, ովքրեր էին նրանք, ով էր այդ ջահիլ կինը. ինչու թափնուեց: Տարարախտաբար ոչ մէկի, ոչ միւսի գէմքը տեսայ: Մէկիկ-մէկի մտարերում էի ինձ ճանոօթ բոլոր կանանց, զիշում էր իմ անցեալից արկածներ, որոնց մէջ այսպէս թէ ահնարին խռան է եղել մի կին, և չդառայ մի հասիկ գէպը, որ հնարաւոր գարճներ այս աստիճան տարօրինակ հանդիպումն, այսքան զիրաւորիչ մի զիրարերմանք գէպի իմ անձնուիրութիւնը: Աւախորժ զգացմանքով, զժգո՞ւ ու մտաղբազ տուն հասայ: Տանտիկինս ցընծութեամբ զիմաւորեց ինձ, նրա լիքը, բարի գէմքը երջանիկ էր, իսկ խեղճ աչքերը վառում էին բաւականութեան կրակով:

— Ե, սիրելի նկարիչ, ուրախ լուր, բացականցեց նա հեռուից, հարեան անիք և մէկի տեղ՝ երկու:

— Ի՞նչ հարեան:

— Են, ես էլ ի՞նչ եմ ասում, հարեան չէ՛, այլ հարեանուհիներ, չափանիցիք այն կանանց:

— Այո՛, երկու կին տեսայ ճանապարհին:

— Մայր և աղջիկ են և պէտք է ապրեն միւս սենեակում մինչեւ ուշ աշուն, ինչ յաւ եղաւ, այն պէս չէ՛, տունը տիսուր էր, հիմակ երեք էր, ես էլ չորս: Հը՛, այսուհետեւ էլ չուտ-չուտ չէր փափչի սարերը, ասենք՝ ինչ եմ ասում, փափչում էր՝ փախէք, ես հիմայ ընկեր էլ անեմ, խօսակից էլ, չէ՛ք մնայ ասանք . . . աւելի վաս ձեզ համար: Բայց պիտի՞ք ինչ կայ, աւելացրեց նա ձայնը ցածրացնելով, այն ջահիլը մի քիչ այնպէս է — նա մատը ճակատին զրեց — մի փոքր տարօրինակ է, բժիշկները խորհուրդ են տուել, որ մեր զիւղը գայ, իմ պահսիօնում ապրի: Այնպէս սիրուն է, այնպէս սիրուն, հա՛, աղնւականներ են, անպատճառ աղնւական, ես առաջ էլ աղնւականներ եմ ունեցել, ճանաշում եմ . . .

Դեռ էլի շատ բան սասց տանտիկինս՝ բայց ես ապիկս չեի լսում նրան, ինդիքն ինձ համար այժմ մասամբ պարզ էր, հարեան սենեակում, ինձ լուրովին մօտիկ պէտք է ապրէին երկու անձնութեանայք, մի մայր ու մի աղջիկ, որոնցից մէկը համարեա պառակ է, իսկ միուսը մի փոքր տարօրինակ: Վերջին հանգամանքը բացատրում էր նաև ճանապարհի անախորժ միջնապէպը, որ ես զգուշացաւ պատմել տանտիկինցս նոր շատախօսութեան առիթ չտարու համար:

Լութեամբ բարձրացաց սենեակս, շորերս էր փախում և միւսունց ժամանակ մտածում: Որչափ և տարօրինակ լիներ այդ, բայց ինձ թւում էր, թէ իմ առաջ դրուած է մի համերուել, որ ես անպատճառ պարական եմ լուծել: Եւ այդ համերուելը հետեւեան էր — «ինչ փափոխութիւն առաջ կը բերի իմ կեան».

քում այս նոր հարեւանոթիւնը » : Առ հարցը զառնում էր իմ զիտամամամ, կախուած էր իմ զրիաւարնելից մի պատճառով, որ ևս բացարձել չէի կարողանամ, մի անորոշ զգացրնանք էր պաշարել ինձ, որ երկիր չէր, ոչ էլ անհանգամոթիւն, այլ անհանձեր, աղաւաղական դրութեան պէս մի բան : Մարդկացին կեսանքը մեծ ձանապարհ չէ⁶, որ այնքան անձանօթ կայսեթիւններ անցնում են իրար կողքից բարութիւններից անկախ ճակատապրեռով . ինչո՞ւ համար չէոց այս կանայք որեւէ ազգեցոթիւն ովեար է անհետան իմ ճակատապրի վրայ : Իմ հացեկան կացոթիւնը բացարձելու համար սկսեցի մտածել, թէ մի զոցէ ի ընէ իրար հետ չաղիսաբաւած բախտեր կան, որոց բաղիսամք իրական, տարկայական գոտեաբա : Համար պակասում են միայն զիստածներ, և առաջ այդ վճռական զիստածներից մէկը : Յետոց այս բնագական միտքը ինձ թւաց անհեթիւթ ու ծիծագիր, ժապացի խմթեթեամսոթիւնն վրայ, արդարի ։ ինչ նշանակութիւն կարող էր անհետալ ինձ նման փորձուած, մեծ քաղաքի արկածալից կեմանքին բածանօթ մի նկարչի համար մի խեղճ պատահի և համարեա խենիթ աղջկայ հարեւանոթիւնը, այն էլ երկու ամսով : Նոգիկան այս կացոթիւնը արգիւնք էր երկեի այն ծանր թափօճի, որ ևս ամեն անդամք բերում էր ինձ հետ հետառոր բեներից ու անուաներից, որ մեծ անուաներից, որ միայնութիւնը ամենասովորական երեսինքները զարձնում էր խորհրդաւոր :

Վերջին միաքն ինձ զրհացէց, բայց խելքն իմ աշքին ներկայացաւ ճանապարհի անցքը յեաբն մանրամասնոթեամբ, այն մուգ փոնի վրայ ծրադրուած երկու պատկերները, այն վարդագրին հովա-

նոցը, որ արագութեամբ իջաւ մի անձանօթ զեմքի վրայ, և այն բարձրահասակ կինը, որ փախաւ, մօր յիտեւմ ծածկուեց : Տանտիկինս ասաց, թէ չահիլ կինը մի քիչ այսպէս, տարօրինակ է, բայց Ելի... ինչո՞ւ համար փախաւ, կարող էր մի որիշ բան անել : Բւրաքանչիւր տարօրինակութիւն, մարդկացին հոգու ամենասուարութի արտայատութիւն անգամ՝ արտաքին աշխարհում իր շարժասիթները, իր գրգիւներն ունի անշռւշատ, ինչո՞ւ ևս հանգիսացայ ներկույց գէպրում այն կնոջ անօրինակ վարմունքի պատճառ, թնչ կապ գտաւ այդ խղճուկի վարմունքի և իր հոգու մէջ, ինչ հեմիտաքր իմ արտաքինի և իր հոգու մէջ, ինչ հեմիտաքր՝ և ցաւոս վերուշեր զարթեցրի ևս նրա գլխում :

Աստիճանների վրայ լուսող ոսնածանիները բնդհատեցին իմ մոքերը, նրանք բարձրանուած էին : Ես սկսեցի ուշադրութեամբ հետեւ նրանց քայլուածքին զգեստների խշխոցին, նրանց լոգնած ներքին ու թեթև բացականչաթիւններին : Ակամայ հայեացքս զարծաւ զէպի այն զուռը, որ ինձ բաժանուած էր նրանցից, և մի անյաղթելի պահանջ բաժանուած էր նրանցից, և այն զգացման զգացիք տեսնել նրանց զէմքերը, մանազգացիք մատկելից տեսնել նրանց զէմքերը : Շուշչու պահած՝ մատեցաւ զէմքը : Շուշչու պահած՝ մատեցաւ զէմքը : Շուշչու պահած՝ մատեցաւ զէմքը : Ես այսպէս կողմէքի ծակին, որ իմ բախտից բաւական լայն էր և բանալիով բանուած չէր : Ինչո՞ւ նայեցի, ինչո՞ւ գործեցի այս յանցաւոր անհամեստութիւնը, զգիտեմ, բացարձել չէի կարող, բայց զգում էի, որ կատարում եմ ամենավատ տեսակի զողութիւն և կուրծքս ողմում էի՝ սրախ բարախուումը մեղմելու : Համար : Մազքը յառաւն անցած մի կին էր, միջանասակ, հարուսա-

մարմնով, տակաւին թարմ գէմքով, որ մի ժամանակ պէտք է խիստ գեղեցիկ եղած լինէր : Նա հանեց գլխարկը, զրեց մի կողմ, ծոյլ—ծոյլ նկատեց դիւանի վրայ ու յենուեց բարձերին : Ազջիկը բարձրահասակ էր ու բարեձև կազմուածքով, կարծես մարմարից կերտուած, մարմնի զանազան մասերի համաչափութիւնը, դասաւորութեան ներդաշնակութիւնն սքանչելի էր : Նա շիկահեր էր, պարանոցը կարապային, աչքերը խոշոր, բայց առանց իր սեռին ու հասակին յատուկ կրակի . դէմքը ձուածե էր, նուրբ գծերով, բայց գունատ . ծնուր կոլոր, իսկ քիթը՝ հոսոմէական մատրոնայի : Մի կանացի գէմք աւելի կատարեալ լինել չէր կարող և սակայն այդ կինը անզօր էր գրաւել ում և լինէր : Երա արտաքին գեղեցկութեան և ներքին իմացականութեան ներդաշնակութիւնը խախտում մի բան կար, որ արտայացաւում էր նրա և՝ շարժումների, և՝ ժպաի, և՝ մանաւանդ հայեացքի մէջ : Եթունքները շարժելիս՝ նրա գեղեցիկ քիթի երկու կողմերում, բերանից վեր՝ կազմւում էին երկու այնպիսի խորշոմներ, որոնք մենակ բաւական էին ջնջելու համար նրա գեղեցկութեան բոլոր փայլը, իսկ աչքերը՝ այն խոշոր, սիրուն աչքերը կարծես ապակուց ձուլուած լինէին, տարօրինակ էր թւում նոյնիսկ, որ թերթունքները շարժւում են : Դա մի սառած, անյոյզ գէմք էր, որի խաղաղութիւնը ոչինչ չէր արտայացաւում, իսկ ամենաթեթև յոյզը դարձնում էր ողբալի : Այդ կինը զարմանալի միշեցնում էր միւզէների այն մոմէ գէմքերը, որոնք որքան աւելի են նմանում քնականին, նոյնքան նողկայի են դաւնում :

Օրդարե իմ առջև կանգնածը կարծես կին չէր, այլ մի ուրիշ արարած, որի արտաքին փայլի ու գեղեցկութեան տակ ծածկուած էր մի ինչ որ աներևոյթ, անհասանելի ու մութ բան, որ խանգարել էր նրա հոգու ներդաշնակութիւնը, փշրել էր կամքը և նրան դարձրել միմիայն շարժուն մեքենայ : Թւում էր, թէ այն մութ, աւերիչ բանը այդ կնոջ ներքինի և արտաքինի մէջ քանդել էր կապերը, և այդ պատճառով գէմքը դադարել էր հոգեկան յայգերի հայելին, արտայացափը լինելուց : Այդ սքանչելի աչքերը կարող էին լալ, երբ հոգին ժպառում էր, կամ ժպտակ՝ երբ հոգին լալիս էր :

Նա կանգնած էր հայելու առաջ անշարժ, հոգանոցը ձևուքին, գլխարկը գլխին և անմժարթ նայում էր իր պատկերին՝ կարծես հմայուած սեփական գեղեցկութեամբ : Մի երկու անդամ ժպտաց, մի անդամ էլ լեզուի ծայրը դուրս հանեց վարդադոյն շրթունքների միջից :

— Լեզուս ի՞նչ կարմիր է, մայրիկ, այնպէս չէ, աւեռ :

— Հա՛, կարմիր է, շտապեց համաձայնել մայրը, որ տիրութեամբ հետեւում էր նրա շարժունիներին :

— Գլխարկով լաւ եմ, ի՞նչ սիրուն եմ :

— Շատ լաւ ես, շատ սիրուն ես, Կլա՛րա :

— Մազերս կը քանդեմ :

— Քանդիր :

Երեւում էր, որ մայրը վճռել է ամեն բանում համաձայնել նրա հետ և երբէք չհակածառել, չզայրացնել :

Զահիլ կինը յետ քաշուեց, գլխարկը հանեց, ներդաշնին շարժունիներով երկայն, սոկեգոյն մազերը

քանդեց, փոեց ուսիրի վրայ՝ ու կրկին հկու հայելու առաջ կանգնեց: Այսպէս նա է՛լ աւելի գեղցիկ էր:

— Ես ի՞նչպէս գեղեցիկ եմ, մայրիկ:

— Շատ, շատ գեղեցիկ ես, կլարա:

— Ես մարդու չեմ զնա, որ արագուեն տղամարդիկ, ոչ մէկին չեմ առնի, թող աշխարը դուրս գայ:

— Հա՛, շատ լաւ կ'անես, մէ առ:

— Այ, ես այն պարսնին էլ չեմ առնի, որին քիչ առաջ տեսանք ճանապարհին:

— Մի՛ առ, նրան էլ մի՛ առ:

— Բայց նա ինձ կ'ուզի, անպատճառ կ'ուզի. այ, կը տեսնես, աղամարդրի այդպէս են, հենց որ մի սիրուն կին տեսնեն, խորին առաջարկութիւն կ'անեն: Մազերն էլ այնպէս երկար էին, տեսար, բուհ...

Եւ նա բարձրածան քրքջաց, հեռացաւ հայելուց, մօտեցաւ լուսացարանին, թե երը մնրիացրեց ու սկսեց լուսցուել: Հոլանի բազուկներն սրան չելի էին, նուրբ, բարեհե ու սպիտակ: Զեսքը թաղեց ջրի մէջ, բայց երկար ժամանակ չէր լուսցուեմ, այլ երեխայի պէտ խաղում էր ջրի հետ, մերժ ըերանն էր լցուեմ, փշում այս ու այն կողմ. մերժ երկու ափի մէջ բռնում թափով սղմում ու ցնցուզները տարածում շուրջը: Կլարան իր խաղերով թրջում էր անկողինը, պատերը, յատակը, իր զգեստները: Մայրը բաւական ժամանակ տիրութեամբ հետեւում էր այլ տեսարանին առանց համարձակուելու խանգարելն արան, ապա ճարը կարած մօտեցաւ կամացուկ ու քաղցրութեամբ տասաց:

— Կլարա, ջուր ածեմ՝ լուսցուե՞ս:

— Զէ, չէ՛, չէ՛, զայրացաւ աղջիկը, գէմքը ցաւալի կերպով ծամածուուեց, շրթունքները լողդողացին կատաղութիւնից, աչքերը փայլեցին մի անախորժ կրակով և նա սկսեց ոտները յատակին խփել և նետել սենեակի չորս կողմը ձեռքի տակ ընկած իրերը—աթոռ, սագոն, սանր, ջրաման: Մայրը գրկեց նրան, աղաչում էր, որ հանգստանայ, իսկ կլարան ճշում էր, ոտները թափահարում և ապա սկսեց բարձրածան հեկեկալ: Այդ լացը սպանիչ էր, ամբողջ այդ տեսարանը մի ցուրտ, վհատեցուցիչ բան ունէր իր մէջ, որից մարդու մազերն էին փշաքաղլում ու հոգին ցաւում: Ամաչեցի, որ նայում եմ, յոգնած ու ինձանից դժգոն յետ քաշւեցի, շտապով գուրս փափայ որ չսեմ այդ տեկրւած, խեղաթիւրուած հոգու աններդաշնակ հեծկտանքները, մի կորած զիտակցութեան այս այլանդակ ու անդիտակից սուզը, փախայ գէպի դաշտերը, պէտք էր քայլե՛լ, քայլե՛լ... Կլարայի ճիշը հալածում էր ինձ: Երկար թափառում էի ու մտածում այդ օրուայ անցքերի մասին, քննում է իմ հոգին, որի անակնկալ յուզումները ինձ զարմացնում էին: Այնուամենայնիւ երկար խորհելուց յետոյ հկայ այն հանգստացուցիչ եղբակացութեան, որ այդ բոլորը թէև չափազանց անախորժ, չափազանց անհաջոյ է, բայց այդ խեղճ կանայք պէտք է որ չկարողանան իմ կեանքում որեւէ գեր խաղալ, թեթև անհանգստութիւններ պատճառելուց զատ, որ այն ջահիլ իինը, այն օտարօտի կլարան որքան և գեղեցիկ լինի, ինձ համար մեռած է, քանի որ նրա հրաշալի արտաքինը միայն ցաւ ու ափսոսնք

է յարուցանում, և վերջապէս ծայրայեղ դէպօւմ,
եթէ նրանք շատ ձանձրացնեն ինձ, կը ձգեմ ու կը
հեռանամ այս պանսիօնից, ուր իմ խաղաղութիւնն
ու միայնութիւնը այսպէս անակնկալ ու անախորժ
ձևով խանգարուեց: Ինչ և լինէր իմ հոգեկան կա-
ցութիւնը, հաստատ էր սակայն, որ սիրայեն ար-
կածի հեռաւոր հնարաւորութիւն անդամ չկար ինձ
համար, իսկ դա աւելի քան կարեւոր հանգամանք
էր, որովհետեւ հակառակ դէպօւմ իմ պարապ-
մունքներն իսպառ կը խանգարուէին: Գեղեցիկ
կինը իմ կեանքում միշտ խաղացել է ճակատա-
գրական դեր, չգիտեմ՝ աշխարհում կա՞յ տղամարդ,
որ իր մասին կարողանայ հակառակը պնդել: Գե-
ղեցիկ կինը մի սփինքս է մեծ ճանապարհի վրայ,
և նրա առեղծուածներից խուսափել անհնարին է:
Փախել էլ քաղաքից ու այս խուլ ամայութեան
մէջ իմ հանգիստը թանգ էլ զնահատում: Ուրախ
էի, որ այս կինը իր արտաքինով թէւ մի սփինքս
է, բայց առեղծուածներ չունի, անվանդ է. չէ՞ որ
կարան համարեա իմենթ էր:

Սրդէն մութ էր, և ես իսպառ հանգստացած
տուն վերադարձայ:

III

Այն երեկոյ էլ ես ու տանտիկինս դարձեալ
մենակ ընթրեցինք. իմ հարեանուհիներն իրանց
սենեակումն էին, տանտիկնոջ ասելով այդպէս էլ
պէտք է շարունակուէր. նրանք սեղանատուն
չպէտք է իջնէին երբէք: Ես չգիտէի ուրախանա՞լ,
թէ տրտմել, որ մենք այսուհետեւ էլ մենակ պէտք

է լինենք սեղանատանը. մի կողմից այնուամենայ-
նիւ ինձ հետաքրքրում էին այդ կանայք, միւս
կողմից այդ օրը տեսածներս անհաճոյ էին դարձնում
որեւէ նոր հանդիպումն: Տանտիկինն այդ օրը չէր
խօսում անցեալ տարուայ նկարչից, նա բոլորովին
յափշտակուած էր իր նոր հիւրերով:

— Ե՛, մայրը խելացի կին է, պա՛րոն, խելացի
կին, անպատճառ աղնուական ծագումից. քիչ առաջ
տեսնէիք, երբ վերադարձան, նա մի ծաղիկ քաղեց
պարափղից, հա՛, տեսնելու բան էր, թէ ինչպէս
կուցցաւ, իսկ և իսկ աղնուականի պէս. և յետոյ
ծաղիկն էլ ա՛յ այսպէս երկու մատի ծայրով բռնեց
քնքութեամբ ու տուեց աղջկան:

— Աղգանո՞ւնը, հարցրի ես առանց մտածելու,
հէսց այնպէս, և դժգո՞ն մնացի իմ հարցից:

— Աղգանունը... ճշմարիտ՝ չեմ յիշում, մի
տեսակ էր, մի խոչոր անուն, աղնուականի անուն,
բայց էլի մոռացայ, ես աղգանունները երբէք չեմ
յիշում, մինչև իսկ ձերը շատ անդամ մոռանում եմ,
անցեալ տարուայ նկարչինն էլ չեմ յիշում, աւե-
լացրից նա ժպտելով:

Դուռը կամացուկ բացուեց և շէմքի վրայ
յայտնուեց կլարայի մայրը. անսպասելի էր, ես
սասափիկ շփոթուեցի, ինձ թւաց, թէ նա գիտէ, որ
ես նայել եմ դրան ճեղքից և յատկապէս եկել է
իմ երեսովը տալու վարմունքիս բոլոր տղեղու-
թիւնը: Պակաս չշփոթուեց նաև տանտիկինս. նա
թուաւ ոտքի, փորձեց մեզ ներկայացնել իրար,
բայց այդ չաղջողուեց, միայն ձեռքը նախ մեկնեց
գէպի նորեկը, ապա դէպի ինձ ու հազիւ կարողա-
ցաւ թօթովել.

— Կենւոր է, տիկին, նկարիչ, լաւ էլ նկարում է:

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ, տիկինը ձեռքը
մեկնեց ինձ, արտասահնելով իր անունը, որ ես լու
զմեցի:

— Հեռու էլ մի նկարիչ ունէի, կրկին մէջ ըն-
կաւ տանտիկինը, իսկեւսի սրա նման, բախտա
կտրում է, բոլոր լաւ մարդիկ ինձ մօտ են գալիս:

— Ես անչափ բախտաւոր եմ, որ առեթ ունե-
ցայ այսպէս շուտ ծանօթանալ պարոնի հետ, շա-
րունակեց նորեկը: Զեղսից ներողոթիւն ինդրելու
հարկի մէջ եմ գտնւում, պա՛րոն, դարձաւ նա
դէպի ինձ. դուք անշուշտ չէք մոռացել այսօր
ճանապարհին տեղի ունեցած անախորժ միջնադէ-
պը. երևակայեցէք, տիկին, պարոնը գալիս է մեր
հանդէպ, աղջիկս ծածկւում է հոգանոցի տակ և
վաղում է իմ յետևում թագնուելու. տարաբախ-
տաբար իմ խեղճ կլարան տղամարդկանցից և մա-
նաւանդ անծանօթներից խոյս տալու ցաւալի մա-
նիս ունի, մի քանի տարի է, որ այդպէս է, ինդ-
րում եմ ներողամիտ լինէք, պարո՞ն, դէպի խեղճ
հիւանդը և ուրիշ բացատրութիւններ չփնտուէք:

— Այն տխուր միջնադէպը, տիկին, ես հա-
մարեա մոռացել եմ և ի բոլոր սրտէ ցաւակցում եմ
ձեզ, յարգելի օրիսրդի հիւանդութեան համար,
որից՝ յոյս ունիմ նա շուտով կը բռւժուի. լեռնա-
յին օդը, արձակ, սիրուն բնութեան մէջ անյոյզ,
խաղաղ կեանքը հրաշագործ են մանաւանդ ներ-
գերի համար:

— Շնորհակալ եմ, պարոն, շնորհակալ եմ,
որքան բարի էք, ասաց նա և գլուխ տա-
լով հեռացաւ:

Ես մնացի լուռ ու մտախոն, խօսելու հերթը
տանտիկնոջս հասաւ:

— Այդ ինչ անախորժ բան է տեղի ունեցել,
Տէք Աստուած, բացականչեց նա. և դուք ինձ
չսացիք. ուրեմն նա այդպէս ծածկուեց ձեզանից,
և դուք բնձանից թագրիք, ինչ ցաւալի բան, և
այդպէս սիրուն աղջիկ. իսկ մայրը... տեսա՞ք,
ինչպէս է խօսում, աղնուականի պէս. չէք էլ
վիրաւորուել, ինչ բարի էք, ծիշտ հեռուայնկար-
չի պէս. երևակայեցէք, մի անգամ նրա հետ էլ
մի նման դէպք պատահեց, անցնում է փողոցով,
յանկարծ առաջն է դուրս գալիս մի մարդ, « կինի
չե՞ս խմի, ասում է, գնանք մի—մի բաժակ կոն-
ծենք ». կարո՞ղ էք երևակայել այդպիսի վիրաւո-
րանք, այդ անպիտանին ամբողջ գիւղը գիտէր,
միշտ հարբած էր, և անտանելի: Ինքը նկարիչը ինձ
ոշինչ չասաց, ես երևսից իմացայ, վրդովուեցի,
ուղեցի գնալ... դէ ախր չի կարելի, ես միշտ
պատուաւոր հիւրեր ունիմ, ո՞ւր կ'երթայ, եթէ
նրանց վիրաւորեն զանազան հարբեցողներ, իմ
պանսիօնը պատուաւոր հաստատութիւն է. հա,
դուրս եկայ, որ գնամ... ուր հարկն է յայտնեմ,
և, երևակայեցէք, իմ սիրելի նկարիչը չի թողնում,
չթողեց էլի՛, « Աստուած իր հետ, ասում է, թողէք
նրան հանգիստ ». ահա՛ այսպէս բարի մարդ էր,
ձեզ պէս բարի, փառք Աստծու, բախտ ունիմ:

Հակառակ իմ սովորութեան այն երեկոյ ընթ-
րիքից յետոյ ես չգնացի զրօննելու և լուսութեամբ
բարձրացայ սենեակս, ձգուեցի գիւանի վրայ,
ձեռքերս գլխիս տակ դրած՝ անթարթ նայում էի
այն դրանը, որ ինձ բաժանում էր իմ հարեւանու-

հիներից : Նրանք լուս էին , և այդ լուսովիւնը ինձ զբաղեցնում էրու խորհել տա իս : Վճռել էի ալիևս երբէք չնայել կողպէքի ծակից , երբէք անհամեստորէն չդիտել այն կանանց ներքին կեանքը , չտեսնել այն սքանչելի գեղեցկութեան աւերումները , այդ փշրուած բանականութեան ճնշող տեսարանները : Ես արդէն գիտէի համարեա բոլորը . հարեան սենեակում իր մօր հետ ապրում էր մի հիւանդ , դժբախտ կին , որ ներսում՝ առանձնութեան մէջ իր անհասկանալի քմահաճոյքներն ունի , իսկ դրսում՝ տղտմարդկանցից ծածկուելու տարօրինակ սովորութիւնն ունի : Եւ այդ ջահիլ կինը գեղեցիկ է . մի գեղեցկութիւն սական , որ ամէն վայրկեան աւերում , իսանգարւում է ներքին , հոգեկան աններգաշնակութիւնից , ինչպէս մի ջինջ լճակ , որ իր յատակին նստած տղմից պղտորուում է ամեն անգամ , երբ քամին յուղում է ալիքները : Գիտէի այդ բոլորը , բայց և այնպէս նայում էի դրանը . չէի կարողանում աչքս հեռացնել կողպէքի ծակից . արդեօք իմ վատ արարքի ամօթին էր հայեացքս կապել այդ դրանը , թէ՞ մի ուրիշ բան , չէի կարող ասել , բայց նայում էի անթարթ , մտածկոտ ու դժգո՞ն :

Մութ էր արդէն , բայց մտքովս էլ չէր անցնում ձրագ վասել , շարունակում էի պառկած մնալ սենեակիս խաւարի մէջ և ուրախ եղայ , որ ուշադրութիւնս գրաւեց մի ուրիշ բան , լուսոյ մի փոքրիկ չող ներա էր թափանցել իմ սենեակը և խաղում էր պահարանիս վրայ , ինչպէս մի մոլորած թիթեռ : Նայում էի այդ լոյսին , որ գալիս էր հարեան սենեակից , և մտածում էի այն մասին , թէ

ինչու այդ երեկոյ մնացի տանը և ինչու ճրագ չեմ վառում : Մտածում էի , պատասխան գտնել չէի կարողանում և զայրանում էի : Վերջի վերջով եկայ այն եղբակացութեան , որ թէկ չեմ ուզում ինքս ինձ խոստովանել բայց և այնպէս մնացել եմ տանը դարձեալ այդ կանանց համար , նրանց պատճառով . այս միտքը և՝ ամաչեցրեց , և՝ զայրացրեց ինձ : Միթէ՝ ծշմարիտ՝ այդ խեղճ , կիսախոհլագար կլարան ինձ այդպէս կարող էր հետաքրքրել մի օրում : Այդ անկարեկի է : Եւ որպէս ապացոյց՝ թափով վեր թռայ տեղիցս , լամպս վառեցի և ոկանցի մէկիկ—մէկիկ նայել ամառուայ ընթացքում իմ կոտարած էտիւդները , որոնք կարգով շարուած էին սենեակիս պատերի վրայ :

Նկարները բազմաթիւ էին . այստեղ կար մի գիւղացի աղջիկ , որ հանդարտ գալիս էր դաշտերից՝ գեանախնձորով լի կողովը շալակած : Բեռը ծանը էր . նա կրացած էր և քայլում էր դժուարութեամբ . գեղեցիկ արարած էր , բայց . գրաւիչ դիմագծերով , որոնք սակայն ծումռուում էին նրա ցաւոտ ճիգերով . աշխատանքը , մաշող , տրորող աշխատանքն էր այստեղ աւերած գործողը . բնութեան ներգաշնակութիւնը , որ այնպէս կատարեալ կարող էր լինել այդ անմեղ դէմքի վրայ , դարձեալ ալլանդակուում էր . աղջկայ փոյքի ը չէր , նա գնում էր ու գնում , ապրել էր պէտք :

Լերան վրայից մի պառաւ կին էր իջնում , նա քայլում էր երկուտակ ծալուած խղճալի անկարութեամբ , թէկ բոլոր բեռը չոր փայտերի մի քանի կտորտանք էր , որ նա ածել էր իր պատառուած գողնոցի մէջ : Խրձիթը հեռու էր , և նա պիտի քայ-

էր, քայլէր, լոռթեամբ, առանց տրտնջալու և
մինչեւ կը հասնէր :

Մի գիւղացի կար, որ հեռաւոր դաշտերից
սպլով խոտ էր բերում, փոքրիկ առուակից անց-
նելիս անիւը կոտրուել էր, և նա կանգնած՝ նա-
յում էր հեռուն մի անյուսութեամբ, որ ցաւի
խորին շեշտ ունէր, նա էլ պէտք է քայլէր մինչեւ
գիւղը նոր անիւ բերելու, գործը մնում էր և ժա-
մանակը փախչում :

Մի ուրիշ գիւղացի՝ արեից այրուած, թիսցած
դէմքով, որ այնպէս յիշեցնում էր մայր հողի
գոյնը, հանդարտ քայլում էր արօրի յետեից, և
աչքը չէր հեռացնում ակօսից, ուր թաղում էր իր
քրտինքն ու յոյսերը : Զոյդ եղները քաշում էին
օրօրելով հնազանդ գլուխները, երկիրը սևանում
էր նրանց ոտների տակ սերմն ընդունելու համար :

Եւ էլի ուրիշ շատերը . . . մտաբերեցի տեղը և
ժամը, երբ նկարել եմ այդ տեսարանները մէկիկ
մէկիկ մտքովս անցան այն անմեղ արկածները,
որոնք այնպէս կապուած են թափառական նկարչի
պարապմունքներին դաշտերում ու լեռներում:
Ճրագի լոյսի առաջ փռուած էր մի ամրող գիւ-
ղական կեանք իր բազմապիսի, պարզ, գրաւիչ ար-
տայայտութիւններով, չարաչար աշխատող, լոռու-
թեան ու խաւարի մէջ տքնող մարդկանց մի ամ-
բողջ բազմութիւն, որոնց միայն տեսքը այնպէս
առաքինի է դարձնում մեզ, այնպէս մեղմում է
փոքրիկ իրերից յուղուած մեր խոշոր կրքերը, նոր
սահմաններ է տալիս մեր անհատական ցաւերին,
հասկացնում է մեզ մեր ներքին արժեքը : Այսպիսի
առսարանների առաջ միայն մենք զգում ենք սե-

փական վշտերի բոլոր ոչնչութիւնը, զգում ենք, որ
իրապէս տառապող, մորմոքող սրաերի ցաւերին
ծանօթ չենք, և շատ անդամ հէնց զրա համար է
մերը անտանելի թւում :

Եւ ինչպէս լաւ էին այդ բոլոր տեսարանները,
և որքան վեհութիւն կար այդ տանջուած դէմքերի,
այդ հնազանդ և հողին ուղղուած հայեացքների
մէջ : Լոռթեան, խաւարի մէջ սահող, ծանր աշ-
խատանքով ծանրաբեռնուած այդ մութ կեանքի
ամեն մի կտորը, ամեն մի խորչը աւելի մեծ ցաւ,
աւելի խորը յոյզ է պարունակում շատ անդամ,
քան բիւրաւոր մեղկ գոյութիւնների մին հառա-
շանքները : Խակական ու խորունկ ցաւը լուս է և
գաւարւում է լոռթեան մէջ : Ինչո՞վ է՛ զրադուած
քիչ առաջ, մտածում էի ես, ի՞նչ էի ինձ համար
ծանր հոգսի առարկաց զարձրել, սրտի թրթիսով
աշխատում էի լսել, թէ ի՞նչ են խօսում երկու
կանայք, որոնցից մէկը նոյնիսկ հոգեալէս հիւանդ է .
արդեօք նրա համար չէ, որ նա՝ այդ կինը՝ զիւ-
ղացի չէ, այլ եկել է քաղաքից և պատկանում է
այն զասակարգերին, որոնք երբէք չեն հասկացել
բիւրաւոր մութ գոյութիւնների բիւրաւոր տառա-
պանքները :

Է՛ն, աշխարհը . . . ես էլ այդ աշխարհի հարա-
զատ զաւակն էի և ամաչում էի, որ այդպէս եմ :

Իմ մտքերը ընդհատեց հարեւան սենեակից
լուուղ խօսակցութիւնը : Մայրը խնդրում էր, որ
աղջիկը անկողին մասի, խկ կլարան չէր համա-
ձայնում և ինչ որ պահանջում էր, ինչ որ պայման
էր զնում :

— Չես գնայ, չեմ պառկի, ա՛յ, անկողինը կը
քանդեմ . . .

Ապա ես լսեցի սենեակի զանազան կողմերը
նետուող առարկաների ձայնը, մի փափուկ բան էլ,
երեւ մի բարձ. զիազաւ իմ դրանը, որ խուլ թիվոց
հանեց, յետոյ մէկը դուքս եկաւ սենեակից, և քիչ
յետոյ դուռս կամացուկ թակեցին:

— Ներս մտէք:

Շեմքի վրայ յայտնուեց հիւանդ աղջկայ մայրը
անհամարձակ, ամօթահար ու ընկծուած:

— Ներեցէ՞ք, պարոն, առաջին օրն է, որ
մինք այստեղ ենք, և արգէն քսնի անդամ՝ ձեզ ան-
հանգիստ արի. Կլարան խնդրեց ձեզ բարի գիշեր
մաղթել:

Ես հասկացայ, դարձեալ մի տարօրինակ քմա-
հանդիք:

— Բարի գիշեր օրիորդին, ասացի բարձրածայն՝
հարեան սենեակում լսելի լինելու համար:

— Շնորհակալ եմ, պարոն, որքան բարի էք,
ասաց խեղձ կինը ու հեռացաւ:

Հարեան սենեակում կրկին խաղաղոթիւն տի-
րեց, ես հազիւ լսում էի հանուող զզեսաների
խշոշողը. անկողների թեթեւ ձռնողը, քիչ յետոյ այն
էլ դադարեց, և շուրջո իշխեց խորին լուռթիւն:

Հարեանուհիներս երեւ քննեցին, իսկ ես երկար
ժամանակ գեռ քնել չկարողացայ: Որսեցից յայտ-
նուեցին այս կանայք, որոնք իմ կեանքի խաղաղ,
երջանիկ ընթացքն այսպէս անակնկալ և տարօրի-
նակ ձեռով խանգարեցին: Եւ եթէ այսուհետեւ էլ
շարունակուի, կարո՞ղ եմ մնալ այստեղ թէ ոչ: Այս
մտքերը պաշտել էին իմ գլուխը. համարեա տան-
ջում էին ինձ: Հեռանալն անշուշտ ինձ համար
դժուար չէր. բայց ես չէի կամենում վշտացնել իմ

ինդզ, իմ բարի տանտիկնոջը, նա այնքան էր սպա-
սել, մինչև երկաւ սենեակներն էլ վարձուէին,
այսպէս երջանիկ էր երեք պանսիօնէր ունենալով,
և այժմ ես ամեն ինչ պէտք է տակնուվրայ անէի:
Եւ յետոյ այդպիսի վիրաւորանք ի՞նչպէս հասցնել
լիոներն ապաստանած այս կանանց, մանաւանդ
երան—կլարային: Հիւանդներն ու անկարները ուր
և լինին, իրանց գերադոյն իրաւունքներն ունին,
որոնց զիազէլլը յանցանք է: Ուշ գիշեր էք, երբ ես էլ
քննեցի՝ թողնելով իմ որոշումը պատահականութիւն-
ներին: Փորձով զիտէի, որ շատ անդամ ամենա-
սովորական, ամենաամնչան զիազուածք աւելի է ա-
նում մի խոշոր, կենսական խնդիր լուծերս համար,
քան բազմաթիւ խելացի մաքեր ու մշակուած
ծրագրներ:

Անցան մի քանի օրեր. ես վերսկսեցի իմ սովո-
րական կեանքը. ամեն առաւու վաղ ճանապարհ
էի ընկնում դէպի հեռաւոր լեռներն ու խրձիթները
և երեկոյեան վերագանում լաւ աշխատելուց ու
շրջապայելուց յետոյ: Տարրերութիւնն այն էր միայն,
որ գիշերները հովիւների խողերում չէի անցկա-
ցնում և իւրաքանչիւր օր որոշ ժամին տուն էի
վերագանում: Կեանքիս մէջ առաջ եկած այդ
փոքրիկ փոփոխութիւնը ես չէի էլ նկատում, ինձ
թւում էր, թէ ես ապրում եմ բոլորովին առաջուայ
պէս, որ կլարան ու իր մայրը մազի չափ անդամ
չին ազդել իմ ամարային տալորութիւնների վրայ,
և սաստիկ զարմացայ, երբ տանտիկինս մի օր ասաց:

— Ի՞նչ լաւ է, որ ամեն երեկոյ տուն գառնում:

Իրաւունք ունէր. գա մի ձշմարտութիւն էր, որ
ես չէի զիտակցում, այժմ ստիպուած էի ինքս ինձ

խոստավանել, որ այդ փոքրիկ փոփոխութիւնն անխորհուրդ չէր, որ ես վերադառնում եմ յատկապէս իմ հարեանուհիների համար, որոնց ամեն երեկոյ ես պատահում էի հէնց նոյն ծառուղիի մէջ, մօտառը բազէս նոյն տեղում, որ տեղի ունեցաւ մեր առաջին համշխառումը։ Առաջուայ պէս Կլարան վարդագոյն զգեստ և հովանոց ունէր, առաջուայ պէս նու քայլում էր՝ սղմուած մօր կողքին ինչպէս մի վախւլուկ այծեամ, զարձեալ ինձ տեսնելիս շտապում էր հովանոցով ծածկել դէմքը, բայց էլ չէր փախչում հակառակ կողմը թագնուելու համար։ Որքան և անախորժ լինէր այդ, ես մօտենում էի, լարեւում և շտապով անցնում՝ չտեսնելու տալով անհաճոյ տեսարանը։ Կարող էի վերադարձիս ձանապարհը կամ ժամը փոխել բայց չփառեմ ինչո՞ւ, չի մտածում այդ մասեն, և ինձ թւում էր, թէ նոյնիսկ պիտի վշտանամ, եթէ մի երեկոյ հարեանուհիներիս միենոյն տեղում շպատահեմ։ Հոգեկան մի վիճակ էր, որ խուսափում էր գլխիս տրամաբանութիւնից։

Եւ ամեն երեկոյ ընթրիքի ժամանակ տանտիկինս պատմում էր ինձ հազարումի անօրինակ մանրամասնութիւններ իր կենողների՝ մանաւանդ Կլարայի կեանքից։

— Գիահէք, պա՛րմն, շարունակ ձեր մասին է հարցնում։ Երէկ սաստիկ ազաշում էր, որ ցոյց տանք ձեր նկարները, երեկոները մօրն ստիպում է գուրս գալ զբանաքի յատկապէս այն ձանապարհի վրայ, որտեղից գուռք գալիս էք։

Հնմթրիքից յետոյ ես լսութեամբ բարձրանում էի սենեեկս, ձգուում զիււանի վրայ խաւարի մէջ և աչքս յառում կողպէքի ծակից ինձ մօտ ներս թա-

փանցող լոյսի շողին, որ խաղում էր միկնոյն տեղում։ Իւրաքանչիւր երեկոյ մի բուռն ցանկութիւն, մի կիզիչ տեհն էր զարթնում սրտումս, որ ինձ մղում էր դէպի դուռը։ ստիպուած էի մեծ ճիգեր գործ դնել վրաս այն փոքրիկ անցքին չմօտենալու, հարեանուհիներիս չնայելու համար։ Ի սրտէ կ'ուզէի, որ նրանք ինքնարերաքար, կանացի այն զգուշութեամբ որ, այնքան շրջանկատ է, երբ պէտք է տղամարդի անհամեստ աչքից թագնուել, փակէին այդ անցքը թղթի մի կտորով և վերջ տապին իմ ներքին կոխին։ Բայց նրանք այդ մասին երեկի չէին էլ մտածում, և Կլարային գողունի կերպով տեսնելու տեսչը ինձնում չէր մարտում։ Շատ անգամ ինքս ինձ հարց էի տալիս, թէ ինչո՞ւ եմ ցանկանում անպատճառ դիտել այդ կանանց և այն էլ այսպէս, գաղտապողի, ինչո՞ւ համար այդ փոքրիկ անցքը դարձել էր ինձ համար մի խորհրդաւոր աչք, որ ամեն երեկոյ ասես թարթում, հրաւիրում է ինձ։ Պատասխան չէի գտնում, և՛ զայրանում էի, և՛ վշտանում։ Եւ ամեն երեկոյ մտքերիս թելը կտրում էր Կլարայի մալրը, որ միշտ միենոյն ժամին զալիս էր, կանգ առնում դրանս առաջ ու կանչում բարձրաձայն։

— Պարո՞ն, Կլարան ինդրեց ձեղ բարի գիշեր մաղթել։

Ես պատասխանում էի միկնոյն ձեռվ։ Հարեանուհիներս անմիջապէս քնում էին խաղաղ, խկեն երկար աչք փակել չէի կարողանում։ Ստիպուած գուրս էի զնում, մենմենակ թափառում ամայի ձանապարհներով կամ գիշերային անհանգիստ ոգուպէս նստում գետափին և ականջ դնում նրա միա-

կերալ շառաչին : Խաղաղ զիշերը, աստղագարդ երկինքը, անորոշ ու խուլ փափացով նիրհող լինամին թնութիւնը, այս բոլորը, բոլոր փախանակ հանգստացնելու ինձ էլ առելի նպաստում էին իմ ժոայլ արամագրութեանը, ծանր, խեղգոզ, անորոշ մտքեր պաշարում էին իմ զլուխը : Ինձ թւում էր, թէ ես մի անդանալի կորուստ եմ ունեցել, որ մէկն ինձ անողորմ ձեռվ խարել է, դաւաճանել է, խլել է ինձանից մի շատ թանկացին բան, որ ես էլ երբէք, երբէք երջանիկ լինել չեմ կարող, որ իմ կեանքը վերջանականալիս փշրուած է, և ես կորած մարդ եմ : Դա մի անորոշ, անհասկանալի սուր էր, որ կատարուում էր իմ հոգու խորքում, աշխարհից ծածուկ և նոյնիսկ ինձ անհասկանալի :

Երբեմն ինձ թւում էր, թէ ես լալիս եմ մեծ բնութեան հսկայ ցաւը, որ՝ ո՞վ զիտէ ինչո՞ւ՝ յանկարծ բուն է զբել իմ խեղճ սրտում : Մատածում էի, թէ երեխ բոլոր բանական արարածներին յատուկ է մի այլպիսի ներքին կացութիւն, երբ մարդ առանց համականալու պատճառը՝ լուս լալիս է՛, գուցէ տիեզերքի ցաւից, նրա յարաւու երկունքից մի բաժին կայ մարդկացին հոգու մէջ, և անհատը իբրև գերազոյն պարտք՝ երբեմն պարտական է սպալ մօր հետ :

Սնցաւ այսպէս դարձեալ մի շաբաթ : Հեռանաւու մասին այլիս չէի մուծում : Հարեան մենեալից համարեա ամեն օր լսուող աղաղակները, կլարավի խենթ քմահաճոյքները ինձ չէին վրդովում, ես կարծես սովորել էի այդ բոլորին : Մի քանի անդամ նոյնիսկ ամրող օրը տանը մնացի, ինձ թւում էր, թէ սաստիկ յոդնած եմ լիւների շրջագայութիւնից և լուսամուտիս առաջ նստած՝ ես անհամբերութեամբ

սպասում էի հարեանուհիներիս գուրս գալոն : սիրոս արովում էր, երբ տեսնում էի կլարացին, նրա ուկէզոյն մազերը, նրա զարմանալի քիթն ու ձակաւոր, նրա կարասացին պարանոցը, անսման հասակը : Նայում էի սիրով ու երկար, մի տեսակ ախորժելի, հեշտալիք զգացմունքով . կանացիութեամբ, հմացքով հարուստ այդ պատկերից մի աներեսոյթ բան բարձրամում էր վեր և պարուրում իմ էտթիւնը, չշմեցնում ինձ, ինչպէս այն ժամանակ, երբ ես ծաղկաշատ բլրի լանջին փուռած՝ հեռում էի երջանկութեամբ, արքեցած ծաղկիների անուշանուա բարձրամունքով : Բայց հէնց որ այդ գեղեցիկ դէմքի վրայ փայլում էր ինձ ծանօթ անմիտ ժպիար, հէնց որ նրա քթի երկու կողմներում կազմնում էին այն սպանիչ զծերը, աչքերի մէջ կարծես մեռնում էր իմացականութեան յետին մնացորդը, ես վշտով երեսս դարձնում էի նրանից, ծանօթ թախիծը պաշարում էր իմ հոգին, կուրծքս ճնշում էր անծանօթ զգացմունքի ծանրութեան տակ, և քիչ էր մնում բարձրածայն հեկեկալի :

Անտանելի էր, այսպէս չարունակել անկարելի էր : Կամաց—կամաց ես կորցնում էի իմ հանգիստը, աշխատելու արամագրութիւնն ու խանզը, նոյնիսկ առողջութիւնս : Տանափիկնս մի մօր քնքշոյն հոգատարութեամբ առաջինն այդ նկատեց .

— Հիւանդ չէք :

Այո՛, ես հիւանդ էի և չդիտէի ինչից, ինձ հետ մի վտանգաւոր բան էր կատարուում, մի աւերիչ զկացմունք կամաց—կամաց քանդում էր իմ սիրով ինչպէտ կրծող որթ, և ես օր—աւուր խամրում, մաս մաս մեռնում է հիւանդ բոյսի պէս :

ՎՃռեցի այլևս չապահել պատահականութեան և շուտով ձգել, հեռանալ այս պանսիօնից, ինչ և լինի :

Այն օրն ամբողջ ես թափառել էի լեռներում ու անտառներում, լսել էի իմ սիրած գետակի շառաչը և հնչել էի մարդագետինների բուրմանքը : Տաճն էի վերադառնում երեխյեան այնքան նշանակալից դարձած ծառուղիով ու մտածում էի, թէ ուր որ է, կը տեսնեմ իմ խաղաղ զոյութիւնն այսպէս աղմկող կանացի զոյգը : Ճանապարհը դատարկ էր, նրանք չկային : Ես զարմացած մնացի, այնքան օրերից յետոյ՝ առաջին անգամն էր պատահում այդ : Տարօրինակ էր, բայց ես ցաւեցի, որ նրանք դուրս չեն եկել . ինձ նոյնիսկ վիրաւորական թւաց նրանց բացակայութիւնը, կարծես մենք լուսթեամբ խօսք էինք տուել իրար միշտ պատահել այս ճանապարհն, և այսօր նրանք դրժում էին իրանց խօսքը :

Մի փոքրիկ աղջիկ յայտնուեց, որ պարանով քաշ էր տափս յետեւից մի վտիտ այծ . կենդանին չէր հնազանդւում և անդադար նետում էր աջ ու ձախ՝ ճանապարհի եղբերի խոտը ճարակելու համար . աղջիկը չարչարում էր, նա տիսուր էր, ես նայեցի ու անցայ . ինձ զրաղեցնում էր միայն մի հարց, թէ ինչո՞ւ ծանօթ զոյգը չկայ այսօր : Յետոյ ինքս ինձ վրայ զայրացայ, որ ես կարող եմ միանգամայն անտարերութեամբ անցնել այս փոքրիկ աղջկայ առաջից, որ այնպէս վշտացած էր և այնպէս կարու օգնութեան, և մտածել միայն այն կանանց

մասին : Ես միշտ հաւատացած էի, թէ լուրջ բարեխիղձ մարդ եմ, կեանքի իրերի մէջ երկրորդականն ու առաջնակարգը զատել գիտեմ, այժմ տեսնում էի, ու այդ էլ ճիշտ չէ, զրափ աշխարհի երեւոյթների կարեսութիւնը միանգամայն յարաբերական էր իմ հսկ այս կամ այն տրամադրութեամնը : Որքան զժուարութեամբ է մարդ ճանաչում ինքն իրան, և ինչպէս յաճախ նա անկեղծօրէն վերաբրում է իր անձին յատկութիւններ, որոնցից միանգամայն զորկ է, և հերքում է ուրիշները, որոնք իր հսկուիսկան պատկերն են կազմում : Դարձեալ այդ ահաւոր լուսիք նոր, մտածում էի ես, նա' է, որ անգամ մեզանից ծածկում է մեր սեփական կարողաթիւնները :

Հեռուում տան զրան առաջ նկատեցի տանտիկութը, մշեցի որ այս երեկոյ նրան հաղորդելու եմ յաջորդ օրը մեկնելու իմ վճռական սորչումը . նա ընդուածեց ինձ, ինչպէս այն առաջին երեկոն, երբ եկել էին իր նոր պանսիօններները :

— Է՛, սիրելի՝ նկարիչ, առաց նա, տանաիկնը մեկնեց շատպով, և խնդրեց մնաս բարով ասել ձեզ :

— Մա՞յրը :

— Այո՛, նա ինքը, ուրիշ ո՞վ :

— Իսկ կյարա՞ն :

— Նա այստեղ է :

— Մենա՞կ :

— Ո՞չ, ի՞նչպէս կարելի է խեղձին մենակ ձգել . նրան այսուհետեւ քսյրն է խնամելու, որ քիչ առաջ եկաւ : Զահիլ, սիրուն այրի է, այնքան սիրուն է, այսպէս նման քրաջը, այնպէս նման, որ կարելի է շփոթել . անունն էլ իմացայ Մարգարիտ, ես սիրում եմ այդ անունը :

Նա էլի շատ բան պիտի պատմէր, անշուշտ վերջիվերջոյ աւելացնելու էր, թէ ինքը տարիներ առաջ ձանաչում էր այդ անունով մի սիրուն այրի, բայց ես առաջ անցայ, մտախոհ ու լուս բարձրացայ սենեակս։ Մէկը գնացել է, միւսը նրան փոխանակել։ Մարդիկ են իրանց համար ապրում են, իրանց ցաւերն ու հոգսերն ունին, իրանց ուրոյն ձակասագիրը, որ իմի հետ ոչ մի կապ չունի անշուշտ, ինչպէս այն փոքրիկ աղջիկը, որ քաշ էր տալիս յետելից իր վտիտ այծը։ Եւ այնուամենայնիւ այդ երեկոյ ես չկարողացայ տանտիկնոջս յայտնել իմ մեկնելու որոշումը։ Վարժունքս ինձ տարօրինակ էր թւում։ Բացարձակ անհատականութիւնը՝ մտածում էի ես, երեկ մի անհիմն, անտրամարան հասկացողութիւն է, մի անկարելիութիւն այս մեր ողբալի աշխարհում։ Կեանքը իր ամենապարզ արտայայտութիւններով անգամ խճողուած բախտերի մի ցանց է, ուր մէկի ուրոյն, ըստ երեսթին միանգամայն անկախ շարժումը՝ միւսի համար մի անակնկալ ու վճռական դիպուած է։ Տիեզերքում ոչինչ և ո՛չ ոք բացառապէս իր համար չի շարժում, ինչպէս որ ծովի ոչ մի օղակ չի կազմում առանց բիւրաւոր որիշ ալիքներ հրճրելու։

Ինչո՞ւ տանտիկնոջս չը յայտնեցի վաղը մեկնելու իմ որոշումը։ Պատասխանի փոխարէն լիշեցի նրա խօսքերը՝ « ջահիլ, սիրուն այրի է, քրոջը նման »։ Վերջին երկու խօսքերը մեխի պէս ցցուեցին գլխումս։ « Քրոջը նման... ինձ չափազանց ենտաքքիր էր թւում իմանալ, թէ որքան ձշաբիտ է այդ։ Ես, որ մի կէս ժամ առաջ այդ անծանօթ կնոջ գոյութիւնն անգամ չփոտէի, այժմ ամբողջապէս։

տարուած էի նրանով և այրուում էի նրան տեսնելու ցանկութեամբ։ Ի՞նչ է կատարուում լուսթեան մէջ, որ մեզանից այսպէս խուսափում է և յայտնուում, երբ ինքն է կամենում։ միթէ մեր բախտերի տէրը միշտ լուսթիւնն է և ո՛չ խօսքը։

Սենեակումս քայլում էի յետ ու առաջ և ամեն անգամ հարեանուհիներիս ինձնից բաժանող դրանը համելով՝ դարձեալ մի անյաղթելի պահանջ էի զգում աչքս դնել այն փոքրիկ անցքին։ Միւս կողմում այժմ մի անծանօթ կին կար, ջահիլ ու սիրուն, գայթակղութիւնը զօրեղ էր, նախկին կիզիչ տեհնչը իր բոլոր ուժգնութեամբ զարթեց սրառում։ Նոյն յանցաւոր թուլութիւնը չը կրկնելու համար՝ դադարեցի քայլելոց, կանգ առայ լուսամուտիս առաջ և նայում էի հեռաւոր հօրիզոնին։ Լեռնակատարների վրայ վերջալոյսի յետին շողերը կամաց—կամաց մեռնում էին, ստուերները մեզմով կախում էին երկնքից, և անստառները հազիւ էին սեին տալիս՝ լեռնալանջերի վրայ փոռուած։ Քիչ յետոյ խրճիթները հեռաւոր դաշտավայրի վրայ լուծուեցին ու շքացան իջնող գիշերուայ մէջ, իսկ նրանց տեղ սկսեցին պլազմալ հատ—հատ ձրագներ, որպէս լուսթեան և խաւարի թարթող աչքեր։ Ինչքան շատ բան է անում լուսոյ մի հատիկ շողը։ Ինձ թւում էր, թէ ես տեսնում եմ այն խաղաղ տնակների ներսը, ուր օրուայ աշխատանքից յետոյ գեղջուկ կեանքը խորհում էր։ Ծնորհիւ մի հատիկ շողի լուսթիւնը խօսում էր և խաւարը տեսնում, և երբ կը մարի ձրագը, կեանքը կը նիրհի անդորր ու երջանիկ՝ երազելով նոր օրերի, նոր աշխատանքի մասին, և այսպէս անվերջ...

Մի փոքրիկ մըրխկոց ընդհատեց իմ խոհերը, յետ նայեցի, սենեակում արդէն իշխում էր խաւարը, և զրան ձեղքից ներս թափանցած փոքրիս շողը կրկին խաղում էր պահարանիս վրայ։ Սիրտկ մեղմիւ թրթռաց։

Դա էլ լոռութեան աչքն էր, այդ փոքրիկ ցոլքը, այդ խզճուկ, մոլորուած շողը, որ գալիս էր միւս սենեակից որոշ մասին, լուս ու գաղտադոզի, ինչպէս սպասուած սիրահարը և խօսում էր իմ սրտին։ Իմ և հարեւանուհներիս մէջ նա զարձել էր մի աննիւթ կապ՝ հիւսուած զիւթական երազներից։ Այդ շողը . . . նա կարծես եկել էր ինձ կանչելու, եկել էր փափալու իմ ականջին մի բան, որ միայն ես կարող էի հասկանալ և ուրիշ ոչ ոք աշխարհում։ Դիմանալ անկարող էի, այն տենդուտ, խենթ չարժումով, որ յատուկ է անդառանալի, յանդուգն վճիռներին, ես մօտեցայ գրանը, կուրծքս սղմեցի երկու ձեռքով սրտիս ուժգին զարկը խեղդելու և բոցոտ հեքս մեղմելու համար ու նայեցի . . . անօրինակ յուզմունքից ճակատս գրանը դիպաւ, խուլ թըրխկոց բարձրացաւ, բայց ես չհեռացայ, այն ինչ որ անսայ, ասես ինձ քարցեց, մեխւեց իմ տեղում։ Մարգարիաը քրոջ հետ թեանցուկ՝ գնում—գալիս էր սենեակի երկարութեամբ և մօր քնքութեամբ գուրգուրում, փայփայում էր նրան։ Ամեն անդամ, երբ նրանք շուռ էին գալիս և քայլում դէպի ինձ, ես բերանարաց, հեալով նայում էի կանացի այդ երկու գեղանի պատկերներին, որոնք այնքան նման էին իրար, որքան կարող են լինել երկուորեակները։ Նոյն ոսկեփայլ հարուստ մազերը, նոյն ճակատը՝ լայն ու

բարձր, նոյն վարդագոյն շրթունքները, որոնք կարծես միայն համբոյրի համար են, և մանաւանդ նոյն աչքերը խոչոր ու գեղեցիկ, որոնց վրայ երկար թերթունքները իջնում էին զգուշութեամբ, ասես ափսոսալով, որ մի վայրկեան ծածկում են նրանց հմայիչ փայլը։ Տանտիկինս իրաւունք ունէր, երկու քոլրերի նմանութիւնն ապշեցուցիչ էր, տարբերութիւնը միայն այն էր, որ Մարգարիտի հայեացքի մէջ կանացի քնքութեան հետ միաժամանակ փայլում էր իմացականութեան վսեմ կրակը, և նրա սքանչելի դէմքի վրայ գեղեցկութեան ներզահնակութիւնը կատարեալ էր ինչպէս գարսանային մի լուսազարդ առաւօտ, և նրա հոգին վառում էր իր հմայիչ աչքերի մէջ։ Դա կին չէր, այլ ընութեան մի սքանչելի խաղ, նրա ուրախ վայրկեանի մի երջանիկ, հազոււագիւտ ծնունդ։ Հոյակապ ու բարեձե այդ երկու կանացի իրանները ասես իրար պլլուած երկու սիրուն կազնիներ լինէին, որոնք չգիտես ինչու՝ թափ առած շարժուում էին միասին։ տեսարանն այնքան գեղեցիկ էր, որ ես ծեփուած կը մնալի գրանը, հեալով, գողդողալով կը նայէի անվերջ, եթէ ոչ ոք և ոչինչ ինձ շխանգարէր։ Եւ որքան ժամանակ մնացի այդպէս չգիտեմ, գլուխս պտտում էր, ծնկներս զողդողում էին, ես կարծես մեղմիւ մարում, մեռնում էի երազանքի աշխարհում և սթափուեցի միայն այն ժամանակ, երբ մէկը գուռս կամացուկ ծեծեց։ Տանտիկինս էր։

— Ընթրիքի ժամն է՝ ի՞նչ է պատահել, այսօր ցած էլ չէք գալիս։ ճրագ էլ չունի, Տէ՛ր Աստուած, ախ այդ նկարիչնիրը, ամեն բանում ապրօբինակ են։

Երաւունք ունէր . շտապով դուրս ընկայ սենեակիցս և յանցանքի մէջ բանուած երեխայի պէս լոռթեամբ հետեւեցի նրան :

Ես չիմացայ՝ ինչպէս ընթրեցի և շտապով կրկին վերեւ բարձրացայ : Այսքան բան ունէր մտածելու : Եւ յետոյ սենեակս , այն դուռը , այն փոքրիկ շողը՝ բոլորը միասին քաշում էիո ինձ : Ներս մտայ , փոքրիկ շողն այլեւս չկար , նա անյայտացել էր , ինչպէս մի թռչուն : Դրան ծակը միւս կողմից խցուած էր : Կանգ առայ խաւարի մէջ առժամանակ՝ հայեածքս դրանը յառած , ապա անյոյս ու վշտացած նստեցի գիւանի վրայ : Ինքս էի առաջ ցանկանում , որ ինձ գալթակղեցնող այդ փոքրիկ անցքը փակուէր , և այժմ դժոն էի , որ այդ կատարուել է : Հաւատացած էի , որ Մարդարտի գործն էր , և այդ աւելի էր վշտացնում ինձ : Մի՞թէ իմացաւ , որ ես նայում էի գաղտագողի կերպով , թէ՞ հէնց այնպէս , իրրեւ փորձուած կին ինքնարերաբար , իր սեօին յատուկ ընազդով որ եւ է անհամեստութեան հնարաւորութիւնն է խափանել : Այսպէս թէ այնպէս այդ նրա գործն էր և ես ի սրտէ ցաւեցի . կարծես մի ձեռք կրծքիս հարուածեց ու յետ մղեց ինձ , երբ ես այնպէս մօտ էի իմ երջանկութեանը :

Մի բան սակայն հաստատ էր . ես թէև այլեւս դաղտագողի նայել չէի կարող , բայց Մարդարտի պատկերն այժմ իմ սենեակումն էր այն շողի պէս և խաղում էր իմ աչքի առաջ , իմ երեւակայութեան հետ : Եւ ինձ թւում էր , որ վաղուց է , ինչ ես ծանօթ եմ այդ պատկերին , վաղուց է , որ ես նրան գուրգուրում եմ հոգուս խորքում իմ նրա

հետ անզիտակցաբար , լոռթեամբ : Լեռներում ու ձորերում մինակ թափառելիս որքան անզամ ես աշխատում էի բոնել , փարփայել բնութեան երազը կենդանի ու գեղեցիկ . այժմ այդ երազն է ապրում հարեւան սենեակում , և վշտանում էի , որ այնտեղից ինձ մօտ թափանցող խորհրդաւոր շողը խաւարեց :

Ճարս կտրած՝ դուրս եկայ սենեակիցս և գնացի թափառելու խաւար դաշտերում , ուր նոյնպէս մարել էին բոլոր լոյսերը , լուսթեան պլազան աչքերը : Ոչինչ չէր խանգարում ինձ , և մոքերս դառնում էին զլխումս անօրինակ ուժգնութեամբ : Իմ սրտում սկսուած հին փոթորիկը , բոցոտ յոյսերի շփոթը — անսրոշ ու անհասկանալի՝ այժմ պատկեր ու նշանակութիւն էր ստանում : Ընդհատումն չկար . մի օր հոգուս խորքում մի զգացմունք էր ծնել , աճել էր զանգաղոթեամբ և այժմ կարծես այլեւս պարտակել չէի կարողանում , այն սատիճան նա ըռւռն էր ու խորոնի : Որչափ և տարօրինակ լինէր այդ . բայց պարզ էր , որ երկու քոյրերը փոխառփոխ բորբոքել էին իմ սրտի կրակը , որ այժմ հրդեհում էր ինձ : Զգացի , որ այսպէս հեռանալ չեմ կարող , և որ լուսթեան ու խաւարի մէջ իմ ներքին աշխարհում կատարուել է մի անդանալի բան :

Տուն դարձայ մտախոն , հարեւան սենեակում գեռ ձայն ու խօսակցութիւն կար : Կլարան դարձեալ մի բան էր պահանջում , քոյրը նախ փորձեց համոզել , մեղմացնել , և երբ այդ անկարելի եղաւ , դուրս գնաց : Քիչ յետոյ դրանս մօտից տանտիկնոջս ձայնը լսեցի :

— Պարոն, օրիորդ Կլարան ձեզ բարի գիշեր է
մաղթում:

— Բարի գիշեր օրիորդ Կլարային:

Հասկանալի էր Մարգարիտը քրոջ անօրինակ
քմահաճոյքը կատարելու համար ստիպուած էր և
զել զիմել տանտիկնոցս օգնութեանը՝ անձանօժ
պարսնին անձամբ անհանդիսա չանելու համար:

Երբ հարեւան սենեակում ամէն ինչ դադա-
րեց, ես էլ անկողին մտայ, բայց երկար ժամա-
նակ անքուն էի, աւշադրութեամբ լսում էի զբան
միւս կողմում քնած կանանց չնչառութիւնը և աշ-
խառում էի որոշել, թէ ո՞րը որին է, կամ աւելի
ծիշո՞ ևս ուզում էի լսել միայն Մարգարիտ հեռքը:
Ապա սկսեցի մտածել, որ բոլոր իմ արածը երե-
խայութիւն, անմտաթիւն է, որ ծրծագելի է այս-
պէս զբաղուել մի կնոջով, որ իմ երեսն էլ չի տե-
սել, և որին ես զիտել եմ միայն մի անդամ, այն
էլ գաղտագողի: Բայց իսկոն լիշեցի, որ նրանից
առաջ քայլը կար իր այն հմայիչ արտաքինով, որին
պահառում էր միայն իմացական կրակը ինձ լուրու-
զին յափշտակելու համար: Ահա այժմ այդ կրակը,
ահա նոյն Կլարան կերպարանափոխուած ու կա-
տարեալ և իր հոգու խախտուած ներդաշնակու-
թիւնը կարծես հրաշքով վերականգնած Մարգարիտ
մէջ: Առաջինից ես համարձակ կարող էի փախել,
նա վտանգաւոր չէր, բայց այս երկրորդը, այս
աննոման Մարգարիտը իսկեխոկ մի սիմքս էր իմ
ձանապարհի վրայ, և նրա առեղծուածներն իրանց
խորհրդաւորութեամբ ինձ աղմում էին ինչպէս եր-
կաթէ օղակներ: Ինքնախարէւութիւնն անօգուտ
էր, զգացի, որ չեմ էլ փորձում ազատուել եւ
նոյնիսկ ինքս եմ նետում գէպի նա, ինչպէս

թիթեռնիկը գէպի բոցը: ես նման էի լեռնակա-
տարից պոկուած ժայռին, որ արագութեամբ
ներքիւ է զլորւում եւ յայտնի չէ թէ որ կը
հանգչի:

V

Օգոստոսի սկիզբն էր, մի սիրում առաւօտ:
Վճռել էի ամբողջ օրը տանից չեռանալ. ինչո՞ւ,
չէի կարող ասել, զոցէ մի պարզ քմահաճոյք էր՝
արդիւնք իմ ներվալին զրութեան կամ զոցէ մի
ներքին պատճառ կար, որ ինձանից էլ զաղոսնի
էր: Մարդ յանախի իր սեփական վարմունքի զրբ-
զիչները հեշտութեամբ գտնել չի կարողանում:
Տրամադրութիւնն սկզբում վատ էր. յետոյ չափա-
զանց ուրախացայ, որովհետեւ տանափեխնս հաղոր-
դեց, թէ Մարգարիտը կարող է մոզ սեղանակից
լինել ձաշին, եթէ մենք սովորականից ուշ ձա-
շինք, մինչեւ նա կարողանայ քրոջը կերակրել:

— Ելեղծ կինը սասափիկ ձանձրանում է, առ
և լացրեց տանափեխնս, մեզ հետ գոնէ եր խօսի,
սիրու կը բացուի: Քոյլը ձաշից յետոյ պառկում է
հանգստանալու, այն ժամանակ նա կարող է ցած
դալ:

Այս նորութիւնն ինձ այնպէս ուրախացրեց, որ
ես լիմարացած բացականչեցի՝ «Հնորհակալ եմ»:
Տանտիկինս զարմացած նայեց ինձ, ինքո էլ չփոթ-
ւեցի ու կարգամուեցի: Ինչի՞ համար էի չնորհա-
կալ և ո՞ւմը... Զգիտեմ, բայց ես այնպէս երջա-
նիկ էի, որ վերջապէս մօտիկից պիտի կարողա-

նում աեսնել այն սքանչելի գեղեցկութիւնը, խօսել նրա հետ, իմանալ վերջապէս՝ ով է նա, եւ ինչու է այստեղ, պարզել մանաւանդ՝ թէ ներքին կապ կայ իմ և նրա բախտի մէջ:

Համբերութիւն չկար, ժամանակից շատ առաջ ցած իջայ սեղանատուն, բայց ինչ անելու չփափէի: Նստել չկարողացայ, սկսեցի քայլել մի պատից միւսը: Մօտեցայ հայերուն մաղերա յարդարելու համար և սարսափով նկատեցի, որ շփոթութեան մէջ մոռացել եմ փողպատս կապել: Շտապով դուրս փախայ սեղանատնից, սենեակս բարձրացայ, կարգի ձգեցի զգեստս, կրկն յետ եկայ: Դարձեալ մինակ էի, դարձեալ քայլել սկսեցի, հայելու մէջ նայեցի, մաղերս յետ ձգեցի ու շտկեցի, սիրուն էի, գոհ մնացի, որ այդպէս է: Տանտիկինը գեռ աշխատում էր խոհանոցում: Դրան առաջ լսուեց կանացի զգեստի թեթեւ շրջիւն: Եւ յետ նայեցի յուզմունքով... նա էր: Մարգարիտը, որ մտաւ ու կանգ առաւ շուարած: Մենք նայում էինք իրար լուսաթեամբ. դա մի վայրկեան էր, որ ինձ շատ երկար թւաց, ուղեցի մի բան ասել, բայց չկարողացայ և զարմացած էի, որ այդ կինն այդպէս շփոթում է ինձ: Լոռութիւնն ընդհատեց նա:

— Ներեցէ՞ք, պարոն, ես կարծում էի, թէ տանտիկինն այստեղ է... ձեր մասին նա ինձ շատ է պատմել, մենք համարեա ծանօթներ ենք, մեզ ներկայացնող չկայ, անհրաժեշտ պարտքը մենք ինքներս կատարենք:

Նա շնորհալի ձեռով ձեռքը մեկնեց, որ ես բարեցի հազիւ զսպուած յուզմունքով և մի անշնորհ շարժումով զիսայ աթոռին, որ քիչ մնաց

ընկնի: Մարգարիտը անուշադրութեան տուեց այդ բոլորը, համդարտ մօտեցաւ լուսամուտին և նայում էր գուրաը: Սեւ զգեստի մէջ նրա գեղեցիկ, հոյակապ մարմնի ձեւերը իրանց բոլոր կատարելու թեամբ ծրագրում էին ակնապարար կերպով: Այդ ընդհանուր սեւութեան վրայ էլ աւելի զրաւիչ էր նրա դէմքի քնքոյց սպիակութիւնը և հարուստ մազերի ոսկեգոյն փայլը: Զգա՞ց արդեօք որ նայում եմ նրան յափշտակուած, չփառեմ, միայն յետ դարձաւ, անհոգ կերպով ասաց:

— Հրաշալի վայրում էք ապրում, հրաշալի: մի զիշեր եմ անցկացրել այստեղ և այնպէս լսուեմ զգում ինձ այնպէս լսու:

— Ես շատ ուրախ եմ, տիկին... այո՛, այստեղ շատ զեղեցիկ է, կազդուրիչ, մեզմ օդ... յուսամ՝ չէք ձանձրանայ, զրօսանքներ կատարելու շաա յարմար անկիւններ կան, և ես...

Ուզում էի յիմարաբար ասել, թէ ես պատրաստ եմ ձեզ ծառայելու, բայց զգացի, որ շատախօսում եմ, ոտքովս թեթեւ ազմուկ հանեցի ու լուեցի: Հաւատացած եմ սակայն, որ նա լսեց ինձ և հասկացաւ դրութիւնս. ինքը բնաւ չէր շփոթում, ես էի երեխայ զարձել մինչեւ այն աստիճան, որ վախենում էի շարունակել խօսակցութիւնը, զգաւմ էի, որ անպատճառ յիմարութիւն կ'աւաեմ: Մարգարիտը յետ եկաւ մինչև սեղանը, յետեւից ձեռներով յինուեց նրան, աջ ոտքի թաթը յատակի վրայ խաղացնելով, ինչպէս անում են մտախոն կամ երազող մարդիկ. զեղեցիկ աչքերը լուսամուտից դէպի հեռուն յառած՝ նայում էր լուսաթեամբ:

— Ես ինչպէս նախանձում եմ ձեզ, մրմնջաց նա կամացուկ. — զուք կարող էք գնալ հեռու, հեռու, այս այն լեռներն ու ձորերը, որոնք կարծես հեռում են մշտի մէջ :

— Այս, այսակ շատ գեղեցիկ է, զուք էլ հեշտոթեամբ կարող էք վայելի լիոնացին բնութիւնը, այդ ամենեւին դժուար չէ :

— Բայց քոյլս կամ, ես նրան մենակ ձգել չեմ կարող, նու այնպէս հեռու չի գնայ, այսինքն չի կարող գնալ :

Նա մի փարք լսեց՝ միշտ աչքերը հեռուն աղղած, ապա յանկարծ աւելցրենց՝ առանց ինձ նայելու :

— Այնպէս չէ, բարձր լեռներն ու մթին անտառները սարսափելի են գիշերով. զուք զգացել էք այդ տարսափր :

— Սարսափելի՞ . . . ո՛չ, միայն խորհրդաւոր են ու ճնշող :

— Զգիտեմ, ինձ միշտ թւացել է, թէ նրանք խուարի մէջ սարսափելի են :

Նա լսեց, բայց չարտնակում էր ոտքով խաղալ յաստակի վրայ և ըստ երեւոյթին բոլորովին ուրիշ բան էր մտածում: Ներս մտաւ տանտիկինը ճաշի պարագաներով :

— Ախ, զուք արդէն ծանօթացել էք, ինչ լսեց, զիտէք ինչպէս ուրախ եմ այսօր. վազուց է, ինչ երեքավ սեղան չենք նատել. այս նկարին ել շատ անգամ օրերով անցաւանում է, և ես մնում եմ բոլորովին մենակ, այնպէս տիսուր է լինում, այնպէս տիսուր: Չեր ոտքը բարի է, տիկին, զուք եկաք, ահա նու էլ տանն է, այսօր զուրս չի գնացել:

— Այսօր ինձ այնպէս յագնած էի զգում, առացի ես և զգացի, որ կարմրում եմ: Եսին վայրենին Մարդարիսն ինձ նայեց մի հայեցքավ, որ կարծես ուզում էր ասել՝ «միթէ»: Խոսում էի և նրա հայեցքը տանել չկարսպացայ, գլուխու քաշ չկեցի: Եւ վայրկենապէս գլխավսա անցաւ մի անախորժ միտք, թէ զուցէ նա զիտէ իմ ներքինը և նոյնիսկ նկատել է, երբ ես նայել եմ զրան մեղքքոց: Ճաշի բնթացքում ես ինձ զգում էի յանցաւոր երեխայի կացութեան մէջ, որ սպասում է, թէ շուտով իր ծածուկ արարքը կը բացուի, և ինքը կը պատժուի: Տանաբիկինը, հանաքներ էր անում, Մարդարիսը խօսում էր աշխարհ տեսածու ապրած կնոջ համարձակութեամբ ամեն բանից: Ես լսում էի լսութեամբ, ամեն անգամ, երբ փորձում էի նայել նրան, հայեցքս նրա աչքերին էին հանդիպում, իսկոյն գլուխու քաշ էի ձգում և կարմրում, անկարելի էր զիմանալ: Ի՞նչ ունէր այդ կինը իր գէմքի վրայ, մանաւանդ աչքերի մէջ, որ ինձ ստիպում էր լսել, բայց աներկրաց էր, որ նա զգում էր իր ոյժը, որ դա նրա համար նորութիւն չէր, ու կարծես զուարձանում էր իմ յուզունքով, խաղում էր ինձ հետ, ինչպէս երեխան կը խաղար իր զնդակի հետ: Ես ալեւս չէի լսում, թէ նա ի՞նչ է խօսում, ի՞նչ է պատմում, նրա ձայնի ելեւէջերը հնչւում էին իմ ականջին որպէս մի անըմբանելի երածշտութիւն, և միայն մտածում էի այն մասին, թէ ես ինչու եմ լսել, ինչու չեմ կարողանում խօսել: Դարձեալ այս անօրինակ լսութիւնը, հզօր, ամենակարող, որ գործում է համրօքէն ու տիրաբար, որ ընկծում, յաղ-

թահարում է, ինչպէս ինձ այս ժամին։ Յիշեցի որ մի տեղ կարդացել եմ. «Երբ շրթունքները նիրահում են, հոգին զարթնում է և գործի կինում։ Ո՞րտեղից յիշեցի. այժմ այս նախադասութիւնը դառնում էր իմ գլխում՝ ինչպէս ծանօթ երգի մ՛ կտոր, որ չգիտես ինչո՞ւ՝ մարդ անդադար կըրկնում է։

Կացութիւնս խղճալի էր ու վտանգաւոր. ես մի քառ չէի կարողանում ասել խօսակցութեանը մասնակցելու համար։ Երբ տղամարդը կարկամում է մի կնոջ առաջ, վստահ կարող է լինել որ հոգին գործում է անօրինակ ուժգնութեամբ, ինչպէս հեսց նոր վանդակի մէջ դրած թռչնակ, որ թրապտում է դուրս թռչելու համար։ Այս կնոջ հանդէպ իմ շրթունքներն էին կարկամուել. ես համր էի կտրել, բայց հոգիս գալարուում էր լուսաթեան մէջ, և ինչ որ մութ լողեր աղմկում էին նրան։

Դաւադրական մի գեղեցկութիւն կայ այն լուսութեան մէջ, ուր օրօրուում է գիմացդ նստած կնոջ պատկերը, և երբ համրօրէն, պաշտամունքի երկիւղածութեամբ աշխատում ես քո ներքին աշխարհում պարփակել մի գեղեցիկ գոյութիւն, աներեւոյթապէս միացնել քո հոգուն մի այլ հոգի, որ անդիտանում է իրանից այնքան մօտիկ կատարուող սքանչելի պայքարը։ Բաժանուած սէրը կամ տանջանքը խիստ գունատ է այն մենաւոր զգացմունքի հանդէպ, որ բուն է զնում մը սըրտում՝ ինչպէս փոքրիկ օձը մի սեւ խորշում կծիկ կծիկ գալարուած։ Հոգիների յատակը ծալքեր ունի, որոնք ահաւոր են կամ սքանչելի, երբ շըր-

թունքները խոպառ համր են։ Սէրը և ոճիրը այնտեղ են հանդչում լուսութեան մէջ։ Ահա այդ դիւթական լուսութիւնն էր, սիրոյ լուսութիւնը, որ համակել էր իմ ամրող էութիւնը, և ես ցաւով էի մտածում, որ գուցէ իմ հոգին աղմկող այդ բուռն զգացմունքի ծանրութիւնը մեն-մենակ տանեմ, անընկեր ու լքուած։

Ես տանջւում էի . . .

— Զէի՞ք կամենայ մի վոքը տապակած գետնախնձոր, հարցրեց տանտիկինս։

— Ո՞չ։

— Հիւանդ չէ՞ք։

— Ո՞չ։

— Պարոնը համարեա ոչինչ չկերաւ, ասաց Մարգարիտը։

— Մի օր մնաց տանը և ահա այսպէս վատ է զգում իրան։

Պատասխանի փոխարէն ես լուս նայեցի խօսակիցներիս անորոշ, համարեա ապուշ նայեացքով։

Զիմացայ, թէ ինչպէս վերջացաւ ճաշը, ինչպէս մենք պարակէզ դուրս եկանք։ Տանտիկինը մեզ շուտով թռղեց և մենք երկսով կրկին մնացինք երեսառերես։ Մարգարիտը մի շինծու հետաքրութեամբ, որ այնպէս յաջողւում է կանանց և այնքան գողտրիկ է, նայում էր ծաղիկներին։ Մի ամրող խումբ մեղուներ աշխատում էին նրանց վրայ՝ գլուխները թաղած ծաղկարաժակների մէջ։ Ես ստիպուած էի ցոյց տալ, թէ բաժանում եմ նրա հետաքրքրութիւնը, բայց իրօք մտածում էի խօսակցութիւն սկսել։

— Նայեցէք այս մեղուներին, ասաց նա,

սրանց ըստ երեսյթին խելացի, գիտակցական աշխատանքի տակ թագնուած անդիտակցութիւնը ինձ համար միշտ եղել է՝ մի զարմանալի առեղծուած :

— Ինչո՞ւ չէք ասում տիկին, արտաքին անդիտակցութեան տակ թագնուած գիտակցութիւնը . նրանց աշխատանքը մեղ թւում է մեքինայական, բայց այդպէս է արգեօք :

— Թուզ այդպէս լինի, էականն այդ չէ, այլ ներքինը, որը մնում է առեղծուած :

— Լութեան մէջ, տիկին, շատ, չոփազանց շատ բան կայ, որոնք միշտ կը մնան առեղծուածներ . մեղուների ներքինն էլ այն մէծ լութեան մի մասնիկն է, որի մէջ կատարուած են այնքան սքանչելիքներ :

— Աքանչելիքներ . . . հաւատացած էք նա թափով մի ծաղիկ քաղց և նայում էր թերթիկներին մտախոն կերտով՝ սուս անտեղ վնասելով իր հարցի սրատասխանը :

— Լութեան մէջ կատարուածը տարարախտաբար միշտ սքանչելի չէ, ասաց նա և ներվագին շարժուամով փետոց ծաղկի թերթիկները, դրիւ տուեց :

Տանտիկինը յայտնուեց :

— Տիկին, կլարան զարթներ է և ձոզ է կանչում : Մարդարիալ հեռացաւ շատակով, թողնելով որ խորհեմ նրա վերջին ասածի վրայ : Արդարե, ի՞նչ էր ուզում ասել « լութիւնը միշտ սքանչելի չէ » խօսքերով : Մի՞թէ նա դուչակել է իմ հոգում կատարւածը և զգոն էր, մի՞թէ ուզում էր ասել, թէ ինքը զիտէր, որ ես նայել եմ նրան դաղտապողի ձեռով և ակնարկ էր անում ինձ պատժելու համար : Բոլոր մաքեր վատ էին, ձաշց առաջ այդ կողջը տեսնե-

լու երջանիկ արամադրութիւնս կորաւ, և նրա տեղը մնաց մի ճնշող զգացմոնք, ուր ամօթն ու անորոշութիւնը, երկիւղն ու թափածը խառն էին : Ափսոսացի, որ մի քանի օր առաջ չմեկնեցի : Բարձրացայ սենեակս, պայտասակս կապեցի և վար իջայ, տանտիկնոջս մնաս բարի ասացի :

ԲՇԵՐ ՊԱՐՃԵԱԼ :

— ԼԵՒՆԵՐԸ :

— ԵՐԵԿՈՂԵԱՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՊՆԱՔ :

— ԶԵՄ ԿԱՐԾՈՒՄ :

— ԴԱՐՁԵԱ՛Լ . . . ախ այդ նկարիչները :

Ես մեկնեցի, յուսալով՝ որ մինչեւ վերադարձս մի բան տեղի կ'ունենայ, մի անապասելի փոփոխութիւն, որ ինձ կ'աղատի այս ծանր վիճակից :

VI

ԵՐԵՔ ՕՐ ՅԵՍՈՅ ՎԵՐԱԴԱՐՁԱՅ :

Պանսիօնում ոչ մի փոփոխութիւն . իրերն ընթանում էին առաջուայ կարգով :

— Ահա և թափառակինը, ասաց տանտիկինս ձաշի ժամանակ . կարծում էի, թէ ձեր ոտքը բարի է, տիկին . այսունետև մի քիչ էլ տանը կը նստի, քայց էլի մեղ մենակ թողեց :

— Երևի ո՛չ միայն ոտքը բարի չէ, պատասխանեց Մարդարիալ, այլ և ձանձրացնում ենք նրան :

— Տիկին, լաւ գիտէք, որ ձեր ասածը ճշմարիտ չէ, որ դուք ինձ ընաւ չէք ձանձրացնում :

— Ես գիտեմ . . . օճօ :

Նա ծիծաղեց բարձրաձայն, և ես կրկին կարմրեցի ասածիս համար ու գլուխս քաշ ձգեցի:

— Ես միայն մի բան գիտեմ, որ դուք սիրում էք քնոթիւնը, լեռնային տեսարանները, ինչպէս բանաստեղծ—նկարիչ:

— Ե՛ւ ձորերի խուլ լուսթիւնը, և' անտառների հազիւ լսելի շշուկը...

— Թոշտանների երգը, ջրերի կարկաչը, խոտերի փափոցը, գետիսոփ սլուղը, շարունակեց նա կատակելով և կրկին քրքջաց բարձրաձայն ու լոեց: Նա մտախոն խաղում էր ձեռքի պատառաքաղի հետ, քիչ յետոյ շարունակեց.

— . . . Ես ձեր լուսթիւնը բնաւ չեմ սիրում . . . լուսթիւնը զարհուրելի է . . . նա բարոյական աւերածն է . . . ներքին թշնամին, որ կրծում է այնքան ազնիւ, անմեղ հոգիներ խուլ խաւարի մէջ . . . չ, ես դողում եմ լուսթիւնից:

— Միշտ:

— Միշտ . . . լուսթիւնը ինքը սոսկումն է. եթէ բնութեան մէջ ձայնը չլինէր, երկիրը սարսափից կը ճայթէր ու փշուր—փշուր ցրիւ կը գար անհունաւթեան մէջ. եթէ մարդը խօսք չունենար, հոգին կը պայթէր զարհուրանքից. վայ այն հոգուն, ուր իշխում է լուսթիւնը: Համբերը միշտ խենթէր են նաև . . . Ես լուսթիւն չեմ սիրում:

Նրա ձայնը գողում էր. խօսքերը, որոնք հնչւում էին անօրինակ ուժգնութեամբ, կարծես մի մութ գաղտնիք էին թագցնում: Ես չէի սպասում, թէ նա այսքան լուրջ կերպով կը զբաղուի մի անմեղ ինդրով, այսքան կիրք ու յոյզ կը դնի իր հսկմողմունքների մէջ: Զարմացած էի ու հետաքրքրուած, ուստի մեղմութեամբ շարունակեցի.

— Ես ձեղ հետ համաձայն չեմ, տիկի՞ն. խօսքը

լուսթեան մի մասն է միայն, ամենաչնչին, ամենախեղճուկ մասը, հաւատացնում եմ ձեզ, կեանքի և տիեզերքի խորհուրդը լուսթեան մէջ: Խօսքը լուսթեան մի անկիւնը բացող քողն է, իսկ նուիրական ստեղծագործութիւնը տիեզերքի մէջ կամ մարդկային հոգում միշտ կատարուում է համրօքէն, մի վեհ խալօսղութեան մէջ, ուր վայրկեանները յաջորդում են իրար անշշուկ, և ամեն մէկը քար լուսթեամբ կերտում է սքանչելիքներ: Մի՞թէ համաձայն չէ՞ք, որ նոյն իսկ անկեղծ ու խորունկ սէրը միշտ համր է լինում. զուր չէ ասուած, որ ու երր շրթունքները նիրհում են, հոգին զարթնում է և գործի կենում»:

— Տիկի՞ն, ձեր կարկանդակն այսօր հիանալի է, դիմեց նա յանկարծ տանտիկնոջը:

Ես կարկամեցի ու զարպացայ, աւելի պարզ ու վճռական ձեռվ դժուար էր հեգնել իմ ասածը, մանաւանդ սիրոյ իմ փիլիսոփայութիւնը:

— Ճաշի ժամանակ մետափիզիկան բաւական անմարս բան է, այնպէս չէ, ասաց նա անհոգ ծիծաղերով:

Այրի է, մտածեցի ես, իսկ այրիները նման են այն թռչուններին, որմնք մի անգամ ազատուել են թակարդից: Սէրն իբրև իդէալական, եթերային մի յարաբերութիւն սեռերի՝ դադարել է նրանց համար որևէ զին ունենալ, որովհետեւ կեանքը և իբրերը դարձել են դրական: Իմ բառերը երեխ խիստ օտարուի են հնչում այս այրի կնոջ ականջին, և իմ հոգին բորբոքող կրակը գուցէ երբէ՛ք չի վարակի սրան: Ո՞վ գիտէ, գուցէ նա իր գեղեցիկ արտաքինի տակ թագցնում է կեանքի տգեղութիւններից կամ

անարդարութիւններից ցաւած, յոգնած մի հոգի, հեղնող ու թերահաւատ դէպի ամենը և ամեն ինչ, որ վերաբերում է մարդկային իդէտլական յարաբերութիւններին:

Սյս բոլորն անցնում էր իմ գլխով այն ժամանակ, երբ Մարգարիտը հանդարա ոււտում էր կարկանդակները և վրաս չէր էլ նայում: Այսպիսի լուսութիւնը ճիշտ որ զարդուքելի էր, որովհետեւ իմ ներքին աշխարհում գալարուող լուռ զգացմունքին այս գեղեցիկ, այս դիւթական արարածը պատասխանում էր իր կարկանդակներով: Դա էլ մի տեսակ աններդաշնակութիւն էր, որ իմ սիրու ցաւեցնում էր: Ինձ թուում էր, թէ գեղեցկութիւնը երբէք բիրու չպէտք է լինի:

Ճաշը վերջացաւ, մենք կրկին դուրս եկանք պարտէղ:

— Հրաշալի օր է, առաց նաև դէպի հեռուն, դէպի կապուտակ լեռները նայելով. խսկեխսկ թափառելու և լուսութեան հմայքը ճաշակելու օր, այնպէս չէ . . .

Նա հեգնում էր:

— Ես այսօր զրօսանքի չեմ դնալու

— Ի՞նչպէս ասացիք ճաշի ժամանակ. «Երբ շրթունքները նիրհում են, հոգին զարթնում է և գործի կենում»: լաւ է ասուած, բայց ինձ հետ ձեր հոգին դործի կենալու պէտք չի դժայ, որովհետեւ մենք միշտ կը խօսենք: Այս, գնանք դէպի այն ժառուղին, ուր այնպէս զով է, տանտիկինն ինձ կը կանչի, եթէ կլարան զարթնի:

Նա ներս մտաւ, հովանոցը վերցրեց, և մենք քայլեցինք լուսութեամբ՝ կողք կողքի: Ճանապար-

հին մի քանի անգամ նրա գիրդ բազուկը դիպաւիմ թէին և ախորդելի սարսուռով ցնցեց ինձ: Ես նայեցի գաղտագովի կերպով՝ իմանալու համար, դըպուածով եղաւ այդ հպումը, թէ դիտարեալ, բայց նրա դէմքի վրայ ո՛չ մի փոփոխութիւն: Նա քալում էր իմ կողքից հոյակապ ու սեազգեստ և անհոգ կերպով խաղացնում էր ձեռքի հովանոցը: Ծառուղին հրաշալի էր, երկու կողմից ծառերը բարձրացել էին և վերեւում սիրահարների պէս զրկուել իրար հետ՝ ոստ ոստի խառնելով: Մեր պլուխների վրայ կանաչի մի սքանչելի կամար էր՝ տերեների մողայիներով զարդարուած, որոնց արանքից արև շողերը թափանցում էին, մի վայրկեան խաղում իմ գեղեցիկ ուղեկցուհու ուկեդոյն մազերի ճակատի, կամ այտերի հետ, ինչպէս փայլուն թիւնեռներ, իսկ նա շարունակում էր քայլել, հայեացքը միշտ դէպի հեռուն, դէմքը մտապաղ, երազող:

Ես լուսում էի յամառաբար և սպասում, արգէն ծառուղիի մէջտեղումն էինք, երբ նա ընդհատեց լուսութիւնը:

— Ես ասացի, որ լուսութիւնը զարհուրելի է, իսկ դուք շարունակում էք լոել:

— «Երբ շրթունքները նիրհում են, հոգին զարթնում է և գործի կինում» պատասխանեցի ես առանց վերև նայելու: Նա յանկարծ կանդ առաւ, իր ուժեղ, դիւթիչ հայեացքն ինձ ուղեց մի վայրկեան, ապա հովանոցի ծայրով մի չոր տերև ճակեց ու վերցրեղ:

— Դուք ինձ սիրում էք, հարցրեց նա վճռական ու չուրջ կերպով:

Հարցն այն աստիճան ամսպասելի էր, որ ես
միանդամայն շփոթուեցի և մնացի կարկամուած:
Մի վայրկեան մենք նայում էինք իրար. նա հա-
մարձակ ու իշխող, իսկ ես փոքրացած ու խղճուկ:

— Չէ՞ք պատասխամում:

— Այսինքն... ես ինչպէս արտայայտեմ...
դուք այնպէս... յանկարձակի...

— Դուք ինձ սիրում էք, հարցս կարծեմ պարզ
է, և ձեր մի խօսքն այժմ աւելի արժէ, քան ձեր
լուսթեան ամբողջ փիլիսոփայութիւնը. ես այդ
խօսքին եմ սպասում:

— Այո՛, սիրում եմ...

— Այսպէս... ես այդպէս էլ ենթագրում էի.
երբ տղամարդը կնոջ առաջ միշտ խրանած հորթի
կերպարանք է շինում, ապուշ—ապուշ նայում երե-
սին, լավկան ճառեր ասում, նա կամ սիրում է, կամ
սիրելու վրայ է:

Նա ծիծաղեց, բայց այս անդամ առնարկի:

— Ո՛չ, սիկին, երբ տղամարդը կնոջ մօտ
համր է կտրում, խօսք չի գտնում ասելու, նա
կամ սիրում է, կամ սիրելու վրայ է:

— Լաւ, ընդունենք, որ այդպէս է, բայց հա-
մաձայնեցէ՞ք, որ ձեր սէրը շատ նման է մեղուների
սիրուն դէպի ծաղիկները: Բզզաց, թռաւ, ճանա-
պարհին զտաւ մի սիրուն ծաղիկ, թևերը կը ծալի,
կը նստի ծծելու, յետո՞յ... դարձեալ դէպի առաջ,
դէպի նոր ծաղիկներ, որոնց բոլորին նա հաւասար
չափով է սիրում անշուշտ: Ես ձեր ճանապարհի
վրայ յայտնուեցի, այդ ձշմարիտ է, բայց խոստո-
վանեցէք, որ ժամանակը կարծ էր, այնպէս չէ՝
չափազանց կարծ, հազիւ մի շաբաթ:

— Տիկի՞ն, գուցէ դուք նկատել էք, որ ես
մի գեղապաշտ երազով եմ: Ես եկայ յատկապէս
այս խուլ անկիւնը՝ բնութեան ծոցում մենակ երա-
զելու համար: Շատերին կարող է տարօրինակ
թւալ, որ մի լուրջ մարդ երազելը դարձնում է
զրազմունք. բայց ես կը կամենայի, որ դա գոնէ
ձեզ համար տարօրինակ լինէր: Մեր ամբողջ
կեանքն էլ մի երազ է, մի տիսոր երազ, և յետոյ
մեր արածի արժէքը մեր, մեր հոգում պէտք է
վնասուել և ոչ դրսում: Տարօրինակութիւն չկայ
աշխարհում, որովհետեւ հաստատուն, յաւիտենա-
կան օրինակ նոյնպէս չկայ: Ես իմ ծննդավայրում
մի մարդ էի ճանաչում, մի խեղճ, աղքատ երա-
ժիշտ, որ փոխանակ իր արհեստով հաց վաստակե-
լու՝ բարձրանում էր գիշերները մի բլրի վրայ և
նուազում էր աստղերի համար. տարօրինակ էր, չէ՝
ամննքն էին գտնում տարօրինակ... բայց մարդն
միայն ինքն էր ըմբռնում իր արածի արժէքը և իր
ձեռով հասկանում կեանքը: Եւ այսպէս, տիկի՞ն, ես
այս խեղճ երաժշտի պէս եկայ այս մոռացուած
վայրերում աստղերը երգելու խուլ գիշերին: Այս-
տեղ իմ շուրջն իշխող այս սքանչելի ներդաշնա-
կութիւնն ինձ թւում էր բնութեան մի սիրուն
երազ: Իմ անվերջ թափառումների մէջ ես յաճախ
ցաւով էի մտածում, որ այդ զարմանալի երազը
համր է ամեն տեղ, որ նրան չի կարելի բռնել,
գգուել, գուրգուրել: Ինձ թւում էր, թէ արարած-
ների հոգում ապրող յարատե թախիծը յատկապէս
այդ երազը բռնելու և վայելելու մշտական, անյա-
գուրդ և անկարելի տենչն է, որին բաւականու-
թիւն տալու համար մենք քաղում և մի վայրկեան

յետոյ ոչնչացնում ենք գեղեցիկ ծաղիկները, վազվը զում ենք կանաչի վրայով ու տրորում խոտերը, բռնում ենք գրաւիչ թիթեռը և սպանում մեր ձեռքերի մէջ։ Ամեն մի մասնակի գեղեցկութեան տակ մենք փնտառմ ենք անհունը և չդանելով՝ ասես զայրացած փշրում ենք ու անցնում։ Բնութիւնը ստեղծում է, և մարդը միայն աւերում . . .

— Վերսախն ստեղծելու համար։

— Անշուշտ, բայց աւելի նոռազ կատարեալը, քան բնութեան ստեղծագործութիւնն է։ Բայց գուցէ ես ձեզ ձանձրացնում եմ, տիկին։

— Խօսեցէ՞ք, խօսեցէ՞ք, ես սիրում եմ, երբ այսպէս խօսում են։

— ... Եւ ահա հոգեկան այս կացութեան մէջ անսպասելի կերպով ես տեսայ ձեր քրոջը . . .

— Իմ քրոջը . . . կրկնեց նա յուղմունքով . . . նստե՞նք այս նստարանի վրայ։

— Ձեր քրոջը, շարունակեցի ես՝ նստարանի վրայ տեղ բռնելուց յետոյ։ Նրա դիւթական արտաքինով յափշտակուած ինքս ինձ ասացի. «Ահա՝ նա, այն երազը մարմնացած մի չքնաղ արարածի մէջ», բայց անմիջապէս այն սպանիչ ժափտը. Նրա խախտուած, խեղաթիւրուած հոգին, նրա փշրուած բանականութիւնն ինձ յետ մղեց։ Հոգուս մէջ մընաց միայն մի կիզիչ ցառ. և նրա հմայիչ պատկերը աննիւթ, եթերային, դարձեալ երազի պէս, որ չգիտէի ում հետ կապել, ուր մարմնացնել։ Որոշել էի հեռանալ այդ ցաւով, գուք եկա՞ք . . . և ինձ համար պարզուեց ամեն ինչ, ես տեսայ վերջապէս իմ սեփական հոգին . . . Ես ձեզ սիրել եմ առանց տեսնելու, ես ձեզ սիրել եմ ձեր քրոջ մէջ առանց

այդ իմանալու, իմ հոգին ձեզ վնարում էր՝ ինչպէս թափառական ամսը մի բարձր լեռնակատար, ինչպէս ծովեղը կտրող թռչունների երամը հանգչւլու մի ժայռ։ Ես անկեղծ եղայ, տիկին, բայց ձեր յուղմունքը ինձ ընկճում է, ինձ ցաւեցնում գուցէ գուք մի հասթափուած էք, մի վշտահար, ներեցէք ինձ՝ եթէ իմ խօսքերը եկան մի ծածուկ վերք մորմոքելու, մի հին ցաւ նորոգելու . . .

— Դուք ինձ սիրել էք իմ քրոջ մէջ . . . կըրկնեց նա մեքենայարաք՝ աչքերը մի կէտի յառած և խորին ցաւով . . . Խե՞ղձ քսր, խե՞ղձ քսր, շարունակեց նա յուղմունքով, և ես նկատեցի որ աչքերը թացացան և շրթունքները գողղողացին։

Ես սպասում էի. նա հովանոցի ծայրով խաղխըզում էր զետինը՝ կիսով չափ առաջ կուցած։

— Շնորհակալ եմ ձեր անկեղծութեան համար, ասաց նա՝ յանկարծ սոսի կանգնելով. — Իրաւունք ունեիք ասել այդ բալորը . . . խօսելը լաւ է, թող ամինքը խօսեն, ամենքը, լուռթիւնը զարհուրելի է. խե՞ղձ քսր . . . Բայց մենք շատ ուշացանք այս տեղ, քսրս երեւի զարթնեց ահա տանտիկինը դուրս եկաւ գոնից. ցաւսութիւն։

— Բայց, տիկին . . .

— Ցտեսութիւն։

— Եւ նա շտապով դիմեց գէպի ի տունը։

Ես մնացի կանգնած. լուս նայում էի նրա սքանչելի հասակին, նրա բարձր, նուրբ իրանին, որ թեթեւ, օրօրուում էր ծառերի տակ, բոլոր այդ գեղեցիկ մարմնի բարեձեւութեանը, որի վրայ բընութիւնը զործել էր ասես մի կանխամտածուած ծրագրով։ Նայում էի, և ինձ թւում էր, թէ այդ

փախչող պատկերից մի բան մնաց ինձ մօտ, մի առներիւոյթ բան նրա էութիւնից, որ շշմեցրեց ինձ: Ել ոչ մի կառկած չկար, խենթի պէս սիրում էի այդ ինոչը. իսկ նա՞...

Վերսատին նստեցի նստարանի վրայ. երբ նա իսպառ ծածկուեց, և ընկղմուեցի խոհերի մէջ: իմ բախտն էր վճռում...

VII

Սնցան էլի մի քանի օրեր առանց ոեւէ փոխութիւն բերելու մեր յարաբերութիւնների մէջ: Ճաշին և ընթրիքին Մարգարիան իրան պահում էր այնպէս, կարծես ոչինչ չէր պատահել մեր մէջ, ոչ մի խօսակցութիւն աեղի չէր տնեցել: Երջանիկ տանտիկինս խօսում էր մերթ իր հէրուայ նկարչից, մերթ ուրիշ կենողներից, յաճախ եղանակից. Մարգարիտը կանացի յամառութեամբ միանդամայն առնոշադիր թողնելով ինձ՝ առանձին հետաքրքրութեամբ լսում էր նրան, ինքն էլ իր կողմից պատմում էր հազար ու մի աննշան բաներ. կեանքի մանր դիպուածներ, անմեղ արկածներ, որոնց յերեւելու կանացք այնպէս վարպետ են: Երբեմն ես մի խուլ կատաղութեամբ աչքս յառում էի նրա երեսին՝ նրա ուշադրութիւնը զբաւելու հաստատ որոշումով. նա երկար ժամանակ տանում էր իմ հայեցքը դիտաւորեալ, խորամանկ ձեւով և յանկարծ այնպէս էր նայում. որ ես ստիպուած՝ քաշ էի ձգում գլուխս: Այդ զարմանալի աչքերի լուռ հայեցքին ես երբէք զիմանալ չէի կարողանում: Ես մնում էի վհատուած ու դատապարտուած

լսելու այս երկու կանանց խօսակցութիւնները, ուրոնք կարծես դաւադիրներ լինէին իմ դէմ:

«Այրի է, մտածում էի ես, գուցէ և մի անսիրտ կին, խոկեւիսկ մի զրաւիչ սգինքս, որի առեղծուածները լուծել ես երբէք չեմ կարողանայ»:

Ճաշերից յետոյ նա ալլեւո ընաւ ինձ հետ պարտէղ չէր իջնում, դէպի ծառուղին չէր գնում և փակւում էր սենեակում քրոջ հետ՝ ասես մի անսակելի վաճանգի առաջ:

Երեկոները ես լսում էի նրա ձայնը դրանս առաջ :

— Պարո՞ն, կլարան ձեզ բարի գիշեր է յանկանոնմ:

Ես պատասխանում էի միեւնոյն ձեւով, բայց վրդովուած, որ այդ կինը ինձ յիշում է միայն այդ ժամանակ. ապա ես լսում էի հարեւան սենեակից կանացի զգեստների այն մեղմ ու հաճելի խշխոցը, որ յիշեցնում է ծառերի սօսափիւնը գիշերին, անկողինների թեթեւ ճոճոցը մարմինների ժանրութեան տակ, և յետոյ ամեն լան լսում էր, և իմ շուրջն իշխում էր մի զարնուրելի ամայութիւն: Ես սկսում էի մեղմիւ քայլել սենեակումս յետ ու առաջ միակերպ, անվերջ, ընկճուած խեղդող թախծի ժանրութեան տակ: Ինձ թւում էր այդ ժամերին, որ ես մոռացուել եմ մի տեղ, ուր ինձանից դուրս էլ ոչ ոք չկայ: Ապա մի թեթեւ շուկ, մի չնչին ձայն հարեւան սենեակից ինձ պարզում էր իրականութիւնը, և այն զիտակցութիւնը, թէ այս փոքրիկ դուռը բաժանում է ինձ այն չքնաղ էակից, որ խել է իմ հանգիստը, աղմըկել իմ հոգին, սիրտս համակում էր անհուն

ցաւով։ Գոնէ հեռու լինէր, գոնէ թողնէր հեռանար, կամ ես կարողանայի գլուխ առնել կորչել, բայց այնքան մօտիկ, միայն մի գոնով բաժանուած՝ —այդ սնտանելի էր։ Երբեմն մի խելագար տեսդ էր բնում հոգիս, ես մտածում էի մօտենալ այդ դրանը, կամացուկ կանչել նրա անունը, աղերսել, աղաչել, դուրս գայ։ Եւ այս ցանկութիւնը գնալով աճում, զօրանում էր իմ սրտում մինչեւ այն աստիճան, որ այդ սներեւակայելի գժութիւնը չանելու համար դուրս էի փախչում սներակիցս, նստում պարտիզում, կամ գնում թափառելու խաւար դաշտերում։

Զարհուրեկի էր, այդ կինը իմ ճակատագիրն էր դարձել, որից ես մի վայրկեան խուսափել չեմ կարողանում։ Ես հաւատացած էի, թէ նա գիտէ բոլորն, ինչ ես կրում էի, հասկանում է իմ հոգեկան կացութիւնը և վարւում է ինձ հետ՝ ինչոչս բազէն իր որսի հետ, ճաշակում է իմ տանջանքը, մասմաս ապրում է աւերածի գերագոյն հաճոյքը, ոլ գիտէ՝ ինչ մի սարսափերի գաղտնի քէն է յագեցնում տղամարդի սիրտ այսպէս քրքրելով։ Ես գիտէի, որ խարուած սէրը շատ անգամ սարսափելի է դարձնում կանանց, որ նրանք ընդունակ են այնուհետեւ կոյր ատելութեան և գրէմի առարկայ դարձնել առաջին պատահած տղամարտին։ Որքան բռւռն ու անզուսպ է մի կին իր սիրոյ մէջ այնքան կատաղի է և ահաւոր իր ատելութեան մէջ։ արդեօք մի այդպիսին չէ^թ իմ ճանապարհի վրայ։

«Սփէնքս, սփէնքս, զարհուրեկի առեղծուածներով», մրմնջում էի ես՝ խաւարի մէջ քայլերով։

Բայց և այնպէս մի բան պէտք էր անել, մի վճռական բան։

Մի օր ձաշի ժամանակ, երբ տանտիկինը մի վայրկեան խոհանոց մոտեւ և մեզ մենակ թողեց, Մարգարիտ դարձաւ ինձ։

— Դուք դեռ երկա՞ր կը մնաք այստեղ։

Պատասխանի փոխարէն ես նրան նայեցի լուռու վշտացած։

— Հարցո ձեզ զարմացնո՞ւմ է։

— Ոչ միայն զարմացնում, այլեւ վշտացնում է։ եթէ ես ձեզ արդէն խիստ եմ ձահձրացրել, տիկի՞ն, կարսդ եմ հեռանալ։ բայց կարծում եմ, որ իմ վերաբերմունքը գէպի ձեզ վայելչութեան սահմանից բնաւ չի անցել։

— Օ՛, բոլորովին այսպիսի պատասխանի համար չէր ձեզ տուած հարցս, ասաց նա ժպտելով, — այլ հէնց այնպէս, մի բան ասած լինելու համար — դուք այնպէս լուռ էք միշտ։

— Ի՞նչ կայ որ, լուռթիւնը թէն զարհուրեկի է ձեր ասելով, բայց նրա պատճառած սոսկումը շատերին խիստ հաձելի է։

— Դուք անարդար էք դէպի մի կին, որին չէք ճանաչում։ առնեք՝ դա զարմանալի չէ, տղամարդիկ միշտ հեշտութեամբ անարդար են լինում, երբ խնդիրը կանանց է վերաբերում։

— Լսեցէք, ափկի՞ն, չէ՞ք գտնում որ մեր այն խօսակցութիւնից յետոյ դուք ինձ գոնէ մի վերջին խօսք պարտական էք։

— Դուք զերադասում էք լուռթիւնը, և ես ձեզ հաձելի լինելու համար լուռմ եմ։

Եւ նա դարձեալ քրքջաց իր հնչուն, անհոդ

ծիծաղով, որ երբեմն ինձ այնքան հաճելի էր և որ
այժմ սրի պէս ցցւում էր սրտում :

— Մի՛ շահագործէք այդ նախաղասութիւնը,
մի՛ աղաւաղէք նրա միտքը, աղաջում եմ ձեզ :

Ներս մտաւ տանտիկինը՝ բերելով երկրորդ
կերակուրը :

— Հրաշալի է, ես շատ եմ սիրում մակա-
րոնի, բացականչեց Մարդարիալ՝ կարծես ուրախա-
ցած, որ ինձ կարող է թողնել անպատասխան :

« Սիմինքս, սառն, անողորմ սիմինքս », մոմոացի
ես՝ ձմրտկելով ձեռքիս մէջ անձեռուցիկը :

— Տիկի՞ն, դարձայ ես դէպի տանտիկինս,
— մոռացայ ձեզ ասել, որ վաղը մեկնում եմ :

— Դարձեա՞լ, Տէ՛ր Ս.ստուած, քանի՞ օրով. ա՛խ
այս նկարիչները :

— Ես մեկնում եմ իսպառ, աւելացրի ես
վճռական եղանակով :

— Ի՞նչպէս, ինչո՞ւ այդպէս յանկարծ, բացա-
կանչեց տանտիկինս շփոթուած ու լացակամած.—
որքա՞ն ցաւալի է... ես ձեզ սիրում էի որդու-
պէս... յետոյ ամենքս այնքան ուրախ էինք. և
այն սենեակն էլ որ պարապ է մնալու :

— Ապահով եղէք, ես կը վճարեմ ամբողջ
ամսուայ վարձը :

— Ա.խ, այդ ոչինչ. վճարը չէ բանը... չոր-
հակալ եմ. բայց առանց ձեզ այնքան ձանձրալի կը
լինի այստեղ, այնպէս չէ՝, արկի՞ն, դիմեց նա
Մարդարիտին :

— Հա՛, ի հարկէ, պատասխանեց վերջինս,
— պարօնն ի զուր է շտապում այդպէս. բայց երեւի
ձանձրացրինք. ի՞նչ կարող ենք ասել:

Ճաշը վերջացաւ. ես լոռոթեամբ բարձրացայ
սենեակս՝ հաստատ որոշելով մեկնել յաջորդ առա-
ւորը: Ուրիշ ելք չկար :

Նոյն գիշեր, երբ ամենքը քուն մտան, ես
դուրս եկայ ուրարէզ լոռոթեամբ և նստեցի մի
նստարանի վրայ: Ուզում էի վերջին անգամ ճա-
շակել այն վազերի քաղցրութիւնն, ուր այնքան
ախորժելի և դառն ժամեր էի անցրել: Գիւղում
ձայն չկար. ճանապահների վրայ դադարել էին
ոտնաձայները. լեռ ու ձոր, բլուր ու անտառներ
նիրհում էին հսկայ քնով, և երկինքը՝ աստղազարդ
ու անմռունչ՝ ասես վեհօրէն հսկում էր նրանց
վրայ: Այսպիսի ժամ էր, որ կարծես ընութիւնը
ընկղմուած լոռոթեան մէջ՝ մտմտում էր մեղմիւ-
իր անհասանելի գաղտնիքները, որոնցից ծունդ
պիափ առնէին այնքան սքանչելիքներ: Ինձ թը-
ւում էր, թէ այն թանձր խաւարի մէջ բոլոր բա-
րերար ոյժերը գործում են մի առանձին ուժգնու-
թեամբ, և նրանց ընդհանուր ճիգերը միանում են
այն զարմանալի ներդաշնակութեան մէջ, որ այն-
քան աննիւթ վայելքների աղբիւր է և այնպէս
օրօրում է մարդկայն հոգին սիրուն անուրջներով:
Այդ բարերար, ստեղծագործող լոռութիւնը բռնում
էր նաեւ իմ ամբողջ էութիւնը, թափանցում էր
մինչեւ իմ սիրաը, ես կարծես լու ծւում, ապրում
էի նրա հետ և երազում էի նրա հետ, բայց դըժ-
բախտ էի: Տէ՛ր Ս.ստուած, որքա՞ն գեղեցիկ էր
ամեն ինչ: Եւ ինչո՞ւ մարդկայն հոգին այդպէս
աղմկող այնքան ցաւոտ յոյզեր, ինչո՞ւ այդ սքան-
չելի ներդաշնակութիւնը բալ' զամի կաթիներով
իջնում նաեւ տանջուող սրտերի վրայ:

ես մտածում էի, և իմ մտքերը սեւ էին:

իմ ճակատագիրը՝ որպէս մարդի, ինձ զայրացընում էր և վշտացնում: Անդամ սէրը, անխառն, գերադայն վայելքի միակ աղբիւրը նոյնպէս թունոտ է: Ինչ ողորմելի են մարդկացին երջանկութեան երազները, եթէ հնար լինէր բոլոր ցաւերը ջնջել, այնուամենայնիւ դեռ էլի միլիոնաւոր սըրտեր չէին մնայ մենակ ու չհասկացուած. գժբախտ սէրը յաւիտենական է, քանի որ մի հոգի անհասկանալի ու բուռն մղումով կը նետուի դէպի մի ուրիշ առանց պատասխան գտնելու:

Ո՞վ և ի՞նչը կարող է ինձ ամոքել, սիրում իմ, չդիտեմ ինչու և սիրուած չեմ՝ նոյնպէս առանց հասկանալու պատճառը: Եւ կուրծքս ուռաւ, բարձրացաւ անյօյս վշտից և դուրս թափուեց յորդ արցունքներով: Ես լալիս էի զառնագին, և իմ հեկեկոցը միակ աղմուկն էր, որ վրդովում էր բնութեան լուռթիւնը: Գիշերացին վեհ գեղեցկութեան, այս զարմանալի հմայիչ ներդաշնակութեան մէջ մէկ եւ էի լալիս, և իմ հեծկուանքն էր հնչում աններդաշնակ կերպով: Եւ դա հասկանալի էի, չէ՞ որ մարդը բոլոր արարածներից ամենադժբախտն է:

Եւ նոյն վայրկեանին ես լոեցի իմ յետեռում խոտերի մեղմ խշխոց և մի ձեռք քնքութեամբ դրուեց ուսիս: Յետ նայեցի... առջես կանգնած էր մի բարձրահասակ սպիտակաղղբեսու կանացի պատկեր. չդիտէի՝ աչքերիս հաւատամալ, թէ ոչ. նա' էր, Մարդարիսը:

— Դուք շա՞տ էք տանջւում, ասաց նա քընքշութեամբ:

— Տանջւում, եմթէ ոչ, միթէ դա կարող է ձեզ զբաղեցնել:

— Զբաղեցնել, ինչո՞ւ չէ, ես սիրում եմ արդամարդի արցունքը: Այնակս լաւ էր հնչում ձեր հեծկուանքը խաւարի ու լուռթեան մէջ, դա խիստ բանաստեղծական է, լուռթեան մէջ հեծկեկա՞նք., այնպէս չէ^o, և ես վաղուց էի ձեզ լսում հաշոյքով:

— Դուք խստասիրտ էք, օ՛, չափազանց խըստասիրտ, և զուք կի՞ն էք:

— Այո՛, և հէնց դրա համար ինձ արցունք է հարկաւոր:

— Չեմ հասկանում:

— Չէ՞ք հասկանում, արցունքը, ծածուկ վիշտը, սիրոյ միակ, հաստատուն նշանն է, իմ կանացի ինքնասափրութիւնը գոհանում է, երբ և ինձ համար լալիս են, հասկացա՞ք:

— Միայն այսքա՞ն:

— Բառական չէ^o:

— Ծնորհակալ եմ ձեր անկեղծութեան համար, բարի՛ դիշեր. ես կ'աշխատեմ մոռանալ ամեն ինչ և միւս անդամ երբէք, երբէք չարտասուել որեւէ կնոջ համար:

Ես գիր կացայ և պատրաստւում էի ներս գնալ: Նա բռնեց ձեռքս:

— Նստեցէք այստեղ:

Ես լուռթեամբ հնազանդուեցի: Մենք աեղաւորուեցինք նստարանի վրա կողք-կողքի: Միառժամանակ լուռթիւն տիրեց, ես լսում էի նրա ընդհատ-ընդհատ չնչառութիւնը, ես տեսնում էի, թէ նա ինչպէս ձեռքը տանում էր դէպի ճակատը և յետ ձգում մազերը ներվային շարժումով. պարզ էր, որ նա ինձ կարեւոր յալոնութիւն ունէր անելու և չգիտէր ինչպէս սկսել:

- Խսեցէք, դուք վաղը մեկնում էք:
- Ես արդէն ասացի, որ մեկնում...
- Չեմ հաւասում:
- Դուք տարօրինակ էք, ես յայտնեցի տանտիկնողը հէնց ձեր ներկայութեամբ:
- Դա գեռ ոչինչ չի նշանակում, երբ մի կնոջ համար լաց են լինում, այդպէս հեշտութեամբ չնն հեռանում:
- Ի՞նչ էք ուզում ասել:
- Ուզում եմ ասել այն, որ դուք էք հեռանայ, և այդ վատ, շատ վատ կը լինի թէ ձեզ և թէ մանաւանդ ինձ համար:
- Եւ թէ մանաւանդ ձեզ համար, կրկնեցի ես դանդաղութեամբ, — աղաչում եմ ձեզ, տիկին, մի՛ խօսէք այսպէս հանելուկներով, դուք տեսնում էք, որ իմ բախտը ձեր մի խօսքից է կախուած, խօսեցէք սլարդ, հասկանալի լեզուով, որ ես իմ անելիքը գիտենամ: Աղնիւ խօսք եմ տալիս ձեզ կատարել բոլորը, ինչ որ պահանջէք ինձանից, միայն թէ ես ճանաչեմ ձեր հոգին:
- Իմ հոգին... դա մի խզճուկ թռչուն է, որ իր առերտած ընի մօտ նստած սպաւոր ու անյոյս՝ էլ սիրտ չունի երկրորդը հիւսելու: Ես այրի եմ, իմ և կեանքը մէջ մէկի տեղ երկու գերեզման կայ... այսքանը բաւական է ձեզ արդեօք:
- Իւրաքանչիւր հոգի ծնուռող և մեռնող յոյժսկրի գերեզմանների մի շարք է, բայց և այնպէս կեանքը պատկանում է երիտասարդութեամը, դուք գեռ որքա՞ն ջահիլ էք...
- Այդ թողնենք, չէ՞ որ դուք էք ասողը, որ իւրաքանչիւր մարդ կեանքը հասկանում է իր

ձեւով: Իմն էլ այսպէս է: Բայց աւելի լաւ է խօսենք ձեր մասին: Քանի ժամանակ է, ես լաւ նըկատում եմ, թէ ի՞նչ է կատարում ձեղ հետ: Նոյնիսկ իմ եկած առաջին օրը ես լաւ հասկացայ ձեր ներքին յուղմունքը: Դուք երեւի շատ չզարմացաք, երբ դրան ծակը փակած գտաք. կանաչք շրջանկատ են: Այս երեկոյ էլ ես լաւ լսում էի, թէ դուք ինչպէս գնում գալիս էիք ձեր սենեկակում, լսեցի, ինչպէս գուրս եկաք, կամացուկ հետեւեցի ձեզ, վկայ եղաց ձեր գալանի արտասուրք ներին և մօտեցայ ձեղ հարցնելու, թէ ի՞նչ էք սղատում ինձանից:

— Ես ձեզ սիրում եմ:

— Առանց ճանաչելու, ի՞նչ երեխայութիւն:

— Զգիտեմ, անուանեցէք երեխայութիւն, միմարտթիւն, թեթեւամտութիւն, բայց ես ձեզ սիրում եմ խենթի պէս և ձեղ համար լալիս եմ խաւարի մէջ: Գիտակցութիւն չկայ, բանականութիւնս չի գործում, սիրտ է միայն, որ լսութեան միջից միտում է, իսկ ձեր ներկայութեամը թրպրտում է՝ կարծես կրծքից գուրս թռչելու և ձեր ոտքերի տակ ընկնելու համար: Սա մի տանջանք է և զերագոյն հաճոյք միաժամանակ, բայց շարունակել չեմ կարող, իմ էութիւնը փշրուում է, ես մեռնում եմ կարաց-կամաց, ահա թէ ինչու ես աշխատում եմ փախել ձեղանից, թէեւ գիտեմ, երբէք կամ շատ երկար բուժուելու չեմ այս վէրքից: Մինչեւ այժմ ես վարել եմ մի կեանք, որ յատուկ է ուսանողական տարիներին, սիրոյ վրայ ես նայել եմ ինչպէս մի թռչնի, որ երբեմն ներս է մտել իմ դռնից՝ լուսամտից գուրս թռչելու համար, բայց

այս մէկը ուրիշ բան է։ Նա իննամքով հիւսեց իր բունը սրտիս ամենանուելրական անկիւնում, հիւսեց ու նստեց՝ էլ երբէք չչուելու համար։ Իմ ամբողջ կեանքը այժմ ձեր ձեռքումն է։ մի խօսք, միայն մի խօսք։ Օ՛, փոյթ չէ, եթէ դուք զրուած էք ինձ երջանկացնելու անկարելիութեան մէջ, փոյթ չէ, եթէ դուք ինձ պատկանել չկարողանաք, եթէ մեր բախտերը անկարելի լինի միացնել յաւիտենապէս, բայց գոնէ ես իմանամ, որ ձեր սիրով համը չէ, որ դուք էլ զգում էք դէպի ի ինձ իմ զգացածի մի չնչին մասը, ես կը ձգեմ բոլոր աշխատանքներս, որ ու դիշեր կը նստեմ, կը պատկերացնեմ ձեզ կտակի վրայ, կ'առնեմ այդ թանկագին աւանդը, և ձեր հրամանով կը ծածկուեմ յաւիտեան։ Տեսէ՛ք, ծունկ չոքած աղաչում եմ ձեզ, արտասանեցէք ինձ համար ճակատագրական այդ խօսքը։

Ես կամացուկ ծունկ իջայ նրա առաջ և մեղմով բանեցի ձեռքը։ Նա յետ չքաշեց, ձեռքը դուզում էր և ջերմ էր։

— Ե՞նչ էք սպասում ինձանից։

— Ասայէ՛ք, վաղը մեկնեմ, թէ՞ մնամ։

— Դուք գտնում էք, որ լուսիթինը գերազանց է խօսքից, իսկ եթէ այժմ ի՞ս լուեմ։

— Ես կը մնամ, մինչեւ խօսէք։

— Լուսմ եմ, ասաց նա զնուական եղանակով և շտապով ոտքի երեկով՝ շարժուեց դէպի ի դուզը։ Ես մնացի տեղում։ քարացած, մի վայրկեան նայեցի նրա սպիտակ պատկերին, յետոյ այն էլ ծածկուեց, և յոդնած ընկայ նստարանի վրայ։ Կէս գիշերն անց էր, և ես դարձեալ ներս չգնացի, սեսեակի օգը կը խեղդէր ինձ։

VIII

Յաջորդ առաւօտը ես շատ ուշ զարթնեցի։ Մի ախորժ զզացմունք համակել էր ինձ։ Ապաքինուող հիւսնդի կացութեան մէջ էի, անհետկում ամեն բան ժարում էր ինձ։ Առաջին միտքը, որ ծագեց զիմումն, այդ այն էր, որ ես վճռել էի չմեկնել և գոն էի։ Վերստին լիշեցի նախընթաց երեկոյեան անցքը իր բոլոր մանրամասնութեամբ և ամեն ինչ բացարկում էի յօդուած ինձ, մահաւանդ Մարգարտի վերջին խօսքը, ի՞նչ տեղին, ի՞նչ զովարիկ ձեռով ասաց՝ «Ես լուսմ եմ»։ Ամեն բան այդ կազմ մէջ մի զրտիչ խորհրդաւորութիւն ունի, անգամ նրա կատակները, նրա ըստ երեւոյթին անմեղ խօսքերը, նրա հնչուն ծիծաղը, ի՞նչ պէս և զազանի վիշտը, այդ լուսը, բոլոր մի արքեցուցիչ հմայք ունի. այդպէս է ընութիւնը, ուր չկայ փոփոխութիւն, որ իր տակ թաղցրած չմինի մի սքանչելի խորհուրդ։

Երաղեւու ժամանակ չունեի, սաստիկ շտապում էի տեսնել նրան ցերեկով, ինձ թւում էր, թէ նախընթաց գիշերից յետոյ նա փոխուած պէտք է լինի, մի այլ կերպարանք պէտք է ունենայ։

Այն գ շերք փոքրացրել էր մեղ բաժանող անջրագեր, այժմ ևս ինձ աւելի մօս էի զդումներան։

Նախածաշը շատ ուրախ անցաւ, անստիլինս ի հարկէ շատ գոն էր, որ ես մնում եմ, նրան նոյն իսկ պէտք չէր իմանալ պատճառը։

Մարգարտիաը թէեւ գունատ էր, ի՞նչպէս մի անքուն գիշերից յետոյ, բայց անդադար քրքչում

Եր բարձրածայն , նոյնիսկ ամենաչշին պատճառից : Այսպէս նրան սաստիկ ծիծաղեցրեց մեղքի մէջ թափախուած մեղուն , որի թեւերը կպել էին մարմին , էլ թռչել չէր կարողանում . անուշադրութիւնից տաք սուպով շրթունքներն այրեց և դարձեալ ծիծաղեց , յետոյ նրան երկար զրաղեցնում էր լուսամուտի վարագոյքի արանքից ներս ընկած շողը , որ թիթեռնիկի պէս խաղում էր նրա դէմքի վրայ :

— Ի՞նչ աներես շող է , բացականչեց նա ու դարձեալ քրքչաց :

Ես վեր կացայ , վարագուրով խափանեցի շողը :

— Շնորհակալ եմ , ի՞նչ բարի էք , ասաց նա , դարձեալ ծիծաղեց :

Ես նկատեցի , որ նրա ծիծաղի մէջ մի տարօրինակ բան կար . դա այն հիւանդու ծիծաղներից մէկն էր , որոնք հեշտոթեամբ կարող են լացի փոխուել . նրա բոլոր շարժուները տեսնդու էին , ներվային , ձախն աւելի հնչուն , ծիծաղի համարեա անվերջ պահանջ . նայում էի նրան և վախենում մի մութ բանից :

— Գետէ՞ք՝ պարսնն ինչու չի մեկնում , դարձաւ նա յանկարծ տանտիկնոյը — երևակայեցէ՞ք , նա վճռել է ինձ նկարել . նկարիչները տարօրինակ են , այնպէս չէ , — և նա կրկին բարձրածայն ծիծաղեց :

— Ի՞նչ խելացի միտք , որքա՞ն դիւրեկան , բացականչեց տանտիկնոյը :

— Եւ ես համաձայն եմ , աւելացրեց Մարգարիտը . — բայց եթէ լաւ չի եղել . . .

Նա մատը թափ տուեց չարածձի ձեռվ :

Ես մնացի զարմացած , նա այնպէս բացսիրտ , այնպէս համարձակ էր խօսում , որ մի բառէ ինձ թւաց , թէ ամսպատճառ կը պատմի զիշերուայ անցքը :

Ի՞նչ էր պատահել , ես նրան նայեցի խորհրդաւոր հարցական հայեացքով . նա անուշադիր թուզեց այդ :

— Հը , ինչո՞ւ էք լռել , դարձաւ նա դէպի ինձ , — չինի՞ թէ էլի վասնդաւոր բան կայ , ես միշտ վախենում եմ ձեր լուսթիւնից :

— Երևակայեցէ՞ք , տիկի՞ն , որ ձեր խօսակցութիւնը իմ լուսթիւնից այսօր աւելի վասնդաւոր է :

— Մի՞թէ :

Եւ նայն վայրկեանին զգացի , թէ ինչպէս սեղանի տակ մի փոքրիկ , շարժուն բան դիալաւ ոտքիս : Ես ցնցուեցի , սիրաս թափով ողմուեց ու թրթուց , կործքս բարձր ու ցածր եղաւ յանկարձական յուզունքից , զգացի թէ ինչպէս մի ախորժ ջերմութիւն ներքենց , ոտքիս ծալից բռնեց ու բարձրացաւ ելեկտրական հոսանքի պէս , վարակեց ինձ , հասաւ սրտիս , դէմքիս , որ երեխ սաստիկ կարմրեց : Այտեղա սկսեցին ալբուել : Զգուշութեամբ նայեցի , նա շարունակում էր հանդարտ ուտել իր կարկանդակը : Մի՞թէ զիսպուածով էր նրա ոտքը իմ ոտքի վրայ , մտածեցի ես , առանց շարժուելու . նա էլ անշարժ էր : Ես ուաքիս թաթը կամացուկ շարթեցի , նա յետ քաշեց իրը , մի վայրկեան յետոյ կրկին զրեց և սեղմեց բոլոր ուժով :

Կասկած չկար , դա մի չարածձի խաղ էր լուսթեան մէջ , մէկն այն խաղերից , որոնցով կանայք

զիտեն խնճմացնել տղամարդին։ Ես իրօք խնճմի պէս էի, էլ խօսել չէի կարող, բերանու ու կոկորդու չորացել էին, դողդովուն ձեռքով վերցրի առաջա դրած ջրով լի բաժակը և մի անգամից դատարեցի։ Նա նայեց ինձ ժպտագէմ ու խորամանկ։

— Ի՞նչ ծարաւ էք, լուսթիւնից է այդ, թէ խօսելոց, ես որքան դիտեմ՝ խօսելիս է մարդու բերանը չորանում, բայց դուք այսօր չատ էլ չէք խօսել, և նա կրկին քրքջաց ներվային ծիծաղով։

— Իմը լուսթիւնից է չորանում, որովհետեւ լուսթիւնը չատ անգամ աւելի ջանք է խուռամ մեզ զանից, քան խօսքը։ Գուցե երբէք ես արդպէս խոր կերպով չեմ զբացել լուսթեան իրզուի ուժը, ինչ պէս այժմ, աբ' կին։

Տանտիկներ գնաց դէպի խոռանոց, Մարդարիար շուալով յետ քաշեց իր ոտքը և ընդունեց միանու գաման սովորական լուրջ կերպարանք, կարծես նա իր բոլոր խաղերը դիտամամբ անում էր մի երրարդ անձի ներկայութեամբ։ որ ես անկարող լինէ պատասխանել։

— Դուք այսօր չափազանց տարօրինակ էք, ինչու էք այլպէս, հարցրի ես սիրահարների յասուկ շնուրով և գէպի առաջ կուացած սեղանի վրայ։

— Տարօրինակ . . . ինչու, ինձ թւռոմ է, որ ձեր հարցն է տարօրինակ, ամեն մի արտաքին կացութիւն, որ համապատասխանում է մեր ներքինիւ բնաւ տարարինակ չէ, դրա հակառակը՝ կեզծիք է, դուք այդ լաւ պիտի դիտենաք իրեւ գեղարուեասպէտ և փիլիսոփայ։ Երբեմն մի զիշերը մի կեանք է, մի զիստամծը՝ մի ձակասպիք։ Այս զիշեր ես այնքան ապրեցի։ Դուք լաւ քննէ էք։

— Ո՛չ.

— Ի՞նչո՞ւ, սովորաբար մարդ չի կարողանում քննել կամ վշտից կամ երջանկութիւնից, ձերը ո՞րն է։

— Դուք զիտեք, որ վերջինը . . .

— Ե՞րբ էք նկարելու ինձ, դիտմամբ խօսքը փոխեց նա։

— Երբ կամենաք, հենց այսօրուանից։

— Գիտէ՞ք ինչ կայ . . . Նա մի փոքր լուց, իր սովորականի պէս մազերը յետ—յետ տարաւ ձակատի վրայից, ապա շեշտակի նայեց ինձ, յետոյ կուացաւ դէպի առաջ ու փափուկով ասաց։

— Երեխայ' էք, երեխայ, երեխայ . . .

Տանտիկինը ներս մտաւ, ես մնացի կարկան ւած ու շփոթուած, իսկ Մարդարիար հանդարտ վերցրեց նոր բերած կերակուրը և սկսեց ուտել լուսթեամբ։ Ոչինչ չէի հասկանում, ար կնոջ վարձունքը իր անօրինակութեամբ ճնշում էր իմ միաքը մի բնոի պէս։ Ես պատրաստ էի ճշալ, աղերսել, որ այլպէս չվարուի, չխօսի, կարծես թէ մի զիշերուայ մէջ նա էլ խնճմացել էր քրոջ պէս։ Ճարս կտրած՝ սկսեցի սկզանի տակ փնդրել նրա ոտքը, որպէս զի սզմեմ ցաւեցնելու չափ, բայց չդտայ։ Նա երեխ այդ հասկացաւ և նայում էր ինձ մի հայեացքով, որ կարծես ուզում էր ասել՝ « չես դանի, չես գտնի»։

Ճաշը հազիւ վերջացած՝ նա շտապեց զուրս զնալ, ես հետեւեցի նրան։ Մանզուխների ծալրից նա վար նայեց դէպի ինձ։

— Եթէ այս զիշեր էլ դուրս գաք պարտէզ, ասաց նա ժպտելով, անպատճառ հարբուխ կը

ստանաք և յետոյ էլ ինձ նկարել չէք կարաղ :
— Բայց եթէ դուրս չգամ, կը խեզզուեմ :
Միիէ, և նա ծիծաղեց ու դուրս դնաց :
Ես մնացի մտքերի մէջ, նրա վարժունքից
ոչինչ չէի հասկանում, ինչո՞ւ էր այնպէս առօրինակ, ինչո՞ւ ոտքս սեղմեց, ինչո՞ւ ասաց, որ երեխայ
եմ, այս բոլոր հարցերը դառնում էին իմ գլխում .
և ես քարացած կանգնել էի սանդուխների առաջ՝
առանց կարողանալու վեր ելլել կամ դուրս դնող :
Յետոյ ինձ զբաղեցրեց նրա վերջին խօսքը .
ինչ էր ուզում ասել այդ կատակով, արդեօք դա
գիշերային տեսակցութեան մի հարաէր չէ՞ր, թէ՞ մի
անսիրա խաղ իմ այսքան բռնն զգացմունքի հետ :
Այսպէս թէ այնպէս՝ ես որտչեցի գիշերը պարտիղի
ծառի տակ սպասել նրան, թէկուզ մինչեւ լոյս և
դուրս դնացի, որ թափառելով սպանեմ անտանելի
գարձած ժամանակը :

IX

Աննման գիշեր էր, աստղազարդ ու բուրալից .
համատարած լուսթեան մեջ ծաղիկներն ու խու-
աերը կարծես մեղմիւ ճաշակում էին ջինջ ցողերի
կաթիչները և գլուխ գլխի տռւած, փափում խոր-
հրդաւոր ու անուշիկ : Բայց այդ ժամին աչինչ չէր
կարող ինձ գրաւել . հոգուս մէջ ոչ մի ազատ տեղ
չկար, ուր կարողանայի թէկուզ մի հատիկ վառ
աստղ տեղաւորել, այս զարմանալի գիշերը մի փոքր
վայելել : Սիրածս կինը իմ ամբողջ էոթիւնը լըց-

րել էր մի զգացմունքով, որ յիշեցնում էր միտող
մարմինները գուրգուրող արեւի ախորժ ջերմու-
թիւնը : Ինձ թւում էր, որ բնոթեան բազմաթիւ
գեղեցկութիւններից ես վերջապէս գտնել եմ այն,
ինչ նա կարող է տալ մի ընտրեալ մանկանացուք,
և ես չեմ կարող ուրիշ խմաստ փնտռել կեանքում,
աշխարհում, բաց ի այդ չքնաղ արարածը, որ յայտ-
նուել է իմ ճանապարհի վրայ :

Միեւնոյն նստարանի վրայ, միեւնոյն ծառի
տակ նստած՝ ես սպասում էի : Նա ոչ միայն ինձ
որոշակի չէր ասել, թէ գալու է, այլ նոյնիսկ ճա-
շից յետոյ ամբողջ՝ փակուել էր սենեակում առանց
դուրս ելնելու և ընթրիքն էլ քրոջ հետ էր արել ,
բայց ես սպասում էի : Հեռաւոր հաւատ ունեի ,
թէ նա անպատճառ կդայ , և գլխումս դառնում
էին այն բոլոր հանգամանքները, որոնք ամրապն-
դում էին իմ այդ հաւատը և հաստատում անորոշ
տարտամ յոյը : Սիրոյ իմ տրամաբանութիւնը պարզ
էր . ես ինքս ինձ մտածում էի, որ Մարդարիսն
իրաւունք չունի ինձ այսպէս չարչարել, որ այս
կացութիւնը մի ելքի պիտի յանդի վերջապէս ,
որովհետեւ մարդկային ուեւէ կարողութիւնից վեր
է ատնել այս բոլորը , իսկ թէ ո՛վ էր տուել ինձ
իրաւունք այդպիսի պահանջներ դնել, այդ ես չէի
քննում . սիրոյ ճանապարհի վրայ, երբ մի կին ու
մի մարդ հանդիպում են իրար, սովորաբար պարտ-
քերն ու իրաւունքները իրանք իրանց են սահ-
մանում . Մարդարիտը պարտական էր գալ, իմ
խորին համոզմունքն էր այդ, և ես սպասում էի :
Աչքս պարտիզի գրանիը յառած՝ ես նայում էի

անթարթ, այնքան ուշադիր հայեացքով, որ երբ յոզնած թերթերոնքներս մի վայրկեան բաց-խուժի էի անում, ես ցաւում էի կորցրած ժամանակի համար, կուզէի, որ աչքերս միշտ չուծ մնան, որ գուռը, ճանապարհը, այն միայն լուսաւոր պատուհանը հայեացքից չծածկուեն: Նայում էի, և սիրոս թաթառմ էր ամենաչնչին չշուկից, խոտերի ոլորցից, ծառի տերեւների թեթեւ սօսուփիւնից: Երբեմն մի որեւէ թուփ կամ մացառ ճանապարհի ուղղութեամբ ձեւափոխում, ընդունում էր կանացի կերպարանք, խոկեւիսկ նման, բարձրահասակ, հոյակապ, որ առաջանում էր գէպի ինձ թեթեւաքայլ, արտորանքով, առես շտապում էր, լարում էի տեսողութիւնս բիբերս պատուելու չափ, և պատկերը չքանում էր ինչպէս մի խորուսիկ սոսուեր:

Շատ գիշեր անցաւ, գիւղում ու շրջակայքում ճրագների մէկիկ-մէկիկ մարեցին, մէկ Մարդարափի լուսամուտը գեր շարունակում էր թարթել խուարի մէջ, մէկ նա էր հոկում մութ գիշերուայ վրայ: Ես ու այն լուսամուտը երկու խորհրդաւոր արարածներ լինելինք առես, նայում էինք իրար գիշերուայ միջնց և մտմտում էինք նոյն բանը: Կարծես թէ այն լուսամուտը գիտէր, թէ ես ինչո՞ւ եմ պարտիզում մնակ, երբ արար աշխարհ քնած է, ինչո՞ւ եմ նայում իրան, և ժամում ու թարթում էր մեզմիւ, որ սպասեմ: Անրուն, թափառական թռչնի պէս խաւարի մէջ, ծառերի տակ ծաւարած իր ուրբը այն ողորմած, մենաւոր լոյսի գութն էր շարժում և ես պաշտում էի այնքան առաջինքներով կրկնուելու մէջ, պատրաստում էի այդ խննթութիւնն անել, երբ յանկարծ պարտիզի գուռը կամացուկ բացուեց, եւ մէկը շտապ շտապ զէպի ի ինձ եկաւ, նա էր ... մի լայն շալ ծածկում էր նրա գեղեցիկ հասակը ուսերից սկսած մինչեւ ոտները, խկ հարուստ մա-

կում էր իր յետեւում իմ կեանքի նպատակը, իմաստը, ընութիւնից այնքան գժուարութեամբ իրշած գաղանիքը: Եւ այն ողորմած լոյսը յանկարծ մարեց, Մարդարփար հանգցրեց իր ճրագը, արդեօք պառկելու, թէ զէպի վար, պարտէցն իջնելու համար: Սիրոս թրթուաց ուժգին, յայն ու երկիւղը աղմէնիցին հոգիս միաժամանակ, իմ շուրջը խաւարը թանձրացաւ, ծանրացաւ և ճնշեց կուրծքս խեղզելու չափ: Գիշերը գարձաւ անտանելի, կարծես լուսթեամ ու խաւարի մէջ մի սեւ գաւադրութիւն էր կազմում իմ գէմ ինձ ոչնչացնելու համար: գալիս է, թէ ոչ, ինչպէս իմանալ, զգացի որ եթէ էլի մի վայրկեան շարունակուի այս կացութիւնը, ես կը ճշամ ցաւից կամ կը վազեմ, նրա լուսամուտի տակ կը կանգնեմ, կը պոռամ, թէ նա չի կարող քնել, նա չպէս է քնի, երբ ես այսպէս տառապում եմ, և էնց տեղն ու տեղը կը մեռնեմ հոգիս այրող կրակից: Եւ նա չեկաւ ... փշուած, լրուած յետ ընկայ, նստարանի թիկունքին յենուեցի, որ աւելի լաւ չնչել կարողանամ, որովհետեւ լայնարձակ երկնքի տակ օղը սպակառում էր, կուրծքս ուռաւ վշտից, պատրաստում էի ճշաւ խորունկ ցաւի ուժգնութեամբ կանչել՝ «Մարդարիտ, անողորմ», որ ձայնս հազար արձագանքներով կրկնուելը այս սարսափելի գիշերուայ մէջ, պատրաստում էի այդ խննթութիւնն անել, երբ յանկարծ պարտիզի գուռը կամացուկ բացուեց, եւ մէկը շտապ շտապ զէպի ի ինձ եկաւ, նա էր ... մի լայն շալ ծածկում էր նրա գեղեցիկ հասակը ուսերից սկսած մինչեւ ոտները, խկ հարուստ մա-

զերը արձակ ու ծփծփան փուել էին ուսերին ու թիկունքին՝ տալով նրան գիշերային ողու կերպարանք։ Նա հասաւ ու կանգնեց առաջս իր բարեձեւ հասակի բոլոր վայելչութեամբ և լուս նայում էր ինձ, ևս էլ լուս էի, նայում էի շուարած, ինչ անելու շիմանալով, լեզուս արձինի պէս ծանրացաւ քիմքիս տակ, պապանձուեցի, միայն պարզ լուսմ էի սրտիս զարկերը, ինչպէս մէկը ուժգին ու համաշափ հարուածելիս լինէր մի հողաթմրի վրայ խուլ թրմից հանելով։ Երկու քունքերիս երակները ուսեւ էին, և ականջներումն լաւում էր մի անորոշ բզզոց։ Հաւատացած եմ, եթէ նա մինչեւ լոյս այդպէս կանգնէր առաջս, ես կը մնայի լուսու ու քարացած, խօսելու միանդամայն անկարող։ Տիրոջ և սորկի վիճակի մէջ էինք, և տէրը նա էր։ Հասկացաւ իմ հոգեկան վիճակը, չդիտեմ, միայն նա նետուեց նստարանի վրայ, ինձ բոլորովն մօտիկ, այնպէս որ մնը ուսերը դիպան իրար, և ես միայն այժմ զբացի, որ դրսում խննաւ է ու ցուրտ, մի ցնցող դող անցաւ մարմնովս, և ես կծկուեցի։

— Իսկ ես կարծումն էի, թէ դուք այսօր կը մեկնէք, ասաց նա ժպտալով։

— Ի զուր, այդպէս կը վարուէր լուրջ, հասուն մարդը, իսկ ես երեխայ եմ։

— Մե՛ծ երեխայ։ — Ես նա ձեռքով կամացուկ խփեց ուսիս։ Ես խլեցի այդ փոքրիկ, քնքոյց ձեռքը, որ գողղողում էր բռնուած թռչնիկի պէս, և սղմեցի կրծքիս, ապա երկիւղածութեամբ մօտեցրի շրթունքներիս և ջերմ, ջերմ համբուրեցի։ Նա չդիմադրեց և անուշկ նազանքով դլուխը կը-

ապցրեց ուսիս, նրա հարուստ, փափուկ մազերը թափուեցին պարանոցիս, թիկունքիս ու կրծքիս վրայ՝ բարձրից գահավէճ ընկնազ ջրի յորձանքներով։ Անուշաբայր մի ամպէ էր այդ, որ ամբողջապէս պատեց ինձ, և ես վախենում էի շարժուել, որ չինի թէ նա ցրիւ գայ ու չքանայ ինչպէս մի երջանիկ երազ։ Եւ այն ամպը ցուրտ չէր, այլ ջերմ, մի վայրկեան առաջ մարմինս ցնցող դողը անցաւ, իմ վրա թափուած արդ կենդանի մազերի տակ ևս այրում էի ինչպէս բոցերի մէջ և ձեռքով խաղում էի նրանց անուշանոս փնջերի հետ, ինչպէս երիխան կը խաղայ հոսող վտակի ալիքներկ հետ,

— Երեխայ, երեխայ, մրմնջում էր նա փափրաւով, մեղմիւ օրօրելով իր գլուխն իմ ուսին և աչքերը երկինք յառած։ — Պետ ու երեխայ։ Այնքան աստղեր են նայում վերից, մեծ ու փոքր, վառ ու ազօտ, մենաւոր ու խումբ խումբ, և ոչ մէկը, որ կարողանար ասել, թէ ինչո՞ւ, ինչպէս միեւնոյն մարդը և՛ երեխայ է, և՛ զեւ, ինչպէս է լինում, որ երեխայի սեւ, խորոնկ աչքերի մէջ դեէ նստում, նայեացքը լոց է, բայց հոգին մանուկ։

Ես վերցրի մազերի մի փունջ և մօտեցրի ըբթունքներիս։ Նա աւելի մեծ փնջերով ծածկեց երես։

— Երեխայ ու զեւ, դա լաւ ծածկոց է աչքերիդ, իսկ ես կը նայեմ աստղերին, որոնց հետ խօսելիք ունիմ։ .

Բայց ես էլ նրան լսել ու հասկանալ չէի կարողանում, նրա ձայնը հնչուում ինչպէս մի քնքոյց մեղեղի, որի ամբողջութիւնն օրօրում էր ինձ ա-

նուրջներում, իսկ առանձին մասերը խուսափում էին իմ հասկացողութիւնից: Նրա բորբոքուած, ուժգին հեւքը, որ կրծքի խորքից դուրս էր գալիս, վչում էր վրաս, որպէս մի պարարիչ զօրութիւն, շայում էր գէմքս քնչքութեամբ և կարծես եթերացնում էր ինձ, և նրա նուրբ մազերը՝ մետաքսանման ու հոսանուա, որոնք քաւում էին գէմքիս ու պարանոցիս. իրանց բուրմանքով արբեցնում էին ինձ, և գիշերային այդ քար լուսթիւնն ու խուարը, այդ զարմանալի խուարը, որ հեւում էր մեզ հետ մեղմիւ և որ պատել էր երկրիս ինչպէս մի հակայական ծածկոց, որպէսզի մեր առանձնութիւնն ու սէրը աստղերից գուրս ոչ մի աչք չը տեսնի, այս բոլորը համակեցին իմ էութիւնը մի զգացմանքով, որ չի առուի, չի արտայայտուի, ինչպէս ամեն մի գեղեցկութիւն, որ վեր է աշխարհից, գունատ իրականութիւնից և մասն է տիեզերական անհասանելի գաղտնիքի: Ես էլ չը գիտէի, թէ ուր եմ, ի՞նչ եմ անոււմ, մարմին ունե՞մ, թէ եթերացել եմ, գետնի վրա՞յ եմ, թէ լուզում եմ անհասանութեան մէջ՝ յաւիտենական երջանկութիւնը գրկած: Գրտէի միայն մի բան, որ իմ բազուկների մէջ է մի գողգոջուն ու թանկագիւ էակ, մի հրեշտակ, իմ երազների, խոների, իմ բոց սիրոյ առարկան, մի չքնազ արարած, որ քնքոյ ամսիկ պէս կարող է եթերանալ ու փախչել, եթէ բաց թողնեմ մի վարկեան, և խենթի պէս համբուրում էի նրա շրթունքները, պարանոցը, այտերը, մազերը, ճակատը, ոզմում էի նրա գլուխը իմ կրծքին ջերմութեամբ, ասես աշխատելով լուծւել նրա հետ, կամ միասին ոչնչանալ ունայնութեան ծոցուկ, ես խեղդուում, մարում էի անչափ

երջանկութիւնից: Ես բոնել էի վերջապջս լնութեան սքանչելի երազը իմ բազուկների մէջ, զրկել էի այնքան տարիների իմ անորոշ, մութ իղձը, միշտ փախչող գաղտնիքն իմ կեանքի, գեղեցկութեան գերագոյն մարմնացումը և պատրաստ էի մեռնել հաղար տասապանքով, վերստին կենդանանալ, զգալ այդ գիւթիչ էակն իմ կրծքին, կրկին տառապել, մեռնել, զարձեալ կենդանանալ և այսպէս անվերջ, յափուեան:

Որքան երկար տեսեց այդ կազմաթիւնը, ես չգիտեմ, միայն աշշքի եկայ այն ժամանակ, երբ ես արդէն ուժասպատ էի սասամիկ յուզմունքից, իսկ Մարգարիտը հեկեկում էր իմ կրծքի վրայ յորդարցունքներով: Մի մութ սուզ էր այդ ինձ անյայտ պատճառից, և արցունքները՝ կարծես վաղուց հետէ զապուած՝ այժմ թափում էին, քանզելով իրանց պատուարը, և երջանկութեան արցունքներ չէին, նրանք այնքան խորից և այգպէս առատութեամբ չեն դալիս:

Յանցաւո՞ր էի ես, ասել չէի կարող, բայց աննկարազրելի ցաւի մի զգացմանք համակեց ինձ և սիրոս խայթեց ինչպէս թունաւոր օձ, այդ արցունքը մի հեղեղ էր կարծես, որ սրբեց տարաւ երջանկութիւնս իր վառ երազներով և ինձ բաժին մնաց միայն մի խոր ապաշաւանք, որ մի սառնարիւն գեռունի պէս անցաւ մարմնիս վրայով, լիզեց իմ թիկունքը ու սարսուեցրեց ինձ, և գլուխս յուսահատ ու վշտարեկ կախուեց կրծքիս արճիճի ծանրութեամբ: Կարծում էի, թէ վերջապէս հասկացել եմ այդ հրաշագեղ սիլինքսին, որ նրա հոգին իմն է, ինչպէս իմ սիրու և սակայն այս արցունքը վկայ էր, որ ես դարձեալ խարուեցի:

որպէս պատիժ՝ վաղը եւելի ես կը հեռանամ այս-
տեղից՝ տանելով սրտում ձեր նուիրական պատ-
կերը, որպէս արտասուող, վշտացած հրեշտակի, և
նրա հետ ամօթի մի խորունկ զգացմունք։ Եւ թող
այդ զգացմունքը շիկացած երկաթի պէս օրուգիշեր
այրի իմ սիրով միեւնոյն տեղում, որպէսզի երբէք
չմոռանամ, թէ ես մի օր, մի տեղ անվայել կեր-
պով վիրաւորել եմ մի քնքոյց սիրտ, մի աղնիւ-
կող, որին ես արժանի չեմ և որին չեմ հասկացել։

Նա ուղղուեց, աչքերը սրբեց, գողարիկ շար-
ժումով յետայետ ձգեց ճակատի վրայ թափուած
մազերը, ինչպէս նա սովոր էր անել, երբ յուղուած
էր վնտոմ, կամացուկ յինուեց նստարանի թի-
կունքին, կուրծքը դուրս ձգեց ու լայն շունչ ա-
ռաւ։ Ես լուռ հետեւում էի նրա բոլոր շարժում-
ներին և սպասում էի, թէ ինչ է լինելու, երբ
յանկարծ նա կրացաւ դէռի ի ինձ, երկու ձեռքով
բռնեց գլուխս, նայեց աչքերիս մէջ երկա՛ր-երկար,
ասես նրանց խորքը թափանցելու, նրանց ներսը
կարդալու համար նոյնիսկ զիշերային խաւարի մի-
ջից, ու կամացուկ ասաց՝ թափահարելով իր հե-
րարձակ, նազելի գլուխը։

— Օ՛, իմ գուքրիկ գեւ ու երեխայ, — և ապա
մի տաք ու երկար համբոյր դրօշմեց շրթունքնե-
րիս։ — ահա քեզ որպէս ապացոյց՝ թէ դու երե-
խայ ես և գեւ, — շարունակեց նա։ — դու ինձ
չես վիրաւորել, սի՛րելիս, միայն սէրը քեզ մոռաց-
րել է անգամ լրութեան փիլխոփիայութիւնը։ ին-
չո՞ւ չես ուղղում մտածել, որ տիեզերական հրաշա-
գործ ու սարսափելի լրութիւնից դուրս կայ և մեր

Այսպէս դժբաղդ էի, դեռ երբէք դուցէ այն-
քան մեծ, անխառն երջանկութիւնն այդպէս արագ
չէր թունաւորուել արցունքով, երբէք բախտ ու
դժբախտութիւնն այդքան մօտիկ չէին եղել իրար։
Թողեցի, որ նա հեկեկայ իմ կրծքի վրայ, իսկ ես
մտածում էի մէկը միւսից սև բաներ և նզովում էի
իմ ճակատազիբը։ Ի՞նչ զազտնիք ունի այս կինը,
Տէ՛ր Աստուած, մտածում էի ես։ անցեալները նա
խօսեց ինչ որ գերեզմաններից, զինի՞թէ՝ ճշմարիտ՝
ես առանց խմանալու խաղում եմ մի ազնիւ կնոջ
թուլութեան հետ, վիրաւորում եմ մի գերեզման,
որին նա ուղում է դեռ հաւատարիմ մնալ։ Կամ
զինի՞թէ ես վիրաւորել եմ նրան իմ բիրտ վար-
մունքով, իմ չափազանց տաք, չափազանց փութկոտ
համբոյրներով, որոնք չեն եղել քնքոյց, մաքուր,
ինչպէս լինում են սիրոյ առաջին արտայայտու-
թիւնները, երբ խօսում է միայն հոգին՝ մարդկային
զգայական բնութիւնից անկախ։ Ես քնքութեամբ
բարձրացրի նրա գլուխը և բռնեցի արցունքով
թրջուած ձեռքը ու մօտեցրի շրթունքներիս։

— Ներեցէ՛ք ինձ իմ կոպտութիւնն, ասացի,
իմ անվայել թուլութիւնը, ես այժմ տեսնում եմ,
թէ որքան դժուար է ճանաչել մարդկային հոգին, և
ճանաւան կնոջ հոգին։ ինձ թւում էր, թէ այն բո-
լորից յետոյ, ինչ մեր մէջ պատահեց, այդքան հա-
մարձակութիւն դուք ինձ կը ներէք, բայց նորէն
միսալուեցի և դժբախտ եմ։ Բաւականացէ՛ք այդքա-
նով, որ ես դժբախտ եմ, խորապէս դժբախտ, որ-
պէս երկնքից դահավիթուած, մերժուած մի հրեշտակ,
որ իր անկման սարսափի մէջ անգամ սպում է
սխալը։ Ես վիրաւորեցի ձեզ, այդ տեսնում եմ, և

խղճալի կեանքի լոռթիւնը, որ մաս-մաս ապրում
է հոգիների մէջ, ծածկում է մեզանից վտանգաւոր
ճշմարտութիւններ, մարդին մարդու համար դարձ-
նում է մի մութ առեղծուած, սրտերը պատում է
անթափանցիկ քօղով, և ամենքը
խարխափում են խաւարի մէջ, փոխադարձ յարա-
բերութիւնները դառնում են կեղծիք, և մարդիկ
իրար գտնելու, համաչելու համար քայլում են մի
մշտական մշուչի մէջ : Ե՞ն, թողնենք, դու լաւ ես
հէնց նրա համար, որ շատ բան չփառես, կեանքը
քեզ թւում է մի բաց պարտէզ, ուր ամէն ինչ
զրաւիչ է, երեխաններն այդպէս են, նրանց փոքրիկ
ճշմարտութիւնները իրերի սկիզբն ու վախճանն
են . երեխայ ես, իմ բարեկամ, հոգով՝ երեխայ,
աչքերով՝ զիւ :

— Իմ հրեշտակ, իմ կեանք ու արեւ, օ՛ խօ-
սիր, խօսիր այդպէս, դու վանում ես իմ հոգու-
մուայլը, իմ փշտուած երջանկութիւնը յետ տալիս
ես աղաչում էի քեզ միայն ներեւ ինձ, մի քանի
կաթիւ ցող կաթեցնել իմ ալրուած հոգու վրայ,
խոկ դու ինձ բարձրացնում ես զով բարձունքները
և դիւթական, երջանիկ օրօններով հանդիստ տալիս
իմ տանջուած, պապակուած սրտին : Խօսի՛ր, խօ-
սիր . քո շրթունքներով միշտ լուռ անհունութիւնն
է փափում իմ ականջն, և այժմ ինձ թւում է
է փափում իմ ականջն, և այժմ ինձ թւում է
թէ այլեւս ես երբէք մեռնելու չեմ : Առաջին ան-
գամն է քո շրթունքներից լուռ եմ «դու» և «սի-
րելի», և կարծես թէ դու ինձ տանում ես մի այլ,
անձանօթ աշխարհ, ուր մահը մեզ էլ երբէք հաս-
նելու չէ : Այս բոլորից յետոյ մի՞թէ ճշմարփ չէ
որ անհուն ժամանակներից երկու էակներ դեռ

աշխարհ չեկած անդամ՝ նշանակուած են լրացնելու
իրար, որ նրանց հոգիները թէկուզ բեւեսից բեւես
կը նետուեն գէտի իրար մի մայազթելի մղումով
և հէց այդ մղումն է, որ մարդկացին խղճուկ լի-
զուն անուանում է դիպուած :

Նա կրկին գլուխ զբեց ուսիս նազելի ձեւով,
ևս գրկեցի նրա պարանոցը քնքութեամբ : Երե-
խայի պէս մոռացած մի փոքր տուած թափած ար-
ցանքը, նա մեղմիւ մըմնչում էր ականչիս տակ
կարծես ինքն իրան .

— Ե՞նչ լսու է այսպէս, երբ ասազերը թար-
թում են, երբ խոսերը փափում են, և հոգիների
մէջ զաղանիք չկայ, որովհետեւ արցունքը լսու է,
նա հոգիների խաւարը լուսաւորով ջանն է, եթէ
մարդիկ բնաւ արտասուել չմանալին, նրանք
սարսափելի կը լինէն, և նրանց կրծքի տակ ո՛չ
մի հայեացք չէք թափանցիք : Մի՛ վշտացիր իմ
արցունքից, սրբելիս, երբ կուտուել է, լսու է որ
թափուի, մոռացիր հոգիս, մոռացիր, որ ես ար-
տասուեցիք :

— Ծ, Մարդարիտ, աղաչում եմ քեզ, մի՛
թող, որ մեր երջանկութեան վրայ թէկուզ մի
փոքրիկ ամու մութ կապի, չէ՞ որ դու տուում էր,
բութիւնը ծածկում է վտանգաւոր ճշմարտու-
թիւններ : միթէ՞ զիս ես արժանի չեղոյ քո ար-
ցունքի պատճանն իմանալու :

— Իմ արցունքն անցեալին է պատկանում,
իսկ մինք ալրում ենք ներկայալ, և նա աւելի
մօտ ողմուեց ինձ, զլուխը ուսիցս վար ձգեց
կրծքիս վրայ, մազերը փաթաթեց պարանոցիս և
չարաձնի ձեւով նայում էր երեխայ :

— Գեւ, գեւ, կրկնում էր նա գողարիկ եղա-

նակով, դու իսկեւսիկ գեւի աչքեր ունիս, մի հին գեւի, որին ճանաշում եմ մանկութիւնից: Երբ ես գեռ շատ փոքր էի, միշտ երազում էի, որ մի գեւ ինձ խլել է, փախցնում է, նա սարսափելի աչքեր ունէր. որոնք ինձ այրում էին բոցի պէս, ես սոսկում էի նրանցից, բայց աշխատում էի նայել և լ'ափանցել գեւի հոգու մէջ, տեսնել ինձ այրող բոցի աղբիւրը, քանի սարսափում էի, այնքան աւելի էի նայում: Գիտե՞ս, ես սիրում եմ սարսափը, մե՛ծ սարսափի: Եւ ահա այդ գեւը տաճում էր ինձ առասպելական գետերի, հովիտների, ձորերի, լեռների վրայով, որոնք բոլորն էլ նոյնպէս սարսափելի էին: Քանի հեռանում էինք դէպի այդ անծանօթ աշխարհի խորքերը, այնքան սարսափն աւելի էր մեծանում, ես դողում էի, բայց չէի ճշում, կ'ուզէի փախչել, ազատուել և կ'ուզէի մնալ միաժամանակ: Յետոյ մեր յետեւից սրարշաւ համում էր մի ասպետ, ողջ պատած զէնք ու զրահով, ահազին ու անհեղեղ, մի նոյնքան հսկայ նժոյզի վրայ. նա գալիս էր, սպանում էր գեւին և ինձ կրկին փախցնում դէպի անծանօթ աշխարհներ, ես դարձեալ դողում էի, բայց սինդ-սինդ կիշում էի նրա թիկունքին և մենք սլանումզ ինժ չգիտեմ ուր. և լաւ էր, լաւ էր այդ բոլորը, միայն սաստիկ ցաւում էի, որ ասպետը, գեւի պէս աչքեր չունի, հայեացքը հեզ է ու մեղմ: Այժմ նայում եմ և խաւարի միջից անդամ ես տեսնում եմ իմ կորցրած գեւի աչքերը, որոնք այրում են մինչ, ես տեսնում եմ նրանց բոցերի աղբիւրը. նեւ, դեւ:

Եւ նա փոքրիկ ձեռքով կամացուկ, քնքութեամբ խփեց երեսիս ու յետոյ մազերով ձածկեց:

իր երեսը: Այս բոլոր պատմութիւնը, նրա արածները, այդ չարաձմի և գուրգուրով ձայնը իսենթացնելու չափ գեղեցիկ էին, խօսքերը մարեցին իմ շրթունքներին, ես խսպառ մոռացայ ինձ, աղահութեամբ կրացայ նրա վրայ համբոյրի ծարաւով, բայց նոյն վայրկենին նա կատուի արագութեամբ թռաւ տեղից ու կանգնեց առաջու:

— Էսի՛ր, դու շա՞տ ես սիրում ինձ, ասաց նա:

— Ուզում ես՝ ասե՞մ խօսքերով.

— Ես ի՞նչ զիտեմ. ես հարցնում եմ՝ շա՞տ ես սիրում ինձ:

— Մէրը խօսք չէ, այլ գործ, ուստի ես լըռում եմ:

— Ի՞նչ կ'ուզէիր ինձ համար:

— Մի սարսափելի վասնդ, որից ես կարողանափի քեզ ազատել իմ կեանքի գնով:

— Բոլոր տղամարդիկ այդ առաւմ են:

— Ումանք կատարում են:

Նա լսեց մի վայրկեան. կամացուկ մոմեաց «Ժատաստի» Մարգարիտայի ողբից մի կտոր, ապայանկարծ հարցրեց:

— Եթէ ես մեռնեմ, դու շա՞տ կը տիրես:

— Ազաշում եմ, Մարգարիտ, սա ի՞նչ խօսակցութիւն է, ինչո՞ւ համար են այս տարօրինակ հարցերը, ինչո՞ւ այս սեւ քօղը, որ ձգուած է մեր յարակերութիւնների վրայ, չէ՞ որ առանց այն էլ քո կեանքի խաւարը իսեղդում է իմ հոգին:

Պատասխանի փոխարին նա կրկին նստեց կողքին, նազելի զրութեամբ զլուխը ձգեց կրծքիս ու երկար ժամանակ լուռ, մտախոն նայում էր սաստ-

զերին։ Ես նոյնպէս լուռ էի ու անշարժ, վախենում էի խանգարել նրա հմայիչ խաղաղութիւնը, միայն զբուշութեամբ խաղում էի նրա հարուստ մազերի հետ, որոնց մետաքսանման փնջերը իմ մատների արանքից հօսում էին ջրի ալիքների պէտ և մեղմով թափւում նրա կրծքին։ Ապա նա քընքոյց ձայնով սկսեց մի պատմութիւն, միշտ երաշ գուն, միշտ մելամաղճոտ, ասես աստղերի հետ խօսելիս լինէր։ Եւ այն պատմութիւնը գողտրիկ էր ու տիտոր, ինչպէս այն գիշերը, ուր խաւարի միջից աստղերը նայում էին, որպէս զի համարեն նախընթաց օրը մեռած կեանքերի լուռ միրիմները և նա ասում էր.

«Կիմ այնքան վճիտ էր, որքան մամնկան արցունքը, և այնքան խորը, որքան կապուտակ երկինքը։ Ոչ ոք չէր տեսել նրա անդունդները ոչ ոք չէր կարդացել նրա սիրաց։

«Յերեկը նրա վրայ լողում էին ձիւնափայլ կարապները, և արեւի շորերը սակեզօծում էին նրա կոհակները, գիշերը աստղերն էին նայում նրան և ժագում իրանց գողգոջոն պատկերին։

«Վերջալսոյից յետոյ անհամպիստ ու արկածախնդիր հովն էր փչում նրա վրայ, սիրահարի պէս մի մեղմ համբոյր էր խլում նիրհող գեղեցկունու երեսից ու խոյս տախիս դեպները։

«Եւ լուները, որոնք դրկած պահում էին իրանց հսկայ բաղուկների մէջ երկնքի այս չքնաղ աղջկան, խօժառում էին իրանց աշքերը և զուրութում չարաձնի ու յանդուգն հովին իրանց ձորերից։

«Եւ ամեն գիշեր, երբ նիրհում էին կարապները, այն լճի վրայ յայտնուում էր մի նաւակ՝ երկու-

փոքրիկ առագաստ բացած ինչպէս հրեշտակի թեւեր, և այն նաւակի մէջ նստած էին զոյգ սիրահարներ, նրանք սուրալով անցնում էին լճի երեսից զեպի խորքերը, ուր չեն հասնում լեռների սոտերները, ուր կարապները երթէք չեն լողում։

«Աստղերը վերից նայում էին նրանց, իսկ կարապները զարթում էին իրանց ականակիտ ու յեղյեղուտ անկազնում, փափսում սիրահարների գաղանիքը ու կրկին քուն մտնում՝ օրօրուելով գողգոջոն ալեւակների վրայ։

«Եւ մինչեւ լոյս այն նաւակը օրօրուում էր ջրերի վրայ՝ մասն ածելով խաւարի մէջ այն գաղտնի սէրը, և մինչեւ լոյս աստղերը ժպտում էին նրանց։ Նաւակն անյայտանում էր, երբ արշալոյսի շողերի տակ լիձը ցնցւում էր ու յօրանջում, երբ կարապները կրկին յուղում էին ալիքները։

«Հովը նախանձեց այդ չքնաղ սիրան, ուստի պայթեց, զոռ փոթորիկը ալիքներ հանեց, նաւակը խորուակեց, սիրահարներից մէկն անհետ կուրաւ, իսկ միւսին ձկնորսները կիսամեռ հանեցին ջրից։

«Եւ նա ապրեց, անընկեր ու վշտու, նորսէր չփնտուեց, ուս հագաւ, փակեց իր սրտի գընակները ու այնտեղ սղաց ու դդուեց իր զժրախտ սիրոյ լիշտակները։

«Եւ տարին մի անդամ Ամենայն սրբոց տօնին, նա կէս գիշերին գաղտագողի դուրս էր գտնիս, զգուշութեամբ իջնում լիձը՝ ձեռքին մի պատկը, զգուշութեամբ իջնում լիձը՝ ձեռքին մի պատկը լիշտակներից։ մեն-մենակ նստում էր մի նաւակ, առանց ճրագի և առանց առաջնորդի զիմում էր այնտեղ, ուր թաղուեց իր ընկերը։

« Դարձեալ աստղերը թարթում էին երկնքից ,
դարձեալ կարապները զարթնում էին իրանց ար-
ցունքէ բնի մէջ , օրօրում էին վշտով , կարծես
նրա հետ միասին սկսում էին ջրերի տակ թաղուած
սէրը :

« Վշտաբեկ սիրահարը հասնում էր այնտեղ , ուր
մի դժբախտ օր թաղուեց իր ընկերը , և մի ծանր
քար կապելով լերած պսակին՝ ձգում էր ջուրը ու
կրկին յետ գալիս , և այսպէս տարիներ :

« Եւ մի գիշեր փոթորիկը բարձրացաւ , աստ-
ղերը վերից ծածկեցին իրանց աշքերը , լեռները
զլուխները քաշ ձգեցին , և սգաւոր նաւակը խոր-
տակուած՝ իջաւ ալիքների տակ . այս անգամ զբյտ
սիրահարները ջրերի տակ գտան իրար » :

Նա վերջացրեց ու լոեց :

Խոկ իմ պատմութիւնը լաւն է , այնպէս չէ՝
ի՞մ փոքրիկ գեւ :

— Հրաշալի է պատասխանեց՝ բայց շատ է
տխուր , և չգիտեմ՝ ինչո՞ւ պատմեցիր :

— Երեխա՛յ , մեծ երեխա՛յ , բոլոր գերեցիկ բա-
ները միշտ տխուր են , գեղապաշտ ու երազող երե-
խա՛յ , չե՞ս նկատել , որ բնութեան սրանչերի տե-
սարանի հանդէպ մեր հոգին համակում է մի
անուշ , դուրեկան վշտով , մի քնքոյչ տխութեամբ ,
որից կ'ուղեինք երբէք չբաժնուել . իսկ երաժշտու-
թիւնը նոյնպէս չի յուղում մեր հոգին անհասկա-
նալի , բայց միշտ տխուր երազներով : Ես այն սի-
րուն ու տխուր բանը պատմեցի քեզ ասելու հա-
մար , որ եթէ ես խեղուեմ , դու այնպէս չես լայ :

— Ինչո՞ւ :

— Որովհեակ զու տղամարդ ես , խոկ տղամար-

դի սէրը , ես քեզ ասել եմ սւրիշ անգամ , նման է
մեղուի սիրուն դէսի ծաղիկը :

— Սիրոյ ուժգնութիւնը կապուած է միայն
սրտի հետ , սեռը չափ չէ :

— Ի՞նչ ես կարծում , ո՞վ է իմ պատմութեան
մէջ հաւատարիմ սպաւորը , կի՞նը , թէ՞ մարդը :

— Կենդանի մնացածը մի իսկապէս սիրող
սիրու էր :

— Կին էր , կին էր , ի'մ գեռուկ . . . Տղամարդն
այդպէս չէր վարուի , նա կը մոռանար և նոր բուն
կը հիւսէր . մեղուները . . . բայց և այնպէս . . .

Նա խօսքն ընդհատեց , յանկարծ փաթաթուեց
իմ պարանոցով պինդ , պինդ համբուրեց ու սոքի
թռոււ :

— Բարի գիշեր , էգուց միենոյն ժամին այս-
տեղ , գեւ , զեւ ու երեխայ :

Մինչև ես կարողացայ ուշքի գալ և ձեռքերս
տարածել խաւարի մէջ , նա փախաւ . առաջիցս
այծեամի պէս :

— Մարգարիտ . . .

— Սուս , ցանութիւն . վաղը գիշեր , — լուսեց
հեռուից , և նա անյայտացաւ իմ աչք'ց : Մնացի
տեղումն քարացած , կարծես թէ երագ էր այս բո-
լորը . մի քանի վայրկեան էր ինչ նա հեռացած էր
ինձանից , և արդէն ինձ թռում էր , թէ նա ընաւ
այնտեղ չէր եղել և թէ դա մի անկարելիութիւն է :
Նրա հմայիչ կանացիութիւնից մնացել էր իմ վրայ
միայն մի եթերային բան , շրթունքներիս վրայ
նկում էի նրա համբոյրի ջերմութիւնը , ականջումն
դեռ հնչուում էր նրա գուրգուրիչ ձայնը , դեռ չնչում
ից նրա մազերի բոյրը , այնուամենայիւ . ես
ից նրա մազերի բոյրը , այնուամենայիւ . ես

անուբջնիրի մէջ լինէի կարծես և չէի հասկանում
ինձ հետ կատարուածը: Հեռու խաւարի մէջ դարձ-
եալ լուսաւորուեց նրա ունիւակը, պատուհանից
լոյսը դարձեալ թարթում էր ինձ ժպտով, քաղց-
րութեամբ, նա էր, նա այնաեղ էր, այն լուսա-
մուտի յետեւում:

— Իմ հրեշտակ, իմ գողտիկ հրեշտակ,
մրմնջում էի ես, — բարի զիշեր... որքան երջա-
նիկ եմ...

X

Մենք յամբաքայլ ու անձայն գնում էինք ան-
տառային նեղ արահետով, մինչդեռ մեր զլիից
վեր, մեր շուրջը զիշերն իր սե, հսկայ թեսերը
տարածել էր ու թուխս նստել նիրհող բնութեան
վրայ: Մարզպարիսի մի տարօրինակ քմահաճոյքն էր
այս՝ ուշ զիշերով անցնել մօտակայ անտառով,
հասնել գետափին և այնտեղ ականջ գնել ջրերի
ձայնին զիշերային համատարած լուսթեան մէջ: Ես
համաձայնել էի կատարել նրա ցանկութիւնը,
որովհետեւ սիրուած կինը քմահաճոյք չտնի, որ մի
տղամարդ յանձն չառնի կատարել, մանաւանդ երբ
զա զրուանքի, միասին առանձնանալու, երազելու,
հետ է կապուած:

Ես քայլում էր իմ կողքից թեանցուկ, և ես
զգում էի, թէ ինչպէս տեհի սղմում է ինձ, ասես
վախենում է խաւարից: Մեր ճանապարհի երկու
կողմում բարձրանում էին հինաւորց կաղնիներ

ինչպէս լուս ողիներ, որոնք կարծես զարմանքով
էին նայում մեզ:

Լորին լուսթիւն էր:

Միայն երբեմն մեր ոտքերի տակ խշչում էր
մի չորացած տերե, կամ որևէ ծառի կատարից
թեթև ճոռոցով ցած էր ընկնում մի վաղաժամ չո-
րացած ոտա, որևէ զեռուն կամացուկ շարժում էր
մօտիկ մացանիրը, մի փոքրիկ կենդանի հալա-
ծական՝ կամ որսի յետեւից, յանկարծ յայտնուում էր
մեր ճանապարհի վրայ և շտապով կորչում հակա-
ռակ կողմը, ապա ամեն ինչ խաղաղուում էր ու-
լում: Եւ բնութիւնը դարձեալ գործում էր բնու-
թեան մէջ:

Ի՞նչ լաւ է, ի՞նչ լաւ է անտառը զիշեր ժամա-
նակ, փափառկով ասում էր Մարգարիտը: — մարդ-
ամեն վայրկեան սպասում է մի բանի, մի անորոշ
բանի, որից վախենում է և ուզում է... Գիտե՞ս
ինչ, այժմ ինձ թւում է, որ գու իմ մանկութեան
դեմ ես բոց աչքերով, բոց նչով ու խլած փախ-
ցնում ես ինձ ո՛վ գիտէ ո՛ւր... ի՞նչ լաւ է...
հասպա մէկ ինձ նայի՛ր, ա՛յ աչքերդ, դեկի աչքե՛ր...
բաց ես քեղանից չեմ վախենում: Ես կ'ուզէի այժմ
մի ուրիշ բան, մի մեծ սարասփ, օրինակ՝ որ այս
խաւարը յանկարծ կենդանանար, շարժուէր, գալա-
րուէր մի առասպելական հազարզիլսանի հրէշի սէս,
և ես սոսկումով ճշայի, փաթթաթուէի քեզ սփնդ,
սփնդ, ի՞նչ կ'ասես:

— Ա՛յ, գու ես այժմ երեխայ, դու դեռ ապրում
ես հէքիաթների աշխարհում փոքրիկ աղջիկների
նման:

— Ես միշտ այսպէս եմ սիրել հէքիաթների

աշխարհը . իրական կեանքը , ամենօրեայ չար ու
բարին շատ է խղճում ու ձանձրալի , նա ինձ եր-
բէք չի գոհացրել . ևս միայն ցանկացել եմ , որ իմ
կեանքն անցնի դիւթական հէքիաթի պէս , ուրիշ-
ներից բոլորովին տարբեր : Եւ իմ ցանկութիւնը
մասամբ կատարուեց , բայց իմ հէքիաթը սոսկալի
եղաւ :

— Եւ այդ հէքիաթը դու ծածկում ես ինձաւ-
նից մինչև այժմ , կարծես ես անարժան լինէի
ապրել քո անցած , գուցէ և ներկայ ցաւը :

— Լսի՛ր . — նա ուժով ցնցեց բազուկս ու
կանգ առաւ :

Մի թոշուն աղիողորմ ճիշ արձակեց սաղարթ-
ների մէջ , և նրա յուսահատ ձայնը ինչպէս մի
ցաւի մորմոք անցաւ քնած անտառի վրայով :

— Ի՞նչ է այս :

— Մի՛ թոշուն , մի դժբախտ արարած , որ
բուի ճանկն ընկաւ :

— Ահա դարձեալ մի սոսկալի հէքիաթ . . .
Մի՛թէ ոչինչ չի կարելի անել , իմ ընկեր , ասաց նա
յուզուած ձայնով :

— Ոչինչ . առաջ գնանք , անօգուտ է սպա-
սել , քնութիւնը լի է այդ ճիշերով . անխուսափելի
են նրանք :

— Զարհուրելի է քնութիւնը . . .

Մենք քայլեցինք դարձեալ , բայց Մարդարիտը
յանկարծ կանգ առաւ , նորից սղմեց բազուկս և
ականջ դրեց : Հեռու անտառի թաւուտի մէջ մի
գաղան տնքալ սկսեց , և նրա հեծեծանքները խուլ
արձագանքներով տարածուեցին անտառի մէջ :
Շառերը կարծես ցնցուեցին ու փսփսացին , նրանց

վրայ թառած թոչունները կամացուկ ձթնթացին ,
թւում էր նոյնիսկ , թէ խաւարը դողում է , այն
ասաբիճան սոսկում ունէր իր մէջ դժբախտ կենդա-
նու տնքոցը , որ շարունակում էր լսուել աւելի և
աւելի թուլանալով :

— Լսում ես , այս ի՞նչ է , իմ ընկեր , — մըր-
մընջում էր Մարդարիտը յուզուած . համարեա լա-
ցակամած :

— Նոյն բանն է , սիրելիս , ինչ լսեցինք քիչ
առաջ . տարբերութիւնն այն է , որ այն՝ ծառի վրայ
էր կատարում , այս՝ ծառի տակ . դա մի անմեղ
կենդանի է , գուցէ և մի գաղան , որին յօշոտում է
իրանից աւելի մեծը :

— Բզկառում , ուտում են իրար , ո՛չ , զար-
հուրելի է անտառը գիշեր ժամանակ , նրա հէ-
քիաթները լի են սոսկումով , իսկ խաւարի մէջ
գործող կեանքը այստեղ ահաւոր է : Յետ զնանք ,
սիրելիս , և թող մեղ չնանեն այդ ձայները , ու-
րոնք խեղդում են մարդի հոգին :

Ես զգացի , թէ ինչպէս նրա թեւը դողում էր
իմ թեւի տակ , նա աւելի ու աւելի մօտ էր սըզ-
մըրում ինձ : Քիշ յետոյ մենք դարձեալ պարտիզի
ծառի տակ էինք , նուիրական դարձած նստարանի
վրայ : Մարդարիտը երկար ժամանակ դեռ չէր
հանգստանում սաացած ցնցող տպաւորութիւննե-
րից . նա լուռ էր :

— Ինչո՞ւ չես խօսում , հարցրի ես կամացուկ՝
վերցնելով նրա ձեռքը . և մօտեցնելով շրթունք-
ներիս :

— Ես դեռ մտածում եմ անտառի գիշերային
հէքիաթների մասին :

— Ի զուր, դա կեանքն է, ևս ու դու ոչինչ
փոխել չենք կարող :

— Զարհուրելի էին այդ աղաղակները . ևս
անտառը գիշեր ժամանակ աւելի զբաւիչ . աւելի
գեղեցիկ էի երեւակայում .

— Եա զարձեալ գեղեցիկ է, բաց լուս-
թեան մէջ :

— Այդ քո լուսթիւնը . . . որով աշխատում
ես ամեն ինչ բացարել բնութեան մէջ, դու մո-
ռանում ես, որ տառապող կենդանին իր ճիշով
յայտնում է միայն մի չնչին մասը այն ահապին
սարսափի, որ գործում է քո լուսթեան մէջ : Հա-
ւատա՛, բարեկա՛մ, որ եթէ աղաղակը չինի, տա-
ռապանքի սարաավն աւելի ահաւոր կը լինի :

— Լուսթեան մէջ գործող սարսափը յարաբե-
րական հասկացողութիւնն է, հոգի՛ս . աիեղերքի
ամբողջութիւնը անհատական ցաւերի գիտակցու-
թիւնը չունի, նա լուս դիմում է զէպի մի ան-
յայա գերագոյն նպատակ. անհատները դիպուած-
ներ են նրա համար . յաւիտենականութիւնը վայր-
կեաններ չդիմէ : Բայց թողնենք այդ, հոգի՛ս,
այսպիսի վէճի ոչ տեղն է և ոչ ժամանակը, և ես
էլ անկարող եմ շարունակել, որովհետեւ իմ սի-
րած էակի շրթունքներով ինձ համար միշտ ճըշ-
մարտութիւնն է խօսում : Այդ բոլորի փոխարէն
պատմիր ինձ ինդրում եմ քո ներքին ցաւը . ին-
չո՞ւ երեւնն այնքան տարօրինակ ես դու, ինչո՞ւ
էիր լալիս երեկ գիշեր և խոյս տուիր պատասխա-
նից : Հաւատա, միրելիս, որ ես չեմ կարող հան-
գըստանալ, մինչեւ այս բոլորի վրայ ձգուած քօղը
չբարձրացնես : Ես գեղ պաշտում եմ, բայց դու

ինձ համար մի դիւթական, մի սքանչելի զիշեր ես,
ուր լուսոց մի չող չկայ իմ ուղին լուսաւորելու
համար :

— Ես երկար հաւատացած էի, որ մենք կը
բաժանուենք՝ առանց որ ես պէտք զգամ պատմե-
լու քեզ իմ կեանքը . այժմ տեսնում եմ, որ
սիսալում եմ : Դու իրաւունք ունիս, երբ գետը
յորդանում է, նա պատուարներ տանել չի կարող .
և երբ երկու սրտեր զեղւում են իրար մէջ, նրանք
բաց են անում փոխադրձ գաղտնիքները : Ես գեղ
ձանաչում եմ, պէտք է որ դու էլ ինձ ձանաչես :
Զգում եմ, որ այս հանդիպումը սովորականներից
չէ, ձակատագրական է համարեա : Իմ անցեալը մի
հէքիաթ է, որ այնպէս նման է քիչ առաջ անտառի
պատմած սոսկալի հէքիաթին : Իմ կեանքի, իմ
բախտի հետ կապուած մի լուսթիւն կայ, մի ծանր
լուսթիւն, որ այնպէս ծանրացած է իմ խղճի վրայ,
նրա մասին ոչ թէ խօսել, ալլ նոյնիսկ մտածելն
ինձ համար ծանր է, բայց դու իրաւունք ունիս
այն իմանալու : Չվշտանաս սակայն, եթէ այդ
պատմութիւնը քո երջանկութեան վրայ ոչինչ չա-
ւելացնի : Ճշմարտութիւնը որքան անդամ միայն
դառնութիւն է բերում մեղ :

— Խօսիր, խօսիր, իմ աննման հրեշտակ, ինչ
և յալանելու լինիս, իմ վիճակը ձգուած է :

« Հօրս չեմ յիշում, այսպէս սկսեց նա՝ հսկոց
հանելով ու յետ—յետ տանելով իր ձակատի խո-
պանները . . Ես երկու՝ և քայլս չօրս տարեկան էր,
երբ նա մեռաւ : Մեղ զաստիարակողը և իննանողը
եղել է մայրս, մի սիրող, քնարոյ սրափ տէր մայր,
որ մեզ համար ոչինչ չի ինսայել : Բարեկախտաբար

հայրս, որ մի յաւանի բժիշկ է եղել, այնքան միշտներ թողել էր, որ մնաք նիւթական դժուարութիւններից միանգամայն աղատ՝ անկարօս ապրել կարողանալինք:

Եսու քոյրս չնորդիւ մօրս քնքոյշ հոգածութեան՝ լաւ գասափարակութիւն և կրթութիւն ստացանք և համարեա միաժամանակ հասած աղջիկներ էինք: Ինչպէս դու էլ նկատել ես, մնաք՝ ես ու քոյրս խիստ նման էինք իրար. ացդպէս ենք եղել դեռ շատ վորքից, մեր ծանօթները յաճախ դժուարցել են մեզ որոշել իրարից: Սակայն այդ նմանութիւնը միայն արտաքուստ է, մեր բնաւորութեան, մեր հաշակիների ու հասկացողութեան, առհասարակ մեր ներքինի մէջ երրեք որևէ նմանութիւն չի եղել: Ինութեան մի տարօրինակ խաղ էր կարծես մեր արտաքին այդ ապահցուցիչ նմանութիւնը և մեր ներքինի նոյնքան ապահցուցիչ ապրերութիւնը: Եւ այդ տարբերութիւնը միշտ յօդուտ ինձ չի եղել, որքան քոյրս լռակեաց էր, լուրջ, խոճուն, իրերի վրայ պարզ հայեացքի տէր, նոյնքան ես թեթև էի, շատախօս, երազող, յափշտակող, ինչպէս մի միամիտ երեխայ: Եւ իմ երազները . . . բոլորը թեւառոր, բոլորը վարդագոյն, անօրինակ: Կեանքն ինձ թւում էր որպէս հաճելի երազների, գրաւիչ հէքիաթների մի անվերջ շարք: Երէկ քեզ պատմեցի, թէ ինչպէս երկար ժամանակ հաւատացած էի, որ ինձ կը փախցնի մի դե կամ մի առասպեկտական սպայ ու կը տանի հետու, հետու, և այդ անորոշ, խուլ հետուները ես կարողանում էի երեւակայել, ապրում էի նրանցով: Քանի—քանի անզամ ես պարտիզում, ծառի տակ նստած

մոռացել եմ գիրքը ծնկներիս վրայ, նայել եմ վերև, երկնքից սահող ամպերին և դրանց հետ տարուել մի որիշ հրաշալի աշխարհ, ուր ամեն բան տարբեր է մերինից:

Մայրս ու քոյրս ինձ սաստիկ սիրում էին, գուրգուրում էին վրաս՝ որպէս տան փոքրի, այնպէս որ ես մի մօր անգ՝ երկու մայր ունէի: Քրոջս սէրը մանաւորապէս այնքան բուռն էր իր արտայայտութիւնների մէջ, որ յաճախ համառում էր անձնուիրութեան: Նա ընդունակ էր ամենատեսակ զրկանք, նեղութիւններ յանձն առնել՝ ինձ գոհ ու երջանիկ դարձնելու համար: Յիշում եմ, ես մի երջանիկ դարձնելու զարդարութիւնից: Չնայելով դարձնէր վշտից ու յաւսահասութիւնից: Չնայելով որ մնաք այնպէս նման էինք իրար, բայց նա մըշտ կ'աշխատէր ինձ աւելի գեղեցիկ դարձնել մի աւելորդ ժաղաւէնով, մազերի մի առանձին հիւսուածութիւնով: Նա զուարձանում էր ինձանով, իր մասին կարծէք բնաւ չէր մտածում, երջանիկ էր ինձ անելով ուրախ, կայտառ: Նրա և մօրս քնքոյշ վերաբերմունքը կամաց ինձ դարձրին է՛լ աւելի պահանջող, չարածձի, երես առած, նոյնիսկ եսասէր: Ես սովորեցի շարունակ զոհեր ընդունել առանց երրեք մոտածելու զոհաբերութեան մասին: Ինձ թւում էր, որ ուրիշ կերպ չի էլ կարող լինել, որ իմ մերձաւորները պէտք է ինձանով զբաղուեն, կատարեն իմ ամենատեսակ հաճոյքները, սիրեն ու փաղաքչն ինձ, իսկ ես ապրեմ իմ ուզածի պէս, անհոգ ու աղատ ինչպէս թռչունը եթերի մէջ:

Եւ ես ապրեցի ու մեծացայ ինչպէս ազատ ու անհոգ թռչուն . . . զա կեանք չէր, ի՞մ ընկեր, այլ մի գողարիկ երազ . . .

Մի անգամ մեր տուն եկաւ մի ծովային սպայ՝
մեր հեռաւոր ազգականի որդին։ Նա ջահիլ էր ու
սիրուն, բարձրահասակ, թիկնաւէտ, միշտ ուրախ,
զուարձախոս։ Ես չգիտէի, թէ նա ինչո՞ւ է եկել,
բայց ուրախ էի և երկխաղի պէս յուզմունքս թագ-
ցնել չէի կարողանում։ Ինձ սասատիկ գրաւում էր
նրա յաղթ իրանը գեղեցիկ համազգեստի մէջ, նրա
վճռականութիւն ու յանդգնութիւն արտայայտող
դէմքը, և ամենից աւելի նրա ուրուն բեխերը,
որոնք միշտ այնպէս վեր էին ցցուած և նրա կեր-
պարանքին տալիս էին կորիչ արտայայտութիւն։
Եւ այն ժամանակ ես սասատիկ սիրում էի, որ տղա-
մարդը կարիչ, արի տեսք անհնայ, որ նրա շար-
ժումները, քայլուածքը զօրեղ բնաւորութիւն և ոյժ
արտայայտեն։ Իմ մեծագոյն հաճոյքն էր ինձ երե-
խայ և հովանաւորուած զգալ մի լաւ տղամարդի
մօտ։ Ինչո՞ւ միայն ես, ինձ թւում է, որ իւրաքան-
չիւր ինո՞ջ մօտ իդէալը հումկու, թիկնաւէտ ու-
րաբեճեւ տղամարդն է, առնական էներգիայով լի։
Ես չեմ ուզում ասել, որ կինը միանգամայն աչք է
փակում ուժեղ սեսի հոգեկան, մտաւոր կարողու-
թիւնների վրայ, բայց անսպայման է, որ ոյժ ու-
զօրեղ առնականութեամբ չնչող օրդանիզմերը հա-
մարեա անդիմաղբելի գրաւչութիւն են ներկայա-
ցնում կանանց համար։

Դեռ առաջին գիշերը, երբ ամենքը քննեցին և
ընդհանուր խաղաղութիւն իջաւ մեր տան վրայ,
ես երկար ժամանակ անքուն էի և լուրջ կերպով
մտածում էի, թէ մի գուցէ մեր հիւրը, այս անձա-
նօթ ու գեղեցիկ տղամարդը եկել է յատկապէս ինձ
փախցնելու համար։ Ես հաճոյքով երեակայում էի,

թէ ինչպէս նա կը մօտենայ, խաւարի մէջ խար-
խափելով կը գտնի ինձ, ես կը գոզամ, սիրաս կը
բարախի, բայց չեմ ձշայ, յետոյ նա իմ ձեռքից կը
բռնի, կը բարձրացնի, ես վախվիսելով կը հետևեմ
նրան, մենք գտրս կը գանք, կը նատենք դրանը
սպասող կատաղի նժոյզի վրայ և կը սլանանք հե-
ռուու, հեռու, գէպի մի անձանօթ աշխարհ, ուր նա
կը փակի ինձ մի դիւթական դղեակի մէջ . . .

Ցերեկներն ամբողջ ես նրա հետ էի անցկա-
ցնում մտերմարար։ կարծես մնաք նին ծանօթ ըն-
կերներ լինէինք։ Եւ նրա հետ վարում էի այն-
պէս, ինչպէս երեխանները զիտեն վարուել իրանցից
մնձերի հետ, երբ նրանց երես են տալիս ու փա-
զաքշում։ Ամենակարճ ժամանակում ես այնքան
համարձակութիւն ստացայ, որ երբ նրան գտնում
էի պարտիզում նստած, յետելից գաղտազողի մօտե-
նում էի, աթուզ թիկունքից քաշում ու վայր գլո-
րում, կամ ձեռքից խլում փախցնում զանազան
իրեր, կարդալու գիրքը, բաճախ գլխարկը։ Նա ինձ
հալածում էր, ես քրքջալով ու հետևով փախչում
էի շտապով և թագ կինում պարտ զում, յանկարծ
յացտնում էի մի ուրիշ անկիւնից, պինդ—պինդ
քաշում մազերը կամ բեխերը և կրկին անյայտանում
անտառային փէլափի նման։ Նա թոյլ էր տալիս ինձ
անել իր հետ ինչ կամենամ, նոյնիսկ օժանդակում
էր իմ մանկական չարութիւններին, միայն յաճախ
գալու թափ էր տալիս վրաս և ժպտուով ասում։
մատը թափ էր տալիս վրաս և ժպտուով ասում։

« Զարաձձի՛, թէ կը բռնեմ . . . »

Եւ մի անգամ պարտիզի՝ մի հեռաւոր անկիւ-
նում՝ ժառերի տակ բռնից ինձ, գրկեց իր ուժեղ
քաղուկներով և պինդ համբուրեց։ Միայն մի վայր-

կեան այդ ժամանակ ևս նրա աչքերին նայեցի ու ստատիկ կարմրեցի... բայց այսուամենայնիւ այդ համբոյըն ինձ չխառնեցրեց, ևս երկար, երկար ծիծաղեցի և այսուհետեւ նրան աւելի էի չարշարում։ Միայն լաւ միշտմ եմ, աշխատում էի էլ երրէք չունուել, որ նա այնպիս համբուրի ինձ, թէ կ'ուզէի, որ նա կարողանար ինձ բանել հակառակ իմ ջանքերի. ծայրահեղ դէտքում վճռել էի, եթէ այդպիսի բան նորից պատահէր, չսայել նրա աչքերին, նրանց արտապայտութիւնը համբոյը վայրկեանին մեր խաղերին նման չէր, սական կասկած չկար, որ կը նայեի: Ես միշտ այդպէս եմ, սիրում եմ նայել այս ամենին, ինչից վախենում եմ... եթէ կարելի լինէր մարդ տեսնել առանց իսկոյն մեռնելու, ևս հաճայքով կը փնտրէի նրան...»

Քեզ ասացի, որ ես սիրում եմ սարսափը։

Մայրս իմ բորբ չարտեթիւնների ու խաղերի համար կամ ժպառում էր՝ երբ նկատում էր, առանց խստաթեամբ արգիլելու։ Տարօրինակ էր մանաւանդ քոյրս, նա հեռու նոտած՝ ժամերով դիտում էր մեր խաղերը, լուսթեամբ ժպառում էր իմ արկածների վրայ, յետոյ երկար մնում էր մտախոհ։ Ես շատ ուշ նկատեցի այդ և հաւատացած էի, որ քոյրս չի սիրում սպային, մանաւանդ՝ որ հետը խօսելիս կարձ պատասխաններ էր տալիս և գլուխը քաշ ձգում։ Քրոջս այդ վերաբերմունքը որքան ինձ անհասկանալի էր, նոյնքան էլ դուր չէր գտալիս, որովհետեւ ևս մեր հիւրին համբում էի շատ լաւ մարդ, ևս ընկեր, որի հետ կարելի էր շատ հաճելի ժամեր անցկացնել։ Ցաւում էի քրոջս համար, բայց ևս երջանիկ էի և բնաւ չէի մտածում իմ վարմունքի մէջ փափսիութիւն առաջ բերել։

Մեր հիւրը ամբողջ ամառ մնաց մեր մօտ։ Նա գիշերները միայն անց էր կացնում հիւրանոցում, իսկ ցերեկները մեր տանը։ Ժամանակն անցնում էր ուրախ, մենք յաձախ զբասնքներ էինք կաաարում քաղաքի արջակայքում ոտքով, ձիով։ Ես զժողոն էի սական, որ նա ինձ չի փախցնում զիշերով։ Ճի նատելիս՝ քաղաքից դուրս, երբ մեր առաջ փուռում էր լայնարձակ հորիզոնը, այն անորոշ հեռուն, որից զէնը մարդ սիրում է երեւակայել խորհրդաւոր աշխարհ, ևս լայն շունչ էի առնում ազատ կրծքով, կարծես եթերանում էի թամբի վրայ և քիչ մնում էր մօտենամ իմ սիրուն ասպետին, կամացուկ փրսփամ « էյ, քշի՛ր, փախչենք յի՛մար »... Եւ կը փախչէի, եթէ նա քշէր։

Տղամարդի հետ փախչելու իմ այդ բուռն ցանկութիւնը միանգամայն երեւական էր, ամուսնութեան մասին այդ ժամանակ ևս բուրջ հասկացողութիւն չունէի. զիաէի, որ հէքիաթների մէջ սիրուն աղջիկներին փախցնում են... և ես սիրուն էի։ Բայց թէ ինչո՞ւ են փախցնում, ևս այդ մասին ընաւ չէի մտածում։ Երիտասարդ սպային չէի սիրում, կամ թէ սիրում էի այսպէս, ինչպէս երեխան կը սիրէ իրանից մեծին, որ փաղաքշում է, գլուխում է իրան։ Գուցէ և կար սեռական բնազգը, որովհետեւ ես սաստիկ ուզում էի նրա հետ լինել, բայց գիտակցութիւն, կնոջ պէս սիրուելու պահանջ չէի զգում։

Ես տասնեւեց տարեկան էի։

Մի օր մայրս ինձ առանձնացրեց և ասաց ժպտալով։

— Դիտե՞ս, Մարգարիտ, մեր հիւրը քեզ ուզում է, ի՞նչ կ'ասես։

— Ի՞նչպէս թէ ուզում է, բացականչեցի ևս
դժկամակութեամբ:

— Ուզում է քեզ հետ ամուսնանալ, քո ձեռքն
է խնդրում, չե՞ս հասկանում:

Ես հասկանում էի, բայց կարկամուեցի, կար-
մրեցի և մի վայրկեան լուս կացայ՝ գլուխս քաշ
ձգած: Մայրս սպասում էր և ձեռքով շոյում
մաղերս:

— Թող փախցնի, ասացի ես յանկարծ՝ գլուխս
բարձրացնելով ու փախսայ, հեռացայ մօրս աչքից: Առաջին անդամ իմ կեանքում ես ամաչեցի մօրիցս
և առաջին անդամ այդ պատճառով լացս եկաւ, ես
թագնուեցի և լաց եղայ: Ինչո՞ւ էի լալիս, չղիտեմ,
կարծեմ նրա համար, որ իմ մանկութեան վաս ե-
րազները, գողորիկ հէքիաթների հետ կապուած
վարդագոյն յայսերը ցնդւում էին անդառնալի կիր-
պով: Այնքան տարիներ իմ սպասած, երազներիս
մէջ փայփայած « ասպետը » եկել էր վերջապէս և
ինձ չէր փախցնում, չէր տանում բիւրեղեայ պա-
ւասները մութ անտառների, խոր ձորերի բարձր
լեռների միջով, այլ « ուզում էր » . . Դա իմ ա-
ռաջին և խիստ դառը յուսախափութիւնն եղաւ,
այդ օրը ես ոտք դրի կեանքի չէմքին և արդէն
ովրում էի փախչող մանկութիւնս, մօտիկ անցեալի
դիւթական հէքիաթները, որոնք այնքան տարիներ
փայփայել էին իմ երևակայութիւնը: Արցունքներս
գեռ վճիռ էին, նրանց ազրիւրը հոգուս խորքում
գեռ չէր պլասորուել, բայց անորոշ կերպով զգում
էի, որ կեանքը հէքիաթ չէ, երազներն այնտեղ
ցնդւում են, որպէս արշալոյսի վաղանցուկ գոյներ:
Սիրտս փղձկաց մի անորոշ ցաւից, առանց իմանա-

լու ես կատարում էի կեանքի սուզը, ես ողբում
էի այն մեծ ցաւը, որ մաս-մաս ապրում է արա-
րածների մէջ: Եւ լացեցի՛, լացեցի՛ . . .

Չեմ երկարացնի. ես նրա հետ այնուամենայ-
ն և նշանուեցի կարծես հանաքով և յետոյ ամուս-
նացայ գարձեալ կարծես հանաքով: Մայրս ցանկա-
նում էր, որ ես ամուսնանամ, որովհետեւ հաւասա-
ցած էր, թէ առելի լաւ ընտրութիւն անել անկա-
րելի է, վեսացուն հարուստ էր և լաւ ծագումից,
լաւ էլ ապազայ ունէր առաջը: Ես էլ սաստիկ
շասպում էի իմանալ, թէ ինչ առել է նշանուած
շնորհնել մի աղամարդի հետ: Իմ վեսացուն ինձ հա-
մար ոչ թէ սիրելի, այլ պարզապէս հետաքրքիր
էր: Փոքր ժամանակ ես միշտ անհամբեր էի իմա-
նալու հէքիաթի վախճանը, այժմ էլ աշխատում էի
շուտով իմանալ, թէ ինչով է վերջանալու իմ սե-
փական հէքիաթը:

Քոյրս քանի գնում մոռայլում էր և անձնաւ-
առուր լինում մի մութ թախծի: Նշանադրութեանս
երեկոյին նա այնքան տիսւր էր, որ ես մօտեցայ
նրան և սասցի յուզուած:

— Կլա՛րա, հոգիս, ծմարիան ասա ինձ, աղա-
չում եմ, զու չես սիրում եւան, չես ուզում, որ ես
նրա հետ ամուսնանամ, այնպէս չէ: Երեխ դու մի
բան զիտես, ինչո՞ւ ես ծածկում ինձանից: ասա՛,
ե ես յետ կը կինամ, ես քեզ այնպէ՞ս եմ սիրում:

— Երեխսայ, պատասխանեց կլարան ժամա-
ւով, նա այնպէս լաւ մարդ է: Եւ յետոյ ինձ գրիեց
ու պիստ, պիստ համբուրեց: Նա երբէք ինձ առելի
չերմ, առելի անկեղծ համբուր չէր տուել: Ես նրա
հոգին զգում էի նրա ըրթունքների վրայ, նրա

համբոցի մէջ։ Եկեղեցի գնալուց առաջ նա դարձեալ գրկեց ինձ ջերմութեամբ և համբուրեց երկար, երկար ու ասաց։

— Բախտաւոր լինիս, քոյրիկ, օ՛, ինչպէս եմ ուզում, որ դու բախտաւոր լինիս... աշխարհում այնպէս դժուար է երջանիկ լինել... .

Իմ ամուսնութիւնից յետոյ քոյրս խոպանուայլուեց. նրա ժափար գարձաւ աւելի և աւելի սակաւ, առաջարկի, իսկ թափիծը մշտական։ Մայրս անհանդիսաւ էր, բայց նա էլ ինձ պէս ոչինչ չփափէր։ Կլարան ժամերով մնում էր մապրատ, ասես մի վերին աստիճանի ծանր խնդրի վճռով զրադաւած, յաճախ մեն-մենակ թափառում էր պարտիզում, աշխատելով աչքի չընկնել. իսկ երբ ես ու ամուսինս հանդիպում էինք նրան զրօսանքների ժամերին, նա մեզ դիմաւորում էր առաջարկի ժապով, աշխատում էր կատակել մեր հասցեին և իսկոյն մի որևէ պատշաճ պատրուակ էր գտնում սեղանից հեռանալու և կրկին իր սենեակում առանձնութեան անձնատուր լինելու համար։ Եւ այդ բոլորը նա կատարում էր այն աստիճան քաղցր վարպետութեամբ, որ ես չնայելով իմ կասկածներին՝ ստիպւած էի մտածել, թէ գուցէ նա հեռանում է իմ և ամուսնուն՝ իրեւ նորապատիների՝ միայնութիւնը չխանգարելու համար։ Մի քանի անգամ էլ հարցեր տուի. նա միշտ կարողացաւ վերին աստիճանի հանգստացուցիչ պատասխաններ գտնել նոյնիսկ մեզ հետ միասին յաճախակի պարտէղ դուրս եկաւ, զրօսանքի գնաց և դրանով ամեն կասկած վարատեց։

Հարսանիքցս մի ամիս յետոյ մեկնեց նաւա-

յին վարժութիւններին մասնակցելու, որից յետոյ նա պէտք է գար փոխադրելու ինձ իր ընակավայրը։ Այս վաղաժամ անջատումը, որ տեսելու էր ամսից աւելի, ինձ ամենենին տիրութիւն չպատճառեց։ Զգում էի, որ ես նրա հետ ընտ կապուած չեմ այն քննոյց զգացմունքով, որ էլ աւելի ուժին է դառնում անջատման ժամերին, և որ այնպէս կիզիչ է դարձնում կարօտը։ Իսքա ինձ ցաւով խոսապվանեցի, որ ամուսնացել եմ յիմարարար, սոսկ իմ անհանդիսաւ, հետաքրքիր ընաւորութեանը բաւականութիւն տալու համար։ Ես այնուամենայնիւ վերսկսեցի իմ նախկին կեանքը, ծմարիտ է՝ աւելի պակաս եռանդով, բայց սրտի առանձին գոհութեամբ, ինչպէս մի ծանր բեռից ազատուած։ Ամուսինս կարծես մի անհանօթ անցորդ էր, որ եկան ինձ ասաց անողորմ ու անմիտ կեանքի դառն խորհուրդը ու հեռացաւ գնաց՝ հոգուս վրայ փոելով մի մութ թափիծ, մի անբացարելի վիշտ։ Ինձ հետ կատարուել էր մէկն այն թիւրիմացութիւններից, որնցով լի է մարդկացին կեանքը, և որոնք շատ յաճախ ձակտագրական են դառնում անփոք, միամիտ հոգիների համար։ Ամուսնութիւնն ինձ թւում էր մի երեխայական խաղ, ես չփառէի, որ անգամ երեխայական խաղերի մէջ մինում են այնպիսի վտանգաւորները, որոնք հեշտութեամբ դառնում են արագեղիա։

Աշուն էր արզէն, ամուսինս դեռ չէր վերադել։ Մի երեկոյ մենք երեքով նստած էինք ձրագի առաջ, քոյրս տարուած էր մի զրքի ընթերցանութեամբ, մայրս ակնոցները դրած նայում էր մի հաշուեցուցակ, որ հէսց այդ օրը ներկայացրել

Եր մեր պաշարեղին հայթացթողը, իսկ ևս նամակ
էր գրում ամուսուս : Դուրսը վատ գիշեր էր, խա-
ւարը թանձր, և առաւօտից սկսուած անձրեախառն
քամին անդադար ծեծում էր լուսամուտները :
Տրամադրութիւնս վատ էր. երբ հասայ նամակիս
այս տեղը, ուր ասում էի ամուսուս, թէ առանց
նրան ձանձրանում եմ, կանգ առայ . . . դրածս
ճշմարիս չէր, ես կեղծում էի : Գրիչս վար զրի և
մտածում էի վշառվ, թէ ինչու եմ կեղծում և յեսոյ
թէ ես գիռ որքա՞ն երկար այսպէս պիտի կեղծեմ,
քանի որ նրան չեմ սիրում՝ պիտի կեղծեմ աշխարհի
առաջ, նրա առաջ, մօրս ու քրոջս առաջ : Եւ այս
զարուրելի կեղծիքի շարքը, որի մէջ ընկել էի կա-
մառ, շղթայի պէս ինձ նեղեց, խեղթեց : Զգացի, որ
ձանձրանում եմ ո՛չ թէ նրա բացակայութիւնից,
այլ և կեղծելուց, և նամակ զրելուց : Կուտուած
մի անզօր զայրոյթ կրծքիցս բարձրացաւ վեր, ես
ներվային շարժումներով պատուացի նամակը և
դէն չարտեցի, որ ընկաւ քրոջս ուների առաջ : Նա
գլուխը բարձրացրեց, իր խոշոր, թախծոս աչքերը
ինձ վրայ ուղղեց :

— Ինչու պատուեցիր, հարցրեց կամացուկ :

— Չեմ ուղում զրել, առացի :

— Ինչու չես ուղում զրել :

— Տրամադրութիւնս վատ է, անպիտան եղա-
նակ է :

— Տրամադրութիւնդ վատ է, կրկնեց նա ծանր
կերպով ու կրկնու գլուխը կախեց զրքի վրայ : Ես
նկատեցի, որ նա էլ չի կարգում, այլ մտածում է :
Մայրս ուշք չէր դարձնում և շարունակում էր իր
աշխատանոր : Դուռմ սամնն առունակում էր ուռ-

նալ, և անձրեր ծեծում էր պատուհանները վհատե-
ցուցիչ յամառութեամբ : Ամեն անդամ, երբ փեղ-
կերը թրիսկում էին, քայրս զլուխը բարձրացնում էր
դրքի վրայից, նայում էր լուսամուտներին վախե-
ցած հայեացքով, մի փոքր մնում այդ դիրքով մուա-
խոն վիճակում, ապա կրկն շարունակում իրը թէ
խոն կարգալ : Քամին դրամ աւելի սաստկացաւ : լու-
սամուտներն աւելի բարձր շըմկալ սկսեցին, կլա-
րան զլուխը բարձրացրեց և անհանդստովթեամբ
ասաց :

— Ի՞նչ անպիտան եղանակ է դուրսը, ծովը
երեխ այժմ սարսափելի է :

Նա կարծես սպասում էր, որ ես մի բան
կ'ասեմ, կը միանամ նրան, բայց ես լուս կացայ
ու նայում էի լուսամուտին :

— Կարծես չէր կարելի նաւային վարժութիւն-
ներն ամառն անել, շարունակեց կլարան, այժմ
այս դժոխային եղանակով մարդկանց չարչարել
ծովի վրայ . . .

— Երեխ այդպէս էլ պէտք է, պատասխանեցի
ես, չէ՞ որ պատերազմը ամեն մի եղանիի կարող է
պատահել :

Կլարան ինձ նայեց մի այնպիսի տարօրինակ
հայեացքով, որ որքան ինձ անհասկանալի էր,
նոյնքան անսախորժ . դա մի լուս յանդիմանու-
թիւն էր ինձ իմ սան, անսարքեր պատասխանի
համար : Նա ինձ երբէք այդպէս վատ չէր նայել, և
ես առաջին անդամ իմ կեանքում նրա աչքերում
կարգացի ինձ համար մի անսփորժ միտք : Պարզ էր
որ նա միանդամայն ուրիշ պատասխան էր սպա-
սում ինձնից, չէ՞ որ ալեկոծ, վտանդաւոր ծովի

վրայ այդ զիշեր իմ տմուսինն էր : Նա զլուխը քաշ ձգեց գրքի վրայ , զարձեալ չէր կարդում , և ես նկատեցի , որ նրա զէմքը ընդունեց խիստ երազող տեսք : Այնպէս կ'ուզէի իմանալ , թէ նա ինչ է մտածում այդ ժամին , ի՞նչ է երազում , ի՞նչ յուշեր են պաշարել նրա զլուխը : Սակայն նոյնիսկ մի փոքր հաւանական ենթադրութիւն անել անդամ չէի կարողանում : Յանկարծ մեր զանգը տուին . տարօրինակ ոչինչ չկար , բայց քոյրս այնպէս ցնցուեց ու գունատուեց , որ կարծիս նա մի վերին աստիճանի անախորժ , մի սարսափելի տխուր բան լիելու նախազգացումով էր բռնուած մինչև այդ : Դուռը բացուեց , աղախինը ներս մտաւ մի հեռագիր ձեռքին : Կըուրան ոտքի թռաւ ու խլեց . ես ու մայրս նայում էինք և սպասում հետաքրքրութեած :

Նախ բացեց հեռազիրը գոզզոջուն ձեռներով , արագ հայեացքով անցաւ վրայից , երերաց կանդնած տեղում , աջ ձեռքով կուրծքը սեղմեց ցաւով , իսկ ձախ ձեռքով հեռազիրը ճմռեց ջղածզարար , չնջարգելուած՝ ընդհատ — ընդհատ հեաց և յանկարծ սկսեց ծիծաղիլ բարձրածայն , երկար , երկար , մի սարսափելի ծիծաղով , ապա կարծես կուրծքը փլաւ ահագին վշաբի ծանրութիւնից , նա հեկեկաց խելագար լացով և ուշաթափ փռուեց գետին յատակի վրայ : Ես ու մայրս սարսափած վրայ պլծանք , բարձրացրինք և անկողնի վրայ գրինք նրան առանց ոչինչ հատկանալու այս բոլորից , և երբ երկար չարչարուելուց յետոյ կարողացանք մի փոքր հանգուացնել նրան , ես այն ժամանակ միայն յիշեցի հեռազիրը և կամացուկ դուրս քաշեցի նրա սղմուած մատների արանքից այդ խորհրդաւոր թղթի կտորը

և կարդացի . . . եաւը՝ որի վրայ գտնուում էր իմ ամուսինը , խորապես էր շոգեկաթսալի պայմումից , սակաւաթիւ զոհերի թւումն էր և նա՝ իմ ամուսինը : Մայրս ծնկներին տուեց , զլուխը ձեռների մէջ առաւ ու կծկուեց քրոջս անկողնի մօտ , իսկ ես մնացի քարացած իմ տեղում չիմանալով ի՞նչ անել , լա՞լ , թէ՞ ոչ . . .

Եւ լաց չեղայ . . .

Այն հեռագիրը , քրոջս անօրինակ յուզմունքը , նրա մութ վիշտը , այս ուշաթափաւթիւնը տարօրինակ կերպով զուգաղիսում էին , այս բոլորն ինձ շնուցրեց . ծանր հարուածի պէս իմ գլխին իջաւ : Ինձ թւում էր , որ մի մութ բան ինձանից միանգումայն անկախ ու ծածուկ պաշարել է ինձ , խաւարով պատել իմ աչքերը , և ես երկար ժամանակ քայլել եմ մոայլ տարածութեան մէջ՝ առանց ոչինչ տեսնելու : Ամենքը , ամենքը փախչում , խուսափում էին ինձանից , բոլոր ծանօթ ընտանի պատկերները չքանում էին , և ես ինձ զգում էի մենակ , անընկեր , մի հրարիսային լեռան վրայ քայլելիս , որ ուր որ է պայմենու է ահազին որոտով , և որի մոայլ անգուսդների մէջ ես պիտի կորչիմյաւիտեան :

Միթէ զիսէին այս բոլորը մահամերձ քոյրս և այս ընկնուած , խեղճ մայրս , զիտէին , որ ես մի կորած արարած եմ , ծանօթ էին այն ու գաղտնիքին , որ բոլոր ժամանակ եմ թիկունքից քայլառքայլ աղացել է հրէշի պէս , մինչև որ ես համեմատ անդունղի ծայրին , ուր նա վար է զլուռում ինձ յանկարծ բանալով աչքերա , որպէսղի տեսնեմ իմ կորստեան բոլոր սարսափը : Հնարաւո՞ր է այդ , որ կորստեան բոլոր սարսափը : Հնարաւո՞ր է այդ , որ կորստեան բոլոր սարսափը իմանալին այս բոլորը և լրանք՝ իմ հարազաները իմանալին այս բոլորը

լոէին դաւագիրների պէս։ Ե՞րբ է տեսնուած այդ աստիճանն անողոքութիւն, մտածում էի ևս ցաւով. ո՛չ, այդ անկարելի է։

Դուրսը քամին մոնչում էր թանձր խաւարի մէջ, ևս ականջ էի զնում սարսափով, կարծես նա էլ նոյն մութ բանից էր խօսում, աշխատում էր փշրել պատռհանները, ներս խուժել և իմ ականջին փափսալ այն սև ու սարսափելի բանը։ Հազիւմի քանի բապէ էր, ինչ ևս ապրում էի այս անօրինակ յուզմունքը և սակայն հասունանում էի տարիներով, միտքս գործում էր անօրինակ ուժգնութեար։ Ի՞նչ կազ կարող էր լինել իմ քրոջ և այն զեղեցիկ սպայի մէջ, որի հետ մի ժամանակ ևս այնպէս զուարձանում էի, և որը անսպասելի կերպով իմ ամուսինը դարձաւ։ Վերսախն յիշեցի բոլոր անցած—դարձածը մինչեւ այս աղէտը, քրոջն ծածուկ վիշտը պաշարեց իմ գլուխը սարդի սոտայնի պէս, և ևս աշխատում էի, բայց չէի կարողանում որեւէ բացարութիւն գտնել։ Ի՞նչ էր կատարուել խաւարի ու լուսութեան մէջ ինձանից ծածուկ, իմ դէմ, ահա այն հարցը, որ ծիւազի ճանկերի պէս ճմում էր իմ ուղեղը, գանգս ան քում էր սև մտքերի ծանրութիւնից՝ կարծես պայթե ու համար։

Ես այնպէս դժբախտ էի...

Քոյրս հրկար հիւանդ մնաց։ Բոլոր այդ ժամանակը նա լուս էր որպէս գերեզման, ուր անդարձ կերպով մարել են յոյզերը, իզեկերը, մտքերը։ և նրա այդ քար լսութիւնն էլ աւելի էր մեծացնում սրտիս վրայ ծանրացած սոսկումը իմ վիճակի անորոշութեան հանդէպ։ Ես չէի համարձակում նրան խօսեցնել, հարց տալ և տառապում էի նոյն մութ

ցաւով, որ վշրել էր նրա էութիւնը։ Մեր ցաւերը երեխ մեղ պէս քոյրեր էին և մեղ պէս տարբեր նաւորութիւն ունէին։ Սպասում էի, որ նա բոլորովին կազդուրուի, որ սիրոս իր մութ կասկածներով փոեմ նրա առջեւ, խօսեմ, խօսիկ... բայց տարաբախտաբար իմ յոյսերն իզերե ելան, երբ նա վեր կացաւ անկողնից, արդէն այնպէս էր, ինչպէս գու տեսար։ Յաճախ ծիծաղում էր, ապա անվերջ հեկեկում առանց արցունքի, իսկ զբառում տղամարդի հանդիպելիս աշխատում էր խոյս տալ, ծածկուել ինչպէս տոելի թշնամիներից։ Մարմնապէս բոլորին կազդուրուած ու առողջ նա մինչև վերջը անկարող եղաւ հոգեպէս վերականգնուել, նրա էութեան նիրգահակութիւնը միշտ խանդարուած մնաց։ Մեզ հաւատացրել են, որ նա անբուժելի է և կարու ամենաքնքոյց խնաճքի։

Կարող ես երեակայել իմ ահազին ցաւն ու կոկիծը, երբ վերջապէս մօրս ինձ յանձնած մի յիշուկի մօրս իմացայ, որ իմ խեղճ, ազնիւ քրոջ շատակարանից իմացայ, որ իմ խեղճ, ազնիւ քրոջ անդառնալի դժբախտութեան պատճառը հէնց ես ամե եղել, անդիտակցարար։ առանց իմ գործողութեան արժէքն ըմբռնելու ես խելել ևմ նրա սէրը, որ ինձ բնաւ հարկաւոր չէր, և որ հեռու ծովերի տակ թաղուած տղամարդը աւելի նրա ամուսինն էր, քան իմը, որպէսիւն նա էր սիրել և ոչ ես։

Ոե՞ղձ, վատարախտ քո՞յլ...

Նա դեռ սկզբից այնպէս էր սիրել մեղ հիւրեկած սպային, ինչպէս հազիւ պատահում է աշխարհակած և ինչպէս գիտեն սիրել կանայք, երբ որեւէ հում և ինչպէս գիտեն սիրել կանայք, աղամարդ նրանց համար դառնում է այն էակը, աղամարդ նրանց համար դառնում է տիեզերքը, և որի համար որի մէջ կենարունանում է տիեզերքը,

հարկաւոր է զոհուել և անցնել աշխարհի երեսից։
Քոյքս միքել էր նրան իր բոլոր էռթեամբ, էր երակ-
ների արթանով, իր սրտի բոլոր թելերով և միւնոյն
ժամանակ նա աշխատել էր թաղցնել այդ զգաց-
մունքը ամենքիցս, որովհետեւ նրա կանացի հարա-
տավիւնը թոյլ չէր տուել նրան առաջնը յայտնել
իր սէրը մի տղամարդի։ Խոկ երբ վերջնս սկսել էր
նրանով զրաւուել, քոյքս յանկարծ դարձել էր ան-
տարբեր, սառն, որովհետեւ ճիշտ նոյն ժամանակ նա
տեսել էր, որ ես զուարձանում եմ սպայի հետ,
երջանիկ եմ, և իմ երեխայական խնդութիւնների
մէջ իմ սէրն էր նկատել։ Սպան վիրաւորուած
նրանից, թէ յուսանատուած՝ դարձել էր դէպէ ինձ
և իր անտարբեր խաղերին տուել էր լուրջ կերպա-
րանք, և յետոյ իմ ձեռքը խնդրել։

Քրոջս համար շատ հեշտ էր խափանել այդ
բոլորը և իրերին ուրիշ ընթացք տալ. բաւական
էր, որ նա խօսէր, բաց անէր նաև իմ աշքերը.
բայց նա լուել էր, պէտք էր համարել լուել. ինձ
երջանիկ տեսնելու միակ ցանկութեամբ այդ մահ-
ցու լուսթեան մէջ թաղել էր իր բուռն զգացմունքը,
միայնութեան ու խաւարի հետ սպացնել էր իր սէրը,
իր էռթեան բոլոր լարերը ձգուել էին մինչեւ յե-
տին աստիճանի, և երբ հասաւ աղէտալի լուրը,
նրանք ճայթեցին, բանականութիւնը խորտակուեց։
Այս բոլոր տրագեդիան կատարուել էր լուսթեան
մէջ. մենք երեքով առանց իրար հասկանալու
վազվակ էինք խաւարի մէջ իրար յետելից և փո-
խաղարձարար անդւնդ պատրաստել մէկ մէկի
դարձեալ լուսթեամբ։ Երբ ես մտածում եմ այս
բոլորը, ինձ թւում է, թէ մի կոյր ոյժ վարում է

մարդկանց ձակասագիրը միանգամայն մեզ անհաս-
կանալի ձեռվ, մեզ անցայտ մի նալատակով, մենք
տարւում ենք նրա թափով՝ ինչպէս մրրկով ըրու-
նուած։ Մասմում եմ յաճախ և միշտ դողում այդ
ոյժից, որ տեսնել անկարելի է, որ համբ է, կոյր և
սարսափիելի։ Գետ երբէք ես այնպէս խորը կերպով
չէի ըմբռնել եղիպալոս թագաւորի անլուր դժբախ-
տութեան բոլոր տրագեդիական մեծութիւնը։ ինձ
թւում էր, թէ Անտիգոնայի գունատ ու տառապած
հոգին դարերի մշուշի միջից հեծեծում է ու լալիս
մեզ համար. չէ որ մենք էլ նրա քոյրերն էինք,
լուսթեան զոհեր . . .

Քրոջս վշշուած հոգու պատմութիւնը օրըս-
տօրէ փառած էր իր փոքրիկ լիշտակարանի թեր-
թիկների վրայ. որոնք բոլորն ասես լացել էին նրա
հետ։ Նայում էի այդ թերթիկներին և վշտով մը-
տածում, թէ նրանց վրայ ցաքուցրիւ անդառնալի
կերպով փռուած են մի երիտասարդ կեանքի բե-
կորներ, ինչպէս մի բիրու ձեռքով փետտուած ծաղկի
թերթիկներ, որոնց հետ խաղում է քամին և որոնց
թերթիկներ, որոնց հետ խաղում է քամին և որոնց
ում են հարկաւոր նրանք, զոհեր կան անխորհուրդ
ու անմիտ, որոնք մեծ են լինում, նոյնքան աւելի
են մեծացնում կեանքում իշխող աններդաշնակու-
թիւնը, մեր գլուխների վրայ ծանրացած հին տրա-
թիւնը, մեր գլուխների վրայ ծանրացած հին տրա-
թիւնը։ Ամեն մի զոհ իր իմաստն ու անունը պէտք
գիզմը։ Ամեն մի զոհ իր իմաստն ու անունը պէտք
է ունենայ. ում էր հարկաւոր քրոջս բերած զոհը.
է ունենայ. ում էր հարկաւոր քրոջս բերած զոհը.
ո՞չ իրան, ո՞չ ինձ և ո՞չ աշխարհին. այդ անցնալ
կեանքը միայն դժբախտութիւն էր սփռում իր
կեանքը միայն դժբախտութիւն էր սփռում իր
շուրջը։ Մեծ լուսթեան։ որքա՞ն այդպիսի կեանքեր
թաղած ունի իր ծոցում. լայնարձակ գերեզմանը

լոյսերի . . . Խլեցի այդ յիշատակարանը, վազեց՝
մօրս մօտ և գլուխս նրա կրծքում թաղած՝ երկար
—երկար հեկեկում էի. դժբախտ էի ու խորտակ-
ւած : Առանց իմանալու՝ ես կողոպտել էի իմ հա-
րազատ քրոջը, կողոպտել էի նրա ամենալաւ մասը,
նրա հոգին : Երեխայական խենթոթիւններս անցան,
և ես հասուն կին դարձայ: Իմ և կեանքի մէջ եր-
կու գերեզման կար. ես կրկին այրի էի»:

Նա լայն շունչ առաւ ու լռեց ճակատը ձեռ-
ների մէջ առած, ասես ուե մտքերի ծանրութիւնից:
Լուս էի և ես, ինչպէս և մեր շորջը նիրհող
բնութիւնը :

«Տե՛ս ինչպէս լուս է մեր շորջը իմ ընկեր
շարունակեց նա, տիեզերական լուսութիւնն է, ան-
յայտ ու ծածուկ, բայց դրանից ոչ բակաս խուլ
լուսութիւն կայ, որ ընթացիկ բարոյականութիւնը,
թիւր հասկացողութիւնները, յաճախ նոյնիսկ յիմա-
րութիւնը դնում են մեր շրթունքների, մեր սրտի,
մեր հոգու վրայ: Կնոջ բարոյականութիւնը, կնոջ
կեանքը հէնց մի մեծ լուսութիւն է, այդպէս է պա-
հանջել աշխարհը, դարերը սրբագործել են, և մենք
աղատուել չենք կարողանում: Սիրել խորը ու ան-
զուսպ սիրով, հոգու մէջ կրել մայրութիւնը, ստեղ-
ծագործող, սքանչելի բնութիւնը, սրտի մէջ զգալ
կեանքը իր ալեկոծ ու փոթորկոտ խորհուրդներով,
իր վսեմ / զձերով որ վաս երազներով և այս բո-
լորը, այս դիւթական աշխարհը լուսութեան ու խա-
ւարի մէջ մաշել ու ոչնչացնել կամաց - կամաց—
ահա շատ և շատ կանանց ճակատագիրը: Վաղաժամ
փետուած վարդի, տրորուած ծաղկի, փշրուած
տունկի առաջ մենք երբեմն հազիւ ենք զսպում

մեր արցունքները, մեր հոգին ըմբոստանում է այդ
փաքրիկ կեանքերի բոնի մահի առաջ: Բայց յուսա-
խար սրտերի մահը . . . ով կարող է չափել ցափ
խորութիւնը, որ այդ մահուան ընկերն է: Մեռնող
սրտերը լուսութեան մէջ փալ եկող աշխարհներ են,
որոնք այլևս երբէք չեն չինուում:

Այսուամենանիւ կինը պարտական է լրել,
լոել և սպասել. վայ նրան, եթէ տղամարդը չեկաւ
նրան իր սէրն առաջարկելու: Փէսող աշխարհն է
նա, անօգուտ անյնող կեանքը . . .

«Երբ շրթունքները նիրհում են, հոգին զարթ-
նում է և գործի կենում»: այս ճշմարիտ է, լուս-
թեան մէջ հրաշալիքներ են կատարում գուցէ,
բայց եթէ այդ բոլորը պիտի թագնուած մնայ նոյն
լուսութեան մէջ, խօսքը չպէտք է զայ ծածուկ
ճշմարտութիւնների վրայից յիտ քաշելու քողը,
ինչ արժէք ունի լուսութեան մէջ կատարուածը: Ո՛չ,
բարեկամ, լուսութիւնը զարհուրելի է, և իմ քոյրը,
նրա զոհերից մէկն է:

Երանի՛ թէ մեր այս դժբախտ աշխարհում ծառ-
կարողանան ըսլոր զոհերը, նրանք, որոնք տառա-
պում են լուսութեան մէջ, ծածուկ անքում են ցա-
պում են լուսութեան մէջ, ծածուկ անքում են ստների
քում, և նրանք, որոնք տրորուած են ստների
տակ, որոնց հոգին են կողոպտում անողորմ կեր-
տով: Օ՛, ինչ սքանչելի կը լինէր, եթէ իրանց
պով: Օ՛, ինչ սքանչելի կը լինէր, դժբախտները, որոնք
սրտերում ցաւ կրող լուսոր դժբախտները, սրտեր-
ութիւնը են աշխարհում, ինչպէս շղթայակիր վտա-
րանդիներ, միասին յանկարծ մանչացին իլանց բո-
լորը, իրանց վիշտը և այնպէս ուժգին ու ցաւա-
զովը, իրանց վիշտը և այնպէս ուժգին ու ցաւա-
զովն, որ լոողները սասանուեին ու դաղալին: Բոլոր

ոսիրները լուսվթեան մէջ են կատարւում, իմ ընկեր, ինչպէս և բոլոր անօգուտ զոհերը, որոնք օժանդակում են խաւարի թանձրանալուն։ Այդ լուսվթիւնը ես ատում եմ, նա հրէցի պէս ծանրացած է աշխարհի վրայ և խեղդում է, խեղդում . . . անհատներ, հասարակութիւններ, ու ցեղեր մեռնում են նրա բեսի տակ։

Երբ ես քեզ տեսայ առաջին անգամ, զգացի
քո սիրոյ ուժգնութիւնն ու խորութիւնը, հասկա-
ցայ, որ ասեղծւում է մէկն այն կապերից, որոն-
ցից մարդ էլ չի ազատում և որոնք կարծես ճա-
կատագրական են: Ինձ ամենից շատ գրաւեց քո
սե, բոց աչքերի թափիծը, քո համարեա մանկական
յափշտակութիւնը, քո անքննադատ ու խենթ
ձգտումը դէպի ինձ առանց ճանաչելու՝ ինչպէս
թիթեռնիկը դէպի այրող բոցը: Այս բոլորն ինձ լի-
շեցնում էր իմ սեփական անցեալը, այն երջանիկ
օրերը, երբ ինձ համար էլ կեանքը միայն մի հա-
ճելի երազ էր, դիւթական երազ, երբ իմ շուրջը
ամեն ինչ բոյր ու սէր, խինդ ու ժպիտ էր միայն:
Դու ինձ գրաւեցիր, որովհետեւ ինձ պէս էիր: Եւ
իմ այս յափշտակութիւնը նման չէր առաջինն.
այրիները, որքան և ջահիլ լինին նրանք, հեշտու-
թեամբ չեն սխալում: Երբ դու ցանցում բանուած
ձկան պէս թրպրում էիր առաջս, ես ուշի ուշով
դիտում, քննում էի քեզ, և քանի աւելի մօտիկից
էի տեսնում քո հոգին, այնքան աւելի վտանգա-
ւոր էիր դառնում ինձ համար: Քո ներկայութիւնը,
հակառակ իմ ջանքերի, դառնում էր ինձ համար
մի մութ անդունդ, ուր նայելիս գլուխս շշմում էր,
բայց սիրում էի նայել: Քո տիրութիւնը, քո անյոց

վիճակը, այն սիրուն թափիծը, որ քեզ տալիս էր
խռոված երեխայի կերպարանք, ինձ համար անդի-
մաղեկի գրաւչութիւն ունին : Դու աղամարդ ես,
սիրելի՛ս, և գոցէ չգիտես, թէ ի՞նչ կը նշանակի
մի կոնջ դես ևս կոյս հոգու համար այն գիտակ-
ցութիւնը, թէ զիմացի երիտասարդը տանջւում է
իր սիրով, դա մի ամբողջ երանութիւն է :

Այսուամենայինիւ ես որոշեցի իմ սառն վերաբերմունքով, իմ հաճախակի' հեղնութիւններով, կծու ակնարկներով հեռացնել քեզ ինձանից, որովհետեւ ես դողում էի իմ քրոջ համար, դողում եմ և այժմ: Օ՛, եթէ նա իմանայ այս բոլորը, եթէ նրա խախտուած բանականութիւնը կարողանայ մի փոքր ըմբռնել, թէ ինչ է կատարում իր շուրջը, թէ ինչպէս կեանքը ընթանում է իր սովորական թափով առանց նրան, ես հաւատացած եմ, որ երկրորդ անգամ կը զանամ յանցաւոր և այն գիտակցարար: Յիշո՞ւմ ես, որ ես յաւզուած ու թուլցած նստեցի այն ճանապարհի նստարանի վրայ, երբ դու ասացիր, թէ ինձ սիրել ես իմ քրոջ մէջ: Հին պատմոթիւնն էր կրկնուում, ինձ թւաց, թէ ես էլի մի անգամ կողոպտում եմ նրան, սիրտս փղձկաց, քիչ մնաց, որ լաց լինէի, շտապեցի դէպի տուն՝ արցունքս քեղանից ծածկելու համար: Յեսոյ քո առաջին համբայը որքա՞ն արցունք խեց ինձանից դարձեալ քրոջը պատճառով: Նրանից առաջ ես ունեցել էլ գիշերներ, տաճանքի, յուսահատութեան գիշերներ, երբ ես պայքարում էի, ելք էի փնտում քեզսնից աղատուելու համար: Ես լալիս էի իմ անզօրութեան մէջ և հեկեկանքս խեղդում բարձերի տակ: Պայքարեցի երկար, և յաղթող չհան-

դիսացայ, ոռ բռնել էիր իմ հոգին, և նա իզուր էր թոչնի պէս թրավրում քո ափերից դուրս թոչելու համար։ Այս բոլորի հետեանքը . . . ահա, իմ ընկեր, իմ հմայիչ դե, մենք գիշերներ ենք լուսացնում այս նստարանի վրայ թառած՝ որպէս զոյգ սիրահար աղասիներ։ Դիպուածները երեխ բախտեր են վճռում, խուսափել անկարելի է։ Ես այժմ յաղթահարուած՝ թողել եմ իմ նստակը ջրերի երեսին, առանց զէկի, առանց առաջաստի և երէկ պատմածս սգաւորի պէս տարւում եմ, մինչև վրայ կը հասնի փոթորիկը։

Դու այժմ գիտես ամեն ինչ, սիրելի՛ս, օգնի՛ր ինձ, որ փոթորիկը չանփ մեղ, նա - կլարան չիմանայ, չհասկանայ մեր յարաբերութիւնները։ թէ չէ էլի մի ցնցում, և նա կորած է, ես էլ նրա հետ։ Զարհուրելի է այն գոյութիւնը որի հետ կապուած է մի յանցանք, թէկուզ ակամայ։ Իսկ ես գեռ ջահիլ եմ, այնքան ջահիլ, մատաղ առւնկի վրայից երր փչում է կատաղի հողմը և կռացնում, գետնին հաւասարեցնում, մի՞թէ նա նորից չի բարձրանում և ժպտում արեին։ Ահ, կեանքը . . .

Նա վերջացրեց, կռացաւ իմ կրծքին և սկսեց մեղմիւ հեծկլատալ։ Ես գրկեցի նրա գլուխը և մըսի թարում էի.

— Մի՛ լար, իմ հրեշտակ, ես կ'անեմ բոլորը, ինչ կամենաս, միայն թէ դու չտանչուես, մի նոր վիշտ չգայ քո հոգին պաշարերու։ Կլարան չի կարող իմանալ, նա չպէտք է իմանայ, անհոգ եղիր։ Ես քեզ կը լինեմ հլու հպատակ, քո հաճոյակատար սարուկր, կը հետեւմ քո թեթև նշանին, քո աչքի շարժումին՝ քո ամենաշնչին ցանկութիւնները կա-

տարելու համար, միայն թէ դու մի՛ լար, աղա-չում եմ։ Կեանքը միայն ցաւին չի պատկանում։ — կեանքը . . . ցաւերի հովիտ, տանջանքի պարտէղ, ուր ծաղիկների բոյրը մահառիթ թոյն ունի, ուր ամեն մի պտղի արմատին մի թունաւոր օձ է գալարուել ու փշում, և ուր խոսերը բոլոր փշաւոր են։ Հեռուից այստեղ ամեն ինչ գեղեցիկ է, որաւիչ վայելքի, երջանկութեան ծարաւով ներս ես մենում համարձակ և հէնց առաջին քայլից ընկնում ես փշուած ու արիւնոտուած՝ իշապէս որսորդի գնդակով եթերային բարձունքից իշապէս որսորդի թաշուն։ Ես հազիւ քսան տարեվայր զլորուող թաշուն։ Ես հազիւ քսան տարեկանիւ համան եմ և, տեսնում ես, թէ արդէն որքա՞ն եմ կանք է, կեանքը . . . նա մի թունաւոր պարապեկ է։

Մի աստղ ցոլաց երկնքից, լայն բոց արձակեց, իշաւ գեսփի հորիզոնը ու կորաւ։

— Աստղը բոց արձակեց ու մեռաւ . . . մրմին չում էր նա կարծես ինքն իրան, — աստղերն էլ են մեռնում . . . Տիեզերքի մէջ երեխ ամեն ինչ մահունի . . . անմահը միայն տառապանքն է, որ կապւած է մարդկային խզուկ ճակատազրի՞ն . . . մեռնում են, մեռնում են ամենքը . . . ինչ լաւ է, որ աստղերն էլ են մեռնում, թէ չէ մենակ մեր մահը սարսափերի կը լինէր . . .

— Իմ վշտացած հրեշտակ, անխուսափելին ափեզերքում միայն մահը չէ, հապա և ծնունդը երկրի վրայ իշխողը սերն է, հզօր ու ստեղծագործ գեղեցիկ սերը, որի բոցը խլուած է արեղածող, իսկ գեղեցկութիւնը՝ երկնքի աստղերից։ — Հա՛, հա՛ . . . ոէ՛քը, իրաւունք ունիս, գոնէ

սէրը . . . էլի մի բան է. նա խորհուրդ է տալիս
մեր ցաւոս գոյսթեանը, մեր ճակատագրին շղե-
րեզմանի երկիւղն է թռւլացնում, և ոչնչուի իւնը
մի փոքր լցնում . . .

Նրա խօսքերը լի էին քնքոյլ ու տիսուր յոյզով,
ձայնը գողոջան ու մեղմ՝ ինչպէս հովի առաջ լա-
ցող ծաղիկը՝ հմայիչ շեշտ ունէր: Նրա գլուխը
կամաց-կամաց կուցաւ ուսիս, կարծես իր շուրջն
իշխող թանձր խաւարն ու մահու երկիւղը վանելու-
համար նա զօրավիդ էր փնդրում:

Եւ մեր շրթունքները միացան իրար մի բոցոտ
ու երկար համբոյրով. խաւարի մէջ մենք հեղնում
էինք մարդկացին ճակատագրը և կեանքի ցաւը:

XXI

Սեպտեմբերի սկիզբն էր, թայ, լալկան օրեր.
աշունը փութկոտ էր: Եւ անձեւը . . . հինգ օրից ի
վեր մոայլ, երկինքը գիշեր ու ցերեկ մոմուռ էր
քամում, մանրիկ կաթիւները մաղմղում էին վերից
միակերպ, ձանձրալի . . .

Պատուհանիս առաջ նստած ևս յուսահստ ու
ցաւկոտ՝ հայեացքս դարձրել էի դէպի հորիզոնը,
ար լեռների վրայից գորչ ամպերի կարաւանները
սողում էին դաւադիրների պէս, բարձրանում էին,
լինում, կծկում, բացւում և ի վերջոյ լուծւում եր-
կնքի միապաղաղ սեռնթեան մէջ: Խոնաւ ու ցուրտ
էր իմ շուրջը. և ամեն ինչ կարծես ինձպէս մոայլ

էր. և պարտիզի ծառերը, որոնց դեղնած տերեւների
վրայից լալկան ճղիտով մի խեղդող ներդաշնա-
կութեամբ ընկնում էին ծանրացած կաթիւները
միենոյն տեղում՝ փոքրիկ փոսիկներ առաջացնելով,
և կծկուած ու խեղճ խոսերը, որոնք երկնքից յու-
սահատ՝ էլ վեր չէին նայում. աւելի հեռուն՝ մուդ
անտառը իր մասախուղէ ծածկոցի աակ արթսրթում
էր դժգո՞ն ու մռայլ խոկ նրա վրայ բարձրից հսկող
մենաւոր ժայռը կարծես աշխատում էր ամպերի
պատառներով ծածկել իր այլանդակ մերկութիւնը:

Բնութեան թախծոս պատկերը, այս լացող ծա-
ռերն ու խոտերը, կապարի պէս ծանրացած երկինքը
ինձ ո՛չ միայն տիսրեցնում, այլև զայրացնում էին
— հինգ օրից ի վեր գիշերները դուրս գալը մնկա-
րելի էր դարձել: Թւում էր, թէ իմ շուրջն ամեն
ինչ ինձ հեգնում է — և երկինքը, և լեռները, և
մանաւանդ այն սողացող ամպերը, որոնք իրանց
մութ ծալքերի, անթիւ զալարումների մէջ բռնած
տանում էին իմ գալստնիքը, և զիտէին իրանց
արածը: Դեռ երբէք ևս այդպէս չէի ատել բնու-
արածը և գեռ երբէք մի զայրոյթ այդ աստիճան ան-
թիւնը և գեռ երբէք չէր եղել: Իմ դէմ էր դուրս եկել
զօր ու խղճուկ չէր եղել: Իմ դէմ էր դուրս եկել
ինքը բնութիւնը, այդ հսկայ ու համբ վհուկը, որ
ինքը բնութիւնը, այդպէս մնողորմ կերպով զիտէ խա-
չփառես ինչո՞ւ այդպէս մնողորմ կերպով զիտէ խա-
չփառես մահկանացների բախտի, նրանց երջանկու-
զալ մահկանացների բախտի, նրանց երջանկու-
զալ հետ: Ի՞վ կարող էր վերադարձնել ինձ այն,
թեան հետ: Ի՞վ կարող էր վերադարձնել ինձ այն,
ինչ ես կորցնում էի իւրաքանչիւր զիշեր, այնքան
երջանիկ ժամեր ու վայրկեաններ, որոնք այն ամ-
երջանիկ ժամեր ու վայրկեաններ, որոնք այն ամ-

կեանների, արցունքը մշտառեւ, ժաղիսոը վաղանցուկ, յոյսերը երկչու, այս բոլորի հանդէպ վայրկեանների մոռացութիւն, որի մէջ լուծում ենք մեր ցաւու անհատականութիւնը. այն էլ անցնում է երազի պէս՝ էլ երբէք, երբէք յետ չգալու համար:

Մտքերս սե էին, բայց անձեւ գալիս էր միակերպ, տաղտուկ... կարելի էր խենթանալ զայրոյթից ու յուսահատութիւնից. այլես ոչ մի փիլիսոփայութիւն ինձ չէր օգնում. երեխ սեփական վշտի փիլիսոփայութիւնը ո՛չ համոզիչ է և ո՛չ մեղմացուցք: Երբ կեանքի հազուագիւտ լուսաւոր վայրկեաններն են փախչում, նրանց տեղը սառը միտքը ոչինչ չի կարող դնել, ինչպէս անկարող է լցնել գերեզմանի սպարազը, վանել մահուան գարշանքը, յաւիտենական ձմեռը ջերմացնել:

Միթիթարւում էր նրանով, որ Մարգարիտն ու իր քոյրը գեռ երկար պիտի մնան ամարանոցում, գուցէ մինչև հոկտեմբերի վերջը: Ինչ ասել կ'ուզէի, որ ես էլ մեկնելու մասին չէի մտածում: Յերեկները մենք պատահում էինք սեղանատանը, ուր մեր յիմար ու բարի տանտիկինը մի վայրկեան մեղ մնակ չէր թողնում. բնութեան պէս նա էլ եր դարձել անտանելի: Այն գողտրիկ, սիրազեղ գիշերներից մնացել էր սեղանի տակ մեր սաների դաղտագողի հալումը, լուս հայեացքները, մութակնարկները, որոնցից տանտիկինը ոչինչ չէր հասկանում, և որոնք մեղ համար այնքան խորհուրդ ունէին: Աիրոյ, երջանկութեան այն ծովից յետոյ այս բոլորը միասին կաթիներ էին, որոնք չեին կարող գովացնել իմ պապակած հոգին:

Լաւ որ Մարգարիտը գեռ սիրտ ունէր հանաք-

ներ անելու, երբ տանտիկինը մի վայրկեան խոհանոց էր մտնում, նա կռանում էր գէպի ինձ իր սովորական ձեռով ու կամացուկ ասում.

— Գիշերը լաւ քննցիք, դե՛:

Պատասխանի փոխարէն ես աշխատում էի սեղանի տակ սուքը սղմել ցաւցնելու չափ. նա շտապով փախցնում էր ու վրաս ծիծազում:

— Խռովա՛ծ երեխայ, ինչ լաւ է որ դու այդպէս ես... շարունակում էր նա քրքչալով: Իսկ դուրսն անձրեւ զալիս էր, գալիս: Ներս էր մանում տանտիկինը:

— Այսպէս չէ¹, տիկին, այս անձրեւ գեռ երկար կը շարունակուի, դառնում էր նրան Մարգարիտը: Հարցն ինձ չարացնելու համար էր անշուշտ:

— Ո՞վ գիտէ, մռմռում էր տանտիկինը՝ յուսահատ կերպով նոյերով զէպի լուսամուտը. անցեալ աարի այս ժամանակ գարձեալ անձրեստ էր, բայց էլի մենք գեռ մի փոքրիկ ամառ կ'ունենանք մինչև ձմռան գալը: Խեղձ տանտիկին, նա աշխամում էր մեղ միսիթարել, որ չթողնենք հեռանան:

Սնցաւ զարձեալ մի անխորհուրդ ու տիսուրօ, վրայ հասաւ նոյնքան անօգուտ, վհատեցուցիչ գիշերը: Ես բարձրացայ սենեւակս, նստեցի լուսագիշերը: Զանաղան մտքեր ու ծրագիրներ սուտի առաջ, նայում էի այն թաց խաւարին և մտածում էի, թէ ինչ հնարով կարելի է գլուխ բերել մեր ընդհատուած տեսակցութիւնները, մեր սիրուն գիշերները: Զանաղան մտքեր ու ծրագիրներ անցնում էին գլխովս, բայց բոլորն էլ անհեթեթ էին, անիբազործելի: Հաւատացած էի, որ դրանցից էին, անիբազործելի:

գաղտադողի սիրային տեսակցութիւնը նրա համար մի գեղարւեստական հաճոյք էր։ Յիշում էի, որ մեր սիրայ ամենաբռնան զեղմունքի բռպէին նա իրան չէր կորցնում երբէք, իր շարժումները մնում էին նազելի, շշուկը քաղցր ու քնքոյշ, անզամ իր արտաքինի մէջ նա թեթև անկարգութիւն տանել չէր կարողանում, ուր մնաց թէ յանձն առնէր տեսակցութիւն ոչ գրաւէչ պայմաններում։ Իմ մտածած հնարներից և ոչ մէկը գեղեցիկ էր, որ ես համարձակուէի յայնել առանց նրան վիրաւորելու։ Կանայք միշտ աւելի հնարամիտ են սիրոյ մէջ,—մտածում էի ես,— եթէ Մարգարիտ կամենայ, գուցէ մի աւելի գեղեցիկ, աւելի խելացի միջոց գտնել կարողանայ։ Սակայն գրադուա՛ծ նա այդ հարցով, թէ՛ ոչ, ես չգիտէի. նա միշտ այնպէս ուրախ էր ճաշի ժամանակ, իմ հարցերին պատասխանում էր զանազան կատակներով, որոնցից ես ոչինչ չէի հասկանում։ Երբ կամենար, նա միշտ գիտէր դառնալ անհասկանալի, առեղծուածական, ինչպէս մի սփինք։ Զուր չէր, որ ես նրան հէնց այդ անունը տուի սկզբից։

Գեշերը քանի գնում սեանում էր, և խուարը լալիս էր իմ պատուհանի տակ իր անվերջ արցունքով։ Զայրոյթիցս քիչ էր մնում ես էլ լաց լինէի նրա հետ։ Ես լսեցի թէ ինչպէս հարեւանուհիներս պատրաստում են քնել, ինչպէս Մարգարիտարը մօր պէս հոգում է քրոջ պէտքերը, կատարում է նրա բազմաթիւ մանր քմահաճոյքները, մերթ ծիծաղում է նրա հետ, մերթ համոզում է երեխայի պէս։ յետոյ կամաց—կամաց ամեն բան խաղաղուեց։ Ես էլ վեր կացայ, անկողին մտայ, գլուխս թաղեցի վեր-

մակի տակ որ չունմ գրսից անձրեի կաթիների միակերպ, վհատեցոցից ձայնը, այդ խեղող խաւարի լայը, աշխատում էի մոռանալ ինձ, մի կերպ քուն մտնել մինչև յաջորդ առաւօտ, երբ գուցէ արեւ ծագի. բնութիւնը նորից հաշտ ժպտայ մեղ։ Սակայն իզուր, քնել չկարողացայ և թաւալում էի անկողնումս տենդով բռնուածի պէս, ձմռում էի բարձս, գլուխս ցաւում էր, խեղուում էի օդի սարաւութիւնից, և լուսաբացը դեռ հեռու էր։

Կէսպիշերն անցաւ. հարեւան սենեակից փոքրիկ իրարանցման ձայնն իմ ուշագրութիւնը գրաւեց։ Մէկը կամացուկ ցած իջաւ անկողնից և երեխի կանգ առաւ լուսթեան մէջ, որովհետեւ շարժուելու ձայնը դադարեց։ Ես նստեցի և ականջ էի զնում, թէ ինչ է լինելու։ Ո՞վ էր արդեօք, կլարան, թէ Մարգարիտար։ Ես համարեա հաւատացած էի, թէ դա կլարան է, որ զարթնել է, ով գիտէ ինչ հրէշաւոր երադներից յետոյ, և այժմ գալիւցինացիայով բռնըւած՝ պատրաստում էր մի սարսափելի խենթ բան ամել, լուսամուտից վար նետուել, կամ քրոջը խեղեկել, վերջին միտքն ինձ սոսկումով պատեց և բոլորովին հաւանական թւաց. ես վար ցատկեցի անկողնիցս, առաջացայ գէպի գուուը, որ հէնց փոքրիկ աղմուկ, կասկածելի ճիչ, խսխուց լսեմ թէ չէ, խորտակեմ Շմեզ բաժանող դուռը և օգնութեան համեմ։ Այս վատ գիշերն այնպէս տրամադրում էր ինձ գէպի սև մտքերը, որ ես երեակայում էի խաւարի մէջ կլարային, կիսամերկ, մազերը խոփի, աչքերը շուած ու կատաղի. բերանը ծամուած ու փրփրու, և նրա երկաթէ մատների տակ Մարզարիտը սոսկումից ու ցաւից այլանդակուած ու կիսա-

միու : Գատկերը զարհութելի էր , և ես զգացի , թէ ինչպէս դողում եմ : Լսողութիւնս լարած' ես լուռ սպասում էր , իմ սեփական սրախ բարախիւնը , սաստիկ յուղմունքից՝ նա բռնուած թուչունի պէս աշխատում էր դուրս փախչել կրծքիս տակից : Ապա ես լսեցի , թէ ինչպէս խորհրդաւոր անձը շարժուեց դգուշութեամբ , կամացուկ , այնպէս որ ես հազիւ էի կարողանում հետեւել նրա մերկ , թեթև ուսների ձայնին յատակի վրայ : Մի արկղ կամացուկ բացուեց ու փակուեց՝ հազիւ լսելի քսոց հանելով , կրկին լուսթիւն . նա երեխ զարձեալ ակոնչ էր գնում : Մի՞թէ իմ կասկածները ճշտում են , մի՞թէ կլարան իր խենթութեան մի զարհութելի վայրկեանում պատրաստում է գործել մի անլուր ոճիր . գուցէ մի դանա՞կ էր , որ նա դուրս քաշեց արկղից ...

Սոսկումս գագաթնակէտին հասաւ , ես էլի մի քանի քայլ մօտեցայ դրանը , հետեւում էի , կուրծքս սղմւում , ներս էր ընկնում և կրկին ուռչում , բարձրանում , շունչս գուրս էր զալիս ընդհատ—ընդհատ հառաջանքներով : Բոնեցի դրան կանթը ու մտածում էի , էլի մի այդպիսի ձայն . և ես եր քաշեմ կատաղի թափով :

Հաւատացած էի , ինչքան որ ամուր լինի դուռը , այնուամենայնիւ կը խորտակեմ . Մարգարիտի թեթև ճիչը միանգամայն բաւական էր , որ ես երկաթէ պատուալիներ փշրելու կարողութիւն ստանայի : Սպասում էի . . . և յանկարծ լսեցի , թէ ինչպէս նա մեղմիւ քայլեց դէպի իմ դուռը . . . մի բանալի ներս սողաց կողպէքի մէջ , պտոյս գործեց , և պողպատը չոր անախորժ ճռուց արձակեց : Ես ակամայ յետ—յետ քաշուեցի դէպի իմ անկողինը և

կանդ առաջ քարացած . . . մի վայրկեան , միայն մի վայրկեան գլխովս անցաւ մի երջանիկ միտք՝ ինչպէս փայլակ , ցնցեց ու շմեցրեց ինձ . . . իսկ եթէ այս բոլոր հրէշաւոր կասկածներս անհիմն են և դուռը բաց անողը հէնց Մարգարիտն է . . . սիրող կինը ինչնը չի կարող հնարել ; Բայց այդ միտքը մինչև վերջը տանել , լրացնել չկարողացաց , նրա բոլոր մանրամասնութիւնները նոյն իսկ ըմբռնելու անկարող եղայ : Այդ միտքն այնքան աներևակայելի , այնքան երջանիկ էր , որ նրա ծնունդն անզամ , ինձ շմեցրեց , մաածելու կարողութիւնս դադարեց , աւելի հեռան տանել չի կարող , արիւնը յանկարծ կանդ առաւ երակներիս մէջ . . . Դուռը կամացուկ կանգ առաջ խաւարի մէջ ծրալրուեց մի բացուեց , և իմ առաջ խաւարի մէջ ծրալրուեց մի կանացի սքանչելի պատկեր : Միանգամայն ինձ կորցրած այս անակնկալ , աներևակայելի երջանկութիւնը հայտնաց՝ ես արդէն պատրաստուած էի ակամայ կութիւն՝ «Մարգարիտ» . . . բայց նոյն բոլոր տժով ճշալ՝ «Մարգարիտ» . . . բայց նոյն վայրկենին բազուկներիս մէջ զգացի նրա լիքը ու քնքոյց մարմինը , և շրթունքներիս վրայ հեքս մարտեց . . . նա էր . . . ես նուամարեց մի բաց համրոցով . . . նա էր . . . ես նուազեցի՝ այսքան երջանկութիւնը տանելու անկարող . . . զեցի՝ այսքան երջանկութիւնը տանելու անկարող . . . պատկերի , անձեւ , թափուիր հազար դարեր , և «թափուիր , անձեւ , թափուիր հազար դարեր , և թող այս զիշերը էլի սկանայ և շարունակուի անվերջ» . երեխ վերջին բառերը ես միմնջում էի , որովհետեւ Մարգարիտը բռնուած եղնիկի պէս դողդողում էր իմ բազուկների մէջ և բերանս փակում ձեռքով :

— Սուս , ս'ուս , երեխայ , փափառկով ասում էր նա , զարհութելի է , եթէ նա լսի , հասկանո՞ւմ ես , զարհութելի՞ . . . բայց նա չի լսի . . . նա միշտ ես , քնում է մինչև լուսաբաց . . . ժամացոյց կա՞յ . . . նա ,

այսպէս, լուցկի էլ պատրաստիր... երեք օր է վիճրում եմ դրան բանալին, այսօր վերջապէս կարողացայ գտնել խոհանոցում և վեր բերի... դէ սուս, սուս:

— Այդ դժու ես... միթէ այդ զու ես, օ, ես կը մեռնեմ, եթէ դու լինիս... այդ անկարելի է... այդ անկարելի է... ես ինչպէս կարող եմ երկնքից ասող խլել և զրկել այսպէս...

— Սուս, սուս, թէ չէ կ'երթամ, զարհուրելին է, եթէ նա խմանայ, հասկանո՞ւմ ես, ի՞մ հոգի... ես քեզ համար արել եմ անկարելին անհնարինը... գեռ երբէք մի կին այսքան յանդուգն չի եղել... ոճրի մօտ եմ, շատ մօտ... այս ի՞նչ արի, Տէր Աստուած... աես նա չզարթնի, նայիր, ականջ գիր, միթէ զարթնեց. շարժուեց... լուս է, լաւ է այսպէս:

Օ՛, այն փափոցը խաւարի մէջ, մեզմ, գուրգուրիչ ու սարսափելի, նրա հմայիչ ձայնի իւրաքանչիւր հնչիւնը որպէս մի երկնային երաժշտութեան ամենանուրբ խաղ ընկնում էր իմ վրայ, և ես լուծում, չքանում էի ասես մի դիւթական անձրևի կաթիլների տակ:

— Մարդարիտ... ես մեռնում եմ, այսքան երջանկութիւն տանել անկարելի է, սարսափելի է... միայն այս սէրը բաւական է տիեզերքը զարդարելու համար... կեանքի ցաւը սրան դիմանալ չի կարող...

— Սուս, սուս...

Եւ նա փաթաթւում էր ինձ՝ ինչպէս բաղեցը ծառին պինդ, պինդ՝ մերժ խեղդում էր իր շշուկը, մի վայրկեան ականջ դնում, ապա կրկին տաք

համբոյրով վանում իր երկիւղը: Եւ մենք փախա- դարձարար պատուիրում էինք իրար, ուել, և, իւրա- քանչիւրս այնուամենայնիւ մի բան էր գանում տաելու, միշտ մեղմիւ, միշտ փսփսուկով: Լոււ- թիւնն էր խօսում մեր շրթունքներով, նա՝ որ օրերի, շաբաթների ընթացքում մեր հոգիների մէջ մեղմիւ կերտել էր մի կախարդական աշխարհ, ուր ամեն ինչ կեանք էր, բոյր ու սէր: Եւ մենք խօ- սում էինք այն սիրոց, մաքուր, գեղեցիկ սիրոց, որ մեր բախտերը խառնել էր իրար և պիտի լուսա- ւորեր այնուհետեւ մեր ուղին, պիտի փալ և գին տար մեր գոյութեանը: Մեր իւրաքանչիւր մեղմ շշուկի, զգոյշ ձայնի իւրաքանչիւր ելեէջի մէջ լուսում էր այն անրիծ, քնքոյշ զգացմունքը, որ յատուկ է խական սիրուն, որ մարմից աւելի հոգուն է խօսում և երազանքների մէջ մեղմիւ օրօրում է մարդու երջանիկ էութիւնը:

Երբ խօսում էինք, մենք ցնցւում էինք մեր ձայնի շեշտից, այն աստիճան յոյզ ունէր նա. իսկ երբ լուսում էինք, մեր հոգիները փոթորկուած ու բոցոտ՝ վառում էին մեր շրթունքները մի բան ասելու, ճշալու, կանչելու անյագուրդ ծարաւով: Լուել անկարելի էր, խօսել նոյնպէս: Եւ յանկարծ ես զգացի, թէ նա սարսուաց բռնուած եղնիկի պէս:

— Ես վախեննում եմ, ասաց նա կարճ լսու- թիւնից յետոց,

— Ինչի՞ց, իմ ընկեր:

— Խաւարից. լսիր՝ ինչպէս նա լալիս է դրսում. ինձ թւում է, թէ նա մի հսկայ սուգ է անում, որի մէջ ես բաժին ունիմ, ինձանից ծածուկ:

— Սքանչելի մանուկ, հէքիաթները քեզ հան-

գիստ չեն տալիս. խաւարն անզօր է մեր այսքան
երջանկութեան հանդէպ:

— Ես յանցաւոր չեմ, այնպէս չէ^o, ես, ես
ջահիլ եմ...

— « Փոթորկի տակ կռացած տունկը, միթէ
էլ չի բարձրանում, » կեանքը միայն ցաւին չէ,
հոգիս:

— Այն ինչ է փայլում այնտեղ... խաւարն է
նայում կարծեա պլալան աչքերով:

— Կեանքը տեսնելու համար խաւարն աչք
չունի:

— Նա վեր կացաւ... գալի՞ս է, լսեցի՞ր...

— Քամին է զարկում փեղկերին, հանգստացիր,
սիրելիս, ոչինչ, ոչինչ չկայ: Նա քնած է խորը,
երջանիկ քնով, քամին ու անձրեը օրօրում են
այդ քունը:

— Կեանքի փոթորկից յոդնած՝ իսկական փո-
թորկի տակ նա քնած է երջանիկ... Եւ կեանքը
ընթանում է առանց նրան. խեղճ... խեղճ...

— Սուս, սուս, մենք նրան կը զարթեցնենք:

Եւ նա հանգստացած, կրկին փարում էր ինձ,
բուռն գրկախառնութեան ու համբուրի մէջ խեղում
իր երկիւղը: Սիրոյ մի անօրինակ պոռթկումն էր
այն, որ դուրս էր զեղուում մեր կրծքերից ու խեղ-
այն, որ դուրս էր զեղուում մեր կրծքերից ու խեղ-
գում մեղ: Մենք այսքան երջանիկ էինք, որ կա-
դում էինք մեռնել ինդգալով, աչքներս փակ, շըր-
թունքներս ի մի ձուլուած: Եւ եթէ յանկարծ մեռ-
նէինք, մենք մեզ հետ կը տանէինք ողջ տիեզերքը,
մեզանից ոչինչ չեր կարող խուսափել, ո՛չ մի ասող,
արեկ ո՛չ մի չող, տիեզերքի համերգի ո՛չ մի հնիւն:
Ողջ տիեզերքն այդ ժամին մենք էինք, նրա կամքը

անհասկանալի ու անման մեր մէջ էր մարմնացած,
մեղ օրօրում էր անուրջների մէջ, և մենք տարւում
էինք եթերային բարձունքներից... զարհուրելի էր
և սքանչելի միաժամանակ. երազներից ամե-
նավանաւմը...

Եւ իմ գիրկը գատարկ էր... Երբ գնաց... եկել
էր արդեօք... թէ^o բոլորը մի անսիրտ երազ էր միայն:
Ես նստած էի անկողնիս վրայ՝ գլուխս ձեռքերիս
մէջ առած, մինչդեռ զրում դեռ մաղւում էր
անձրեը: Լուսաբացի գունատ, վախլուկ ցոլքերը
մարախլապատ օղը պատռելով՝ ներս ընկան սե-
նեակս, ուր առարկաներն իրանց դալուկ, մթնապատ
պատկերներով սկսեցին գուրս սողալ խաւարի մի-
ջից՝ ինչպէս քանդակագործի մուրձի տակ սե մար-
ջից ինչպէս քանդակագործի մուրձի տակ սե մար-
ջից տուրս սողացող ձեւեր: Նրանք բոլորը
մարի միջից դուրս սողացող ձեւեր: Նրանք բոլորը
ասես զարմացած նայում էին ինձ և կամացուկ
ասու զարմացած. « Այստեղ էր նա արդեօք »... անկա-
հարցնում. « Այստեղ էր նա արդեօք »... անկա-
հարցնում. մի շող կար, որ մի ժամանակ միւս սե-
րելի է... մի շող կար, որ մի ժամանակ միւս սե-
րելից էր սպրում այսուեղ և յետ փախչում,
այդ ճիշտ է, բայց նա^o... այդ անկարելի է... նայեցի
չուրջս, իմ կողքին անկողնի վրայ զեռ երեւում էր
այն տեղը, ուր նա նստած էր. խորութիւնը զեռ
պահել էր նրա համայնք մարմնի ձեւը ակնատարար
ձշտութեամբ. ձեռք տուի, զեռ տաք էր այնտեղ.
Ճշտութեամբ. ձեռք տուի, զեռ տաք էր այնտեղ.
յանկարծ մառներս շօշափեցին մի փոքրիկ առար-
յանկարծ կարծերս միացել՝ կարծեռ ինձ
կայ, նրա գլխի սանրն էր մնացել՝ կարծեռ ինձ
ասելու, ինձ համողելու համար, թէ նա այսուեղ էր...
վերցրի, ջերմութեամբ համբուրեցի: Այս՝ այս՝, նա
վերցրի, ջերմութեամբ համբուրեցի: Այս՝, այս՝, նա
այսուեղ էր, երեկ կեանքը, իրականաթիւնը նոյն-
ութէս իր երազներն ունի, շատ անգամ տւելի գեղե-

ցիկ, աւելի գրաւիչ, քան քնի երազները : Իմ երազը
սքանչելի էր, նրանից մնացել էր մի անուշ բուր-
մունք, որ լցրել էր իմ սենեակի օղը, սպարութել
էր ինձ, և որի մէջ ես նստած էի այժմ այնչափ
երջանկութիւնից հարբած : Որքան առպրեցի...
էութիւնս յոդնած էր, ծանրացած զլուխս ընկա-
բարձի վրայ և այն փոքրիկ սանրը կրծքիս պինդ-
պինդ սղմած՝ քնիցի խորը, երջանիկ քնող,

XII

Անձրեւ դադարել էր, յօդաշատ, խոնաւ ո-
մուայլ օր էր, ծառերի տերեների վրացից անկա-
նոն կտկացով վար էին ընկնում ծանրացրած
վերջին կաթիւները . հէսց որ թեթեւ հովը սուլում,
շարժում էին նրանց : Խոնաւութեամբ յլփացած
օդը մրսեցնելու չափ ցուրտ էր, բայց և այնպէս
ես զուրս եկայ և անորոշ կերպով քայլում էի
դէպի հեռուն :

Հոգիս ծով էր կտրել յորդացած զգացմուն-
քից, և ես զուրս եկայ իմ երջանիկ էութիւնը
տալու հովերին, մասումաս բաժանելու ծառին,
ծաղկին, ժայռին, սարին ու ծորին, ամենքին ա-
սելու, ճչալու, թէ ես երջանիկ եմ: Մի զօրեղ
զգացմունք երբէք մի հատիկ կրծքի մէջ, մի
յարկի տակ պարտակուել չի կարող, նա պէտք է
բաժանուի: Լայնարձակ ընութիւնը հրապուրում
էր ինձ, և ես քայլում էի թեթեացած՝ տանելով
իմ կրծքում կենսական եռանդի մի հզօր բոց: Այդ
ժամին այնքան բան կ'ուզէի անել, այնքան գե-

ղեցիկ, բարի, մէծ զործեր: Գեղեցիկ սէրը իմ
հոգին գարձեալ էր մի բացուած ծաղկի մէծ ներ-
հազին գարձեալ էր սի բացուած ծաղկի մէծ ներ-
հազին իմերի համար: Ես սիրում էի, սիրուած էի,
շընչումների համար: Ես սիրում էի, սիրուած էի,
և այս գիտակցութիւնը խորունկ ու սիրուն՝ հա-
մապատասխան արտայայտութիւնն էր վնդրում
աշխարհում:

Հորիզոնի վրայ լեները կարծես յագնած մա-
սախլապատ երկնքի ծանրութիւնից՝ կոյր հովերի
թափով գժգոհութեամբ ցնցում էին իրանց ան-
տառէ բաշերը և հեռու մղում սպիտակ կամ դորշ
ամպերի անվերջ կարտանները: Եւ հալածական
ու անհանգիստ այն ամպերից երկրի վրայ քաշ էին
ընկել գունատ, վախլուկ սոսուերներ, որոնք վա-
զում էին իրանց եթերային քոյրերի յետեից, վա-
զում էին երբէք երկնքին, նրա աղատ բար-
ձունքներին չհասնելու համար: Նրանց յեղյեղուկ
ոտնքների տակ մի պահ մթազնում էին ձորերն ու
ոտնքների տակ մի պահ մթազնում էին սեւ-
դաշտերը, իսկ լեռնալանչերի անտառները սեւ-
նում էին, ապա ամպերի արանքում բեկեկուած
դեռ էին, ապա ամպերի արանքում դէղերի մէջ մէկմիւ-
գաղջ շողերի անզօր ու տիսուր փայլի մէջ մէկմիւ-
հեռում մէռուշի տակից:

Եւ ամպերը սահում էին իմ գլխի վրայով.
Իմ հոգու պէս նրանք էլ էին հարուստ ու զե-
րուն, բայց գնում էին բարիքը յօդելու տառա-
պում երկրի վրայ: Ոտուերի պէս մի թափիծ իջա-
խի սրախն: Բնչ էի անում ես, զուրս էի եկել
իմ սրախն: Եկել էի մայր ընութեանն ասելու, թէ
դաշտին: Եկել էի մայր ընութեանն ասելու, թէ
բախտառը եմ: «Քիչ է, քիչ է»... մըմնչում
էին իմ շրթունքները, սէրը միթէ անհատական
հաճելի երազների աղրիւր է միայն, ինձանից
դուրս մէծ կեանքը կար, միշտ ուշ, ուի...»

— Եյ, ծերոնի, այդ լինչ եռ անում:

Ծերտանին կանգ առաւ, թևով սրբեց ձակատի
քրտինքը, կկոցեց կնճիւների տակ կորած խորը
աչքերը ու լսութեամբ նայեց ինձ առանց յոյզի ու
զարմանքի: Բայց հարցու յիմար էր, անմիտ, ծի-
ծաղելի, ես տեսնում էի, թէ նա ինչպէս իր պա-
ռաւ, վախտ կնոջ հետ քաշ է տալիս մի անազին
կոճղ դէպի վեր, ուր ծխում էր նրանց խրճիթը:
Կոճղը անտառից բերել էր նախընթաց օրուայ հե-
ղեղը, հաստ էր, ծանր ու անձառնի. բայց երեկ
պէտք էր տանել, վառելիք էր, և երկու ծերերը
քաշում էին ցեխսերի մէջից, քաշում էին, վարե-
լով խոնաւ գետինը, հեռու էին, տնքում, քրտ-
նաթոր ու տանջուած: Այս բոլորը տեսնում էի,
գիտէի այդ կոճղի, այդ քրտինքի, հեքի, տան-
ջանքի տակ ծածկուած գաղանիքը, մութ գոյու-
թիւնների նոյնքան մութ տառապանքը, էլ ինչո՞ւ
հարցրի, ինչո՞ւ կանգնեցրի: Խօսել էի ուզում,
միայն խօսել, մի լաւ բան ասել ու յիմարացայ:
Ծերտանին շարունակում էր նայել ինձ, պատաս-
խանի փոխարէն նա իր թուխ ու կոշտացած ձեռ-
քը մեկնեց դէպի վեր, դէպի փոքրիկ խրճիթը,
որ կծկուած էր բլրի լանջին ինչպէս դողդողացող
մուրացիկ, ապա դարձաւ կնոջը:

— Բայի՛ր, պառա՛ւ :

վերստին լծուեցին երկու ծերերը, վերստին
կոճղը սկսեց վարել խռնաւ գետինը ոլոր-մոլոր
ակօսով զէպի վեր, զէպի վեր։ Ես միասժամնակ
քայլում էի նրանց յետեկից առանց համարձակ-
ւելու խօսել, զգում էի, որ էլի միմար բան
կ'առեմ, միայն քայլում էի՝ հայեացքս յառած

այդ ծումռուսդ, խղճակ թիկունքներին, այդ այլանդակ կոճղին, որ հող վարելով զնում էր գէպի վեր այն խրձիթում կեանք ու չերմութիւն սրփուելու ձմրան դաժան օրերին, դէպի վեր, դէպի վեր... Չմօտենամ արգեօք, կախուեմ այդ կոճղ և մենամենակ քաշեմ հանեմ խրճիթ մօտ, մտածում էի ես. քայլերս արագացրի և յանկարծ կանդ առայ... ամաչում էի այն ծերերից, ինձ թւում էր, թէ նրանք կ'ասեն՝ չծիծաղելի է քո արածը, կեանքի ցաւը դրանով մազի չափ անգամ չի փոխուի, հանգիստ ձգիր մեզ ու գնաւ։ Ահ, այս մարդիկ, այս հնազանդ ճակատները, այս ցաւոտ, տառապած դէմքերը, որոնց երբէք չես ճանաչի, ապրում են ու հեգնում, նրանց հոգին մութ բնութեան մի մասն է, և յատկապէս այն մասը, ուր ցաւերն են դարբնուում, յարաաև երկունքն է ճգնում։

Յետ դարձայ և շարունակեցի ճանապարհութեամբ հեռացնելու, և կերանքի թափսիծը քարչառքայլ սոզում էր իմ յետեից։ Գիւղից դէպի դաշտն էին գնում ծերեր, երիտասարդներ, մանուկներ, հազարդիտանի կարիքն էր այն, որ գալարւում, փրուում էր և այն երկու ծերերի պէս սև օրն էր լայիս։ Ահա և փոքրիկ աղջիկը իր այժմիի հետ, իմ հին ծանօթները, ամրան սկզբից քանի քանի անգամ եմ տեսել այդ դայդը։ Աղջիկը պարանով դարձեալ քաշ է տալիս կենդանուն, և երկուով էլ գոհ են, որ անձրեսու օրերից յետոյ վերջապէս արձակ դաշտեր են դուրս գալիս։
— Բարե, իմ փոքրիկ, այծդ արածելու հանում։

Պատասխանի փոխարէն նա ժպտաց ու կարմըրեց . երեխ ուղում էր ասել՝ «ի՞նարիկէ, ուեսում ես, էլ ի՞նչ ես հարցնում»; Եւ արդարև մի բարբովին աւելորդ հարց . ես լաւ գիտէի, որ նա արածելու է տանում իր այծը, բայց խօսեցի նրան մի լաւ բան ասելու, նրան ուրախացնելու ներքին մզումով : Ես նմանում էի այն մարդին, որ յանկարծ դանձ է գտնում և ուղում է ամենքին բաժանել, ամենքին բախտաւորեցնել և չգիտէ ինչպէս : Գեղեցիկ սիրոյ թեղուն զգացմունքը իմ հոգում յորդացած գետի պէս դուրս էր թափում ափերից : Ես ուղում էի ամենքի հետ խօսել, ամենքի հետ բաժանել իմ հոգին և մի տարօրինակ հակառակեամբ ինչ որ ասում էի յիմար էր դուրս գալիս : Ես յիմարացայ նոյնիսկ այս փոքրիկ աղջրկայ առաջ :

— Մայրիկս ասաց, որ տանեմ արածացնեմ, քանի օր է, դուրս չի գնացել այծը :

Փոքրիկ աղջիկն էր խօսում առանձ ինձ նայելու : Կեանքի, կարիքի գիտակցութիւնն ուներ այդ փոքրիկ զլուխը, և ասածը խելացի էր, ինձ ձնշում էր :

— Հա՛, այդ լաւ է, տար, տար, թող արածի, — շտապեցի պատասխանել, որ խօսակցութիւնը կնքուի . ինչ որ ասում էի, ինձ զայրացնում էր իր յիմարութեամբ :

— Փախչում է, որ թողնեմ, կը փախչի, էլ բոնել չեմ կարող . այնպէս է վազում :

— Զա՞րն է :

— Հա, շատ չարն է, սիրում է հէնց մենակ լինել, չուտ արի, — գարձաւ նա իր այծին՝ ուժով

թափ տալով պարանը : Նրանք էլ միւսների հետ գնացին հեռու, հեռու, դէպի մարդարկեալ/ները, միասմանակ ես լսում էի փոքրիկ աղջկայ գեղջուկ երգը, յետոյ այն էլ լսեց :

Ես մնացի մենակ իմ մտքերի հետ և յիտ գարձայ տուն . այնքան բան ունէի ասելու Մարդարկիան : Մտածում էի սլատմել նրան իմ այդորդարիան : Մտածում էի սլատմել նրան իմ առաջ լայ տարաւորութիւնները, փոել նրա առաջ իմ լայ տարաւորութիւնները, փոել նրան առաջ իմ խոնները և լսել նրան, որ միշտ այնպէս խելացի խոնները և լսել նրան, որ միշտ այնպէս խելացի էր : Կոճղը քաշող ծերերի ծռմուռած մէջքերը իմ աչքի տուաջն էին :

Թայլում էի և մտմտում ինքս ինձ . «Ամենագեղեցիկ, ամենաբռուն մէրը դարձեալ մի նեղ, եսսասէր զգացմունք է, եթէ նրանից անմասն է մնում մեծ կեանքը, որ յորդացած հեղեղի պէս անցնում է՝ փշրելով այնքան ինեղճութիւններ : Ամենագեղեցիկութիւնը կեանքի մէջ իրագործուած բարիքն է : Անհատական երջանկութիւնը մի անկարելի ցնորք է, երբ կեանքն իր ամբողջ անկարելի ցնորք է, կերպ կեանքն իր ամբողջութեամբ ցաւագին ձիւերի, խելզուած հառաջութեամբ այսպիսին ձիւերի, խելզուած հառաջութեամբ մի հակայական համերդ է : Այըը մի չանքների մի հակայական համերդ է երկնքի եւ ամոլ չէ, որ արագութեամբ ունում է երկնքի եւ ընեսից եթերային թեկերով՝ առանց մի կաթիլ ցողով փափկացնելու այրուած, պապակուած երկիրը : Մտմտում էի այսպէս և հաւատացած էի, որ բարգարիտը իր պայծառ, հասուն խելքով, իր Մարդարիտը իր պայծառ, հասուն խելքով, իր խորին տրամաբանութեամբ ինձ այնքան նոր ճանապարհներ ցոյց կուտայ կեանքի մէջ գեղեցիկը միապարհներ ցոյց կուտայ կեանքի մէջ գեղեցիկը բարիք գարձնելու իր հրաշագործ սիրով : Նա որ բարիք գարձնելու իր հրաշագործ սիրով : Նրա այնպէս ըմբռնում էր կեանքի լուռ թափիծը, նրա միսացող յարատե վերքը, կը հասկանար անշուշտ

իմ հոգին աղմկող այս խռները, և կը կարողանա-
յինք միասին լուծել կեանքի մեծ առելջուածք...

Նա կանգնած էր լուսամուտի առաջ և երեք
ինձ էր սպասում, նայեցի և մոռացայ բոլորն, ինչ
մտածել էի, վայրկենապէս մաշուեցին բոլոր տը-
պաւորութիւններս, և նաև առեղը մնաց նա,
միայն այն գեղեցիկ զբուխը, որ լուսամուտի շրր-
ջանակի միջից ծրագրում էր մուդ ֆոնի վրայ իր
բոլոր դրաւչութեամբ։ Ներս մասյ, նա մենակ էր
սեղանատը, մնացի դրան առաջ և նայում էի հը-
մայուած։

— Թափառական երեխա՛, այսպիսի եղանա-
կով չեն գնում զրօննելու, ասաց նա։

— Դաշտերում սակայն աշխատողներ կան
այսպիսի եղանակով։

— Աշխատանքն իր հիմքն ունի, որ քեզ նը-
ման թափառաշրջիկները հասկանալ չեն կարող։

— Երկու ծերեր քաշ էին տալիս մի կոճղ,
այնպէս ծանր էր, քիչ մնաց վնայի ինքս քաշէի,
բայց...

Նրա բարձրաձայն քրքիջը ընդհատեց իմ
խօսքը։

— «Բայց», կրկնեց նա հետնութեամբ և շա-
րունակ ծիծաղելով, բայց ի հարկէ չարիր, և լա-
որ չարիր, դրանից ի՞նչ օգուտ, երեխա՛, երազող
երեխա՛, որ կոճղը քաշէիր, կարծում ես, թէ աշ-
խարհի կարգը կը փոխուէր,

Նա կրկնեց ծիծաղեց. ես կանգնած էի տե-
զում իսկ և իսկ երեխայի պէս, որին յանդիմա-
նում են իր միմարտթիւնների համար։ Սահման
կապէս յիմար դուրս եկաւ։

— Այդ թողնենք, շարունակեց նա՝ խօսքը
փոխելով, չէ՞ զու խոստացար ինձ նկարել, ա՛յ,
այդ քո բանն է, նկարիր ու երազիր, թէ չէ զը-
սում է դաշտերում պառաների հետ կոճղը քաշի,
կարծում է մեծ բանի վրայ է։ Ե՞րբ ես նկարելու
ինձ։

Հիանալի՛ միտք, ես լուսութեամբ բարձրացայ
սենեակս, վար բերի անհրաժեշտ պարագաները։

Նա նատեց իմ գէմուդէմ, ամբողջ իրանով
յետ ընկաւ բազկաթոսի թիկունքին, գլուխը յե-
նած աջ ձեռքին, նայում էր զէպի դուրս՝ հետեւ-
լով ամպերի և ստուերների խաղին։ Մոռացայ իմ
գործը և հրապուրուած նրա քնքոյց կանացիու-
թեամբ՝ յափշտակուած նայում էի, ասես առաջին
անգամն էի տեսնում գեղեցկութեան այդ զարմա-
նալի ներդաշնակութիւնը։ Երազուն գէմքը, կա-
պուտակ վճիռ աչքերի նայուածքը, ուր կարծես
մերմիւ պլպլում էր հոգու կրակը. իր անհոդ, նա-
զեղմիւ պլպլում էր հոգու կրակը. իր անհոդ, նա-

— Տեսնում ես այն ամպը, — նա ձեռքքը մեկ-
նեց զէպի դուրս, նամի՞ր, կարծես փախչող այծ-
եամ լինի. այծեամները միշտ փախչում են։

— Բնութեան մէջ ամեն ինչ փախչում է,
հոգիս, աւելի լաւ է հանգիստ նամիր և թաղ
նկարեմ, ես տեսնում եմ, որ չարածնի երեխայի
պէս զու մի վայրկեան միւնոյն դիրքում մնալ
չես կարողանայ։

— Այսօր ի՞նչ վասն ես զու, վատ, վատ.
որ փախչեմ...

— Որ փախչես, կը բանեմ և կը նստացնեմ տեղդ:

— Դէ բանիք: Եւ նա վերկացաւ, արագ աշրագ քայլել սկսեց սենեակում՝ չարաձճի հայեացքը միշտ ինձ վրայ: Ես վար զրի վրձինս, հետեւում էի նրա գողարիկ խաղերին: Նա լու էր արամադրուած:

— Եթէ փորձես վեր կինալ, նոյնիսկ մի փոքրիկ շարժում, և ես կը փախչեմ դռնից դուրս:

Ես շարունակում էի նայել առանց շարժուելու, մինչդեռ նա իր աննման հասակով տարւում էր այս ու այն կողմ, կրունկներով ազմուկ էր հանում յատակի վրայ, իրար խառնում աթոռները: Այդ բոլորն այնքան գեղեցիկ էր, այնպէս գրաւիչ, նրա շարժումների մէջ զայնքան անարուեստ չնորհք, նազանք կար, որ ես հմայուած՝ չէի էլ մտածում վերկենալ և միայն նայում էի, նայում էի ազահարար:

— Այ, այսպէս. վեր կինալ չես համարձակուի, տեղումդ քար ես կտրել. եթէ նկարել կարողանայի, ես կը նկարէի քեզ, զարմացած երեխայի պէս ես, գե՛. թէ որ այդքան խելօք էս, ես կը նստեմ տեղս:

Նա քաշեց մազերս, ծիծաղելով կրկին տեղ բռնեց իմ առաջ նախկին դիրքով: Ես վերսկսեցի ընդհատուած աշխատանքս, բայց այնուհետև նա դարձեալ մի քանի անդամ ընդհատում էր իմ գործը իր չարաձճի խաղերով: Մերթ մի թիթեռ էր նրան զբաղեցնողը, մերթ մի թոշոն կամ մի բղեզ: Ներս մտաւ տանտիկինը:

— Սքանչելի է՝ բացականչեց նա՝ միամիտ ժաման երեսին. — սքանչելի է, երբ ես ձեզ տես-

նում եմ այլպէս, միշում եմ իմ զոյգ ծիծեռնակներին. նրանք միասին աշխատում էին ու երգում, բոյն էին շինում, զողարիկ զոյգ էր, ես շատ եմ սիրում թոշուններին, այնպէս լաւ են: Յետոյ նրանք փաքրիկներ հանեցին, իմ աչքի առաջ կենանք բաղրիկներ հանեցին, մածացրին ու թոցրին: Ամեն աշխանդականը էին ու զարնանը յետ գալիս, բոյնը կարկապնում էին ու զարձեալ երգում, փոքրիկներ հանում ու թոցնում: Եւ այսպէս տարիներ: Երբ նրանք չւում էին, ինձ միշտ թւում էր, թէ ինձ մնաս բարով են ասում ախրութեամբ, կարծես վախենում էին իրանց հեռաւոր ձամբորդութիւնից: Նրանք հեռու են գնում, այնպէս չէ, շատ հեռու: Նայեցէք, նրանց բոյնի խղճուկ աւերակները դեռ երեսում են այնտեղ:

Ես ձանձրանում էի՝ անհամբերութեամբ սպասելով, որ պառաւը վերջացնի իր շաղակրատութիւնը: Մարգարիտը լուս էր խորին ուշադրութեամբ, ինչպէս փոքրիկ մանուկը կը լսէր իր տատի հրաշալի հէքիաթը: Բայց տանտիկինը լոեց ամենայն անտարիկրութեամբ և սկսեց դասաւորել իսաւուած աթոռները: Ես պատրաստում էի իսաւուած առնել վրձինս, երբ Մարգարիտը ոտքի ձեռք առնել վրձինս, իր Մարգարիտը ոտքի կանգնեց, մօտեցաւ լուսամուտին և ուշադրութեամբ նայում էր ծիծեռնակների աւերտուած բոյնին:

— Յետոյ ի՞նչ եղան ծիծեռնակները, զարձան դէպի տանտիկինը, որ շարունակում էր յարդարել սենեակը՝ ըստ երեսոյթին բոլորովին մոռացած և իր պատմութիւնը, և' մեզ:

— Ծիծեռնակները... նրանք մի անգամ գնացին, եւ յետ չեկան:

ի նչ — եւ յետ չեկան ծիծեռնակները . . . ահանիս
ի նչ եղան խեղձները :

Մարգարիտը խօսում էր ինքն իրան՝ աչքը
շարունակ աւերակ բայցին յառած. նրա դէմքը
ընդունեց այն խոհուն, երազող արտայայտութիւնը,
որ յատուկ էր նրան, երբ մտածում էր ախուր
բաների մասին:

— Ի՞նչ եղան ծիծեռնակները, Տէ՛ր Սոսուած,
բացականչեց տանտիկինը, նրանք էլ յետ չեկան
ասացի, երեխ հեռու ծովերի վրայ փոթորկի բռո-
նուեցին ու մեռան ճանապարհին։ Դէ՛, այդպէս
է, յաւիտեան ապրելու չէին, մենք էլ ենք մեռ-
նում, ամենքն են մեռնում, ամենքիս համար էլ
փոթորիկ կալ, նրանք էլ այշաք է մեռնէին. . .

— Գուցէ կարսղ էլն գեռ չմեռներ, ապրել բայց մեռան փոթորկից . . . ծիծեռնակի հէքիաթը՝ վաղաժամ մահ ծովերի վրայ, քամիների չնշալ ցաքուցրիւ, խզակ վեհատըներ և աւերակ բոյն: Ահա յամառ աշխատանքով հիւսոււոծ, յարդարաւած բոյնը, ուր երեխ մի օր այնպէս լաւ էր խաղաղ նիրհելու և երազների համար . . . գնացին, ել յետ չեկան, ծիծեռնակի հէքիաթն էլ լաւ է, ահա, այս իեւանքի հէքիաթները մէկը մէկից պակաս չէ:

Մարդարիաը յետ եկաւ, նստեց իր տեղում,
բայց աւելի մտախոն, աւելի երազուն կերպա-
րանքով։ Այս զարմանալի կինը նման էր մի քըն-
քոյշ ծաղկի, որ դունաւում ու խամրում էր
փոքրիկ հովից։ Երեխայ։ ալէս խինդն ու լացը,
ժպիսն ու թախիծը նրա հոգում արագութեամբ
յաջորդում էին իրար փոխառփոխ։ Եթէ իր խա-
ղերն ու ուրախ օրախօսութիւնները կինդանէ էին,
տիսուր լրջութիւնը խորունկ էր և երկարատեւ։ Իր

կենաքի արշալոյսին նա համոգուել էր դառն փոր-
ձով, որ մարդկային երջանկութիւնը մի անկարե-
լիութիւն է, մի ցաւտպին ցնորք, որ կեանքի ըս-
կրզբուքը ուե է և նա մղումն է ստանում լուս-
թեան մէջ գործող մութ, անըմրունելի ոյժերից.
խոսափել անկարելի է: Լուսթիւնը նրա համար
խաւար, զարհուրելի կարողութիւնն էր, որ իր քը-
մահաճոյքի շվթայով կաշկանդում է մարդկային
րախատերը և փշում, արիւնոտում այնքան սրտեր:
Հոգիների մէջ յարատե ցաւն է միսում մեղմիւ-
պլազմող կրակի պէս, մոռացութիւնն է միայն,
որ վայրկենական սփոփանք է բերում: Երա խո-
հուն ու խորունկ թախիծի աղրիւը լայն գիտակ-
ցութիւնն էր մարդկային ծանր ծակատագրի: Խոկ-
իխնդն ու ծիծազր լզիսում էին միայն վայրկենա-
կան մոռացութիւնից, որ յատուկ է երիտասարդ
կենապիտարիքին: Երբեմն նա ինձ ասում էր,
կենապիտարիքին: Հայութիւնն է անհասեն կարողանայ

— Երանի թէ մարդ յաճախազր է ու կատանալ, որ ինքն սուլում է. հնդկական նիրվանան լաւագոյն իմաստաթիւնն է, որին երբեւիցէ նաև կարողացել է համեմել մարդկայն միտքը, բոլոր կարողացել է համեմել մարդկայն միտքը, բոլոր հետապնդութեան մեջ մեռնում են այնտեղ:

Տանտիկինն ինձ զայրացրեց և լր առ մեջ
թեամբ, և մանաւանդ իր պատմութեամբ։ Միջոց
էի վնդրում մի կերպ շուտով ազատուել նրանից,
բարեհախտաբար նա ինքը լուծեց հարցը։

Литература

— Ուհ, այս պառաւը, բացականչեցի ես
սրտնեղած :

Ի՞նչ մնդաւոր է այդ խեղճ միամիտ կինը, որ
կեանքի հէքիաթները սարսափելի են. քեզ ասել
եմ, որ ներվանան լաւագոյն իմաստութիւնն է.
Է՞ն, թողնենք այդ էլ, ինքդ ասացիր քիչ առաջ,
որ կեանքում տմեն ինչ փախչում է. բոլորն, ինչ
այսօր կայ, վաղը կամ նոյնիսկ մի ժամ յետոյ կա-
րող է չինել, աւելի լաւ է նկարիր և մի զայրանար:

Ես լուցի, որպէսզի նա չուտով մոռանայ ար-
խուր միջնադէալը. վրձինը ձեռք առայ, շարունա-
կեցի ընդհատուած գործս, բայց նրա գէմքն էլ չէր
բացւում: Եւ որքան գրաւիչ էր նա իր տիրու-
թեամբ: Երբ նայում էի այդ թափսծապատ, բարձր
ճակատին, խորունկ կապուտակ աշքերին, որոնք
թարթում էին անուրջների միջից, ինձ թւում էր,
թէ զեղեցկութեան մի ծով է առաջս, հմայչ. կա-
խարդական ծով, որի հրաշալիքները անծայր են,
որպէս իր ափերն ու անդանդները: Տիսուր գե-
ղեցկութեան սրէզիան անհուն է: Անդունդները
պրապառդ արծուի պէս ես աշխատում էի թափան-
ձել այդ անհունութիւնը, բանել արձանացնել կը-
տաւի վրայ նրա նրբարդյն խաղերը, որոնք նոյն-
քան սիրուն են և նոյնքան վողանցուի, որքան
արշալոյսի գոյները: Օ՛, սիրած ու գեղանի կնոջ
տիրութիւնը... զա նոնիներով եղերուած մելա-
մալձոս ու զձիտ բակ է, ուր մարդ իր պատ-
կերը միշտ կունաս է, տեսնամ, և որը իր ափերին
ժպտացող հոգուց արցոնքը էլ է ուզում: Կանացի
այս գողարիկ պատկերի առաջ հայեցքս մինել
էր, միայն երեակայութիւնու էր գործում տենդոս

ինքնամուացութեամբ: Ես կարծես մի հարուստ ու
կախարդական ընութեան միջից դիմում էի գէպի
հեռաւոր լոյսը, որ քանի գնում՝ այնքան բոց-
վառում և յափշտակում, շացնում էր ինձ: Զեռ-
քը աւելի և աւելի թափ էր առնում և երեա-
կայութիւնս թեւր:

Ես նման էի այն անապատականին, որ տա-
րիների ծանր տքնութիւնից յետոյ մի հրաշալի և
երջանիկ տեսիլքի մէջ բռնում է զերագոյն սրբու-
թիւնը և աշխատում է այն ամբողջապէս իր հոգու
մէջ ամփոփել: Ես էլ տարիներից յետոյ բանել էի
իմ երազը, և այժմ, երբ ուզում էի նրա պատկերն
իր բոլոր գրաւիչ մանրամասնութիւններով դրօշմել
հոգուս վրայ, զարմանքով տեսայ, որ նա վաղուց
ի վեր այնաւել է: Հոգիս մի կաղապար էր, իսկ
և իսկ այս տեսիլքի ձեռվ, որ սէրը եկաւ ու լցրեց
ծանօթ պատկերով: Երեակայութեանս հետ խաղա-
ցող սքանչելի ձեւերը, այս գեղանի դէմքի թուիչ
մանրամասնութիւնները այն աստիճան ծանօթ էին
ինձ, որ եթէ յանկարծ կուրանայի, դարձեալ աւելի
լաւ կը տեսնէի, քան բաց աշքով:

Եւ վրձինս շարժում էի առանց նայելու: Ան-
խան ու բուռն զգացմունքով փոթորկուած իմ հո-
գին յափշտակութեան այս զերագոյն վայրկեանում
իր ծոցից գուրս էր մղում կանացի սքանչելի ձեւերը
բնութիւնը, որ երկունքի անդուն ձիգերով կերտում
է այնքան աշխարհներ, ծնում է այնքան կիանքեր:
Առաջ նստած հմայիչ կինը իսկապէս իմ հոգումն էր
ապրում, և նրա բոլոր ձեւերը իմ ներքին զգաց-
ապրում, և նրա բոլոր ձեւերը իմ ներքին զգաց-
ապրում մէջ զատած անխան ու կատար-

եալ գեղեցկոթեամբ զուրս էին զալիս և աչքիս
առաջ կանգնում։ Դիու երէք ես այսպէս խորունկ
կերպով չէի զզացել ստեղծագործող արուեստի մհծ
պօէցիան։

Սստուծութիւնն էր շարժում իմ ձեռքը։

— Դու ի՞նչ տարօրինակ ես, ի՞նչ պատահեց
քեզ, շաչքերդ փայլում են, կարծես ինքնամուսաց
յափտակութեան մեջ լինես։

— Գեղարուեստը պաշտամունք է մի գերագոյն
էակի, մի՛ շարժուիր, խնդրում եմ։

— Դու այնքան քիչ ես նայում նկարելի, որ
կարելի է ասել՝ փակ աչքով ես նկարում։

— Այս՝, իմ ընկեր, ես քեզ կարող եմ նկարել
նայնիսկ առանց նայելու, և իմ գործը անուանենայնիւ կատարեալ կը լինի։ Երբ արաւեստը մղումն
է սոսնում սիրոց, նա ամենակարող աստուած է, ինձ թւում է, թէ նկարել, կերտել, քանդակել
կարելի է միայն այն, ինչ մենք սիրում ենք խորա-
պէս։ Չոր, փշացած սրտերը միշտ ամուլ են։ Եթէ
այս աշխարհը մի աստուած է յօրինել, ապա նա
պաշտում է իր ձեռագործը, որի յաւիտենական
գաղափարը իր հոգուց է գուրս քաշել ինչպէս իր
էութեան մի կտորը։

Դուռը կամացուկ բացուեց և չէմքի վրայ
յայտնուեց տանտիկինը։

— Օրիորդը զարթնեց ու ուզեց տեսնել, թէ
պարոնն ի՞նչպէս է նկարում ձեզ, արկին, ասաց նա
ժպտալով. ահա նա էլ եկաւ։

Եւ նոյն վայրկենին պառաւի թիկունքից երևաց
օրիորդի վախկոտ, գունատ պատկերը իր հանգած
աչքերով, իր մեղմ զիմագծերով. նա մի վայրկեան
գաղտագովի նայեց մեզ տանտիկնոց ուսի վրացից,

ապա թողեց ու վախու զէպի վեր, իր սենեակը։
Մենք լսեցինք միայն նրա բարձրաձայն քըքիչը, որ
հնչուեց աստիճանների վրայ, և յետոյ դրան ձայնը,
որ թըսկոցով բացուեց ու խփուեց։ Ես մնացի
շուարած։ Մարգարիտը ոտքի կանգնեց գունատուած.
մենք իրար նայեցինք ակամայ, և անշուշտ մեր
մտքերը նոյնն էին։ Տանտիկինը առանց մտածելու
մեղ մատնել էր. կատարուածը անախորժ էր, շա-
մափականց անախորժ։ Մարգարիտը շտապեց զէպի
վեր, ես մնացի ընկծուած ու գմկամակութեամբ
նայում էի այս խղճուկ պառաւին, որ ըստ երեսիթին
բնաւ չէր հասկանում, թէ ինչ կատարուեց։

— Ներս մտայ, զարթնեց, — պատմում էր նա
միամտաբար. — այնպէս ուրախ էր, ծիծաղում էր,
կատակներ էր անում։ Հարցրեց քրոջ մասին, ա-
սացի ներքեւումն է, պարոնը նրան նկարում է։ Եա-
ւելի ուրախացաւ։ «Պարոնն այսպէս երկար, եր-
կար մազեր տնի» ասաց, ձեռքով զանազան շար-
ժումներ արեց ու ծիծաղեց։ Այնպէս լաւ էր ծիծա-
ժումներ արեց ու ծիծաղեց։ Ես հազցրի, եկանք, հազիւ. ձեզ տեսա-
նկարում»։ Ես հազցրի, եկանք, հազիւ. ձեզ տեսա-
նկարում։ ծիծաղելով։ Նատ է ծիծաղում, —վերջա-
ռ վիախաւ ծիծաղելով։ Նատ է ծիծաղում, —վերջա-
ռ վիախաւ ծիծաղում։ լաւ չէ, որ աւոր այն-
պէս... խեղզ աղջիկ։

Ես այլիս նրան չէի լսում, ամբողջ ուշքս կենտ-
րացացել էր պատահածի վրայ. Մարգարիտի գունատ
պատկերը մի վայրկեան չէր հեռանում աչքից։ Շու-
տով վերի սենեակից խառնիսուոն ձայններ լսուե-
ցին. ես ծանօթ էի աղդ ձայներին, սկսւում էր մէկն
այն ներվալին դրութիւններից, երբ այդ խեղզ հի-
անդը դառնում էր անտանելի։ Ես լսում էի, թէ

ինչպէս նա փոխառվոխ ծիծաղում է, լարիս, ճշում գէսուզէն չպրտում ձեռքի տակ ընկած իրերը : Ի՞նչ էր պահանջում այդ խեղճ խեղաթիւրուած հոգին, ինչու էր այդպէս աղդել նրա վրայ մեր երկուսին միասին տեսնելը, ևս չգիտէի, բայց նրա աղաղակները քրքրում էին իմ հոգին : Սիրտ չէի անում վեր բարձրանալ իմ սենեակը, վախենում էի սարսափելի բաներ լսել : Մի ժամանակ նրա այսպիսի կացութիւնը զարթեցնում էի իմ հոգում այն հասկանալի կարեկցութիւնը, որ զգում ենք մեր նմանի դժբախտութեան առաջ : Այդ աւերտուած հոգին ինձ յուզում էր ինչպէս մի տրորուած ծաղիկ, փշուած տունկ կամ մի թևակառուոր թուչուն, որ վեր խոյանալու իր ցաւոս անկարողութեան մէջ մերթ լուս նայում է զէսի բարձունքները, մերթ անօգուտ փորձեր է անում, ձշալով ու թրապտալով գետնի երեսին : Խորոնկ, ազնուացնող մի կարեկցութիւն էր այն, որի տակից չեն ցցւում խղձի խայթի թունաւոր փշերը : Այժմ ես զարձեալ ցաւում էի, բայց անորոշ կերպով զգում էի, որ կատարուածի մէջ անման չեմ: Ես այն մարդի կացութեան մէջ էի, որ մի դժբախտ գիտուածով ճանապարհի վրայ ուսքով տրորում է մի անմեղ արարած, ապա աչքերն անզօր արցանքով լի՛ տեսնում է իր զո՞ի ցաւոս գլարումները :

Եւ սրտաճմիկ աղաղակները արունակում էին լուսել վերից, զուութիւնս զաւնում էր անսանելի : Տանտիկինս վազուց էր զուրս զնացել՝ թողնելով, որ ես անձնատուր լինեմ իմ ծանր խոհերին : Չըզիւտէի ինչ անել, վերեն, զնալ, թէ՛ փախչել զուրս, գրձնը ձեռքիս, սիրած կնոջ կիսատ պատկերն

առաջիս, և հոգիս աղմկուած անորոշ երկիրդի և իղձի խայթի զգացմանքով և քարացել էի տեղում : Յանկարծ ներս ընկաւ Մարգարիտը՝ յուզում, աչքերն արցանքով լի՛, չորերն անկարծ, ինչւած, պէս ձողովրած ու փախած մէկի ձեռքից :

— Մարսափելի է, սարսափելի է, բացականչեց նա՝ նետուելով բաղկախտոի վրայ և զլուխը ձեռքերի մէջ առած, սկսում է փոթորփկը, տարիների լուութիւնը խզուեց, քարը խօսեց... Նա ասում էր, որ ես խլում եմ քեզ նրանից, նա հաւատացած է, որ դու նրան ես սիրում, խսկ ես մէջ եմ ընկել է, անիծում էր ինձ, մօրս, աշխարհը, խանգարելու, անիծում էր ինձ, ո՛չ ինձ, ո՛չ քեզ, թող երթայ, հեռանայ ասում էր, ո՛չ ինձ, ո՛չ քեզ, թող նա էլ զնոյ ծովերի տակը, հասկանո՞ւմ ես, թո՞ղ նա էլ զնոյ ծովերի տակը, հին պատմութիւնը միշեց անքան ծովերի տակը, հին պատմութիւնը միշեց անզամ, Մարսափելի է... կեանք, ցաւերի պարտէղ :

Ես խօսք չօւնէի ո՛չ միսիթարելու, ոչ պատախանելու, ևս նմանում էի լեռնալունցի այն վիրաւ ուրին, որ տեսնում է եթերում իր գլխին ոսւանող արձիւր, և բաց է թողնում իր վիրաւոր կործքը, որ նա իջնի ու քրքրի : Կեանք, ցաւերի պարտէղ :

— Ի՞նչ պէտք է, անել, Տէ՛ր Աստուած, — շարունակեց Մարգարիտը՝ վլուխը բարձրացնելով .

— ո՛ւն, այս նկա՞րը, բացականէց նա յանկարծ, վերկացաւ, թափով խից ու ձմռեց ձեռների մէջ :

— Ի՞նչ արիր, ի՞նչ արիր, — բացականչեցի, ես, բայց արդէն ուշ էր, տրորած, պատած նկարը ձեռքին՝ նա սենեակից շտապով դուրս զնաց, երևի ձեռքին՝ նա սենեակից շտապով դուրս զնաց, դարձեալ տարաւ, այդ զնով քրոջը հանգուտացնելու :

միացի մենակ , շշմած ու փշտուած : Կարծես մի կայ-
ծակ էր , որ ճամփեց գլխիս և ես չէի կարաղանում
ու շքի գալ ծանր յնցումից : Բնակարանը դարձաւ
մի բանտ , որ խեղդում էր ինձ : Թէև ճաշը մօտ էր ,
բայց դուրս ընկայ ինչպէս փախստական և եթէ
չամաչէի , կը զագէի որքան կարելի է հեռու , հե-
ռու : Լայնարձակ դաշտն առաջս էր , սկսեցի քայլել
առանց ինձ հաշիւ տալու : Գլխիս վրայ ժանրացած
էր երկինքը , իսկ սրտիս վրայ մի բեռ , անորոշ բեռ ,
որի ինչ լինելը չէի համարձակուում պարզել : Առա-
ջին անգամն էի զգում մի հեռաւոր վտանգ , որ
մութ ֆանտոմի պէս ցցւում էր իմ սիրոյ ճանապար-
հին և իմ ապագայի պարզ գիտակցութիւնը պղտո-
րում : Իմ երջանկութեան մէջ ես խապառ մոռացու-
թեան էի տուել այն դժբախտ էակին , ոյդ խեզ կլարային , որ խակոսէս իմ սիրոյ սկզբնապատճառը
եղաւ . մոռացել էի նոյնիսկ , որ նա ապրում է , կայ ,
մոռացել էի նրա ցաւալի պատմութիւնը : Ես խամ-
քալ զատել էի նրանից իմ սիրած էակին՝ Մարգարի-
տին , կտրել էի նրանց կապերը և երջանիկ էի : Այժմ
այդ մոռացուած արարածը , այդ կապտուած հազին
գալիս էր ասելու , թէ ինքը ո՛չ միայն կայ , այլ
կապտուած է ինձ հետ , աշխարհի հետ թէև անհնիւթ՝
բայց այնպիսի ամուր կապերավ , որնցից հեշտու-
թեամբ աղատուել չի կարելի : Փոթորկի տակ հեծե-
ծող ծառն էր նա , որ արմատից ճանչում էր ցաւով ,
բայց մենակ խորակուել չէր ուզում , կախուել էր
կեանքից : Քար լուսթիւնն էր խօսում , և նրա ձայնը
սպասնալի ու վրէ ժինդիր հնչուում էր մեր դրու-
ների վրայ , կարծես հաշիւ էր պահանջում աշխար-
հից իրան վիճակուած ճակատագրի համար :

Եւ այն լացն ու ծիծա՛զը . . .

Մէկը ցաւ՝ միւսը հեղնութիւն , սւմ վրայ է
ցաւում կամ ում է հեղնում այդ դժբախտ արարածը ,
« ի՞նձ , ի՞նձ , ի՞նձ » ... իմ սեփական փոխոցից
ես վախենում էի :

Լաց ու ծիծա՛զ ... ի՞նչ են նրանք , միայն աղա-
զակներ . աշխարհը լի է նրանցով . միթէ նրանց
ելեւ չների մէջ հէնց իմ դառավգիրն է հնչուում : Ո՞վ
կարող է իմանալ , թէ ո՞րտեղ և ո՞վ է վճռում իր
բախուը :

Լաց ու ծիծա՛զ ... ցաւ ու հեղնութիւն , նրանք
ծանրացած են մարդկութեան տառապալից գլխին ,
իւրաքանչիւր ոք լսում է քրքիններ ու հեկեկոց ե-
կեանգը ցաւի ուժգնութիւնից ծիծաղում է ու լալիս
միաժամանակ : Հեղնութիւնն , անխառն երջանկու-
թիւնը հեղնութիւն է ...

Հոգիս տառապում էր այդ հսկայական հեղ-
նութիւնից : Վերև՝ ըլրի վրայ կծկուած էր ծերների
խրձիթը , և ծխի պառարը այնտեղից դեռ բարձրա-
նում էր ոլոր-մոլոր : Աշնան թխապոտ երկինքը ցո-
ղերով լցի էլ նոր ըեռ չէր ուզում , և ծուխը տա-
պակ՝ տապակ ծաւալւում ու անշարժ կանգնում էր
խրձիթի վրայ պարէս թանձր ու գորշ աստառ երկ-
նաշին հսկայական վրանի : Ծխի և ամպերի րեսի
տակ խրձիթն այնուամենանիւ ապրում էր , մի կոձըը
բառական էր եղել այնտեղ կինդանութիւն սփուրու :
Այստեղ գուցէ ոչ լաց կար և ո՛չ ծիծաղ , ո՛չ ցաւ ,
ո՛չ հեղնութիւն , իշխովը բութ անդիտակցութիւնն
էր , ափոփիչ մոռացութիւնը :

Երանի՛ ձեզ . . .

Եւ քայլեցի հեռու :

Գետն էր առաջս . յորդացած ու կատաղի նա

թաւալ—թաւալ զարկւում էր ափերին, ծեծում էր միենայն ժայռի կուրծքը, ծեծում էր, քրքջում ու հեծեծում:

Լաց ու ծիծաղ և այստեղ. գետի յորձանքները յաւում էին ու հեգնում. նրանց խուլ մանչոցի մէջ լսւում էր ափեզերական համերգը, կոյր ոյժերը զառնցում էին, թէ երջանկութիւնը անկարելի է. յօյս, ու յօյզ, մէր ու իղձեր, ձգտում ու երազ լոկ ցաւ են ու հեգնութիւն: Ահ, տարուել, տարուել այդ յորձանքների մէջ. ե՞ս էլ, ամենքն էլ, ողջ մարդկութիւնը:

Հոգիս ուռած էր արցունքավ:

— Գնաց, գնաց, գնաց . . .

Փոքրիկ աղջիկն էր վազում գետափով և ճշում սրտապատառ, և ալիքները մոմաւով բերում էին այծին: Իմ զոյգ բարեկամները . . . որսիսի դժբախտ զուգաղիպութիւն. կենդանին երեխ փախել էր նրա ձեռքից, վազել և գետը գլորուել:

— Գնաց, գնաց . . .

Այծն էլի մի քանի պատյա գործեց ալիքների մէջ, որսնք յորձանք տուխն մեծ ժայռի տակ և իրանց զոհին ծածկեցին անդունդներում:

Աղջիկը չարունակում էր վաղել ճշալով. նա դեռ յօյս ունէր, չէր ուզում ընդունել, որ կորուստն անդառնալի է:

— Կա՛ց, կա՛ց, իմ փոքրիկ:

Նա իմ ձայնը չլոեց. վազում էր գետափի մաշառների ու քարերի միջով, ճշում էր աղիսղորմ կերպով առանց նայելու գետին, ուր այծը վալուց էր ծածկուած: Մացառները պատուաւմ էին նրա էր ծածկուած: Ծուէն—ծուէն կախկխելով, քարերի զգեստները ծուէն—ծուէն կախկխելով.

Վրայ նա ընկնում էր, դարձեալ վեր կենում ու վազում անընդհատ:

— Կա՛ց, կա՛ց, իմ փոքրիկ:

Ես արգէն մօս էի, ես կանգ առաւ, վերջին անդամ նայեց ալիքներին, որսնք մամուռմ էին ու պայուններ էին գործում ժայռերի տակ. այծը չկար: Փոքրիկ աղջիկը յովնած, ուժասովանաւեց մի քարի վրայ, զլուխը ձեւների մէջ առաւ և դանս դառն հեկեկաց:

Կեանքի ալիքները առաջին անդամ թաղեցին նրա յոյսերը:

Ես մօտեցայ, մեր ցաւերը նոյնն էին, ձեռքից բռնեցի և աշխատում էի մխիթարել. խօսք չգտայ, գրկեցի փոքրիկ, գանդրահեր զլուխը, և զպուած արցունքներա թափուեցին: Ես լալիս էի իմ խեղճ մէրը, իմ վարդ յօյսերը, որսնց վրայ խտացած էր մի շանթարեր ամպ, իսկ աղջիկը իր այծը:

Եւ գետը մեր ուների տակ քրքջում էր ու մանչում. նա հեգնում էր մեր ցաւն ու լացը:

Լա՛ց ու ծիծաղ, ցաւ ու հեգնութիւն:

XIII

Գիշերը. գիշերը . . . ով կը տար ինձ անմիշ գիշեր. գիշերը . . . ով կը տար ինձ անմիշ շտակը մի մաթ ու անձան գիշեր, որպէսզի ես վերսախն կարսղանայի դգալ նրան ինձ մօս, փարել նրան նիրհող խաւարի մէջ: համբ լոռնթեան զրկում: Իմ զերագոյն լզն էր շտառով լսել նրա շրթունքներից, թէ նա իմն է և աշխարհում ոչինչ չի կարող այլես մեզ անջանել. նրա մի հատիկ համբոյրի ջերայլես մեզ անջանել. կարող էր ցրել լուր իմ մաթ կասկածմութիւնը կարող էր ցրել լուր իմ մաթ կասկած-

ները, որոնք անսպասելի ամպի պէս խտացած՝ խեղդում էին ինձ։ Եւ յետոյ պէտք էր խօսել, խօսել։ Նա աշնչան բան կարաղ էր ասել մեր խուսափող երջանկութիւնը բռնելու համար։

Գիշերը . . . բայց զեռ մի քանի ժամ կար մինչև նրա գալը, մի քանի ժամ . . . մի յաւիտենականութիւն։ Հոգիս այսում էր անհամբերութիւնից։ Ինձ թւռում էր, թէ մինչև կը հասնի նաև այդ փրկարար ու սփոփիչ խաւարը իր անվերջ յօրանջող ու երազող լոռութիւնով, կը պատահի մի անդառնալի, մի վըճռական բան, որ կը խորտակի իմ երջանկութիւնը։ Իրօք ինչ պիտի պատահէր, ինչումն էր կայանում վատանգը՝ ևս որոշակի ասել չէր կարող, բայց վախենում էր, հոգուս մէջ խախտուած էր հաստատոն յսոր, երկիւղը չար օձի ովէս ներս էր սովում այնտեղ, և ես ինձ զգում էի պաշարուած ու հարածական։ Գիշերը, միայն նա կը փրկէր ինձ։

Եւ սպասում էի խաւարին, բայց մի չարախնդաց զուգագիսպաւթեալոյ այդ մառախլապատ, ամպամած օրը վառ ու երկար վերջալոյս անեցաւ։ Սրեմուտքում ամպերը շառագանեցին և երկար ժամանակ կախուած էին յենների վրայ ինչպէս հնկայական լապտերներ, որոնք արեի ծածկուելուց յետոյ ասես աշխատում էին որքան կարելի է երկար ժամանակ լուսաւորել խաւարող բնութիւնը։ Դա մի ցաւոս վերջալոյս էր, որպէս հագելարքը մարտում ընկած երիտասարդ վիրաւորի, որ հեշտութեամբ չի ուզում բաժանուել կեանքից, աշխարհից, իր վարդ երազներից։

Եւ խաւարը չէր գալիս, երկինքը չէր միմում, շառագունել էր ու մնացել, « մահկանացուի ցաւերը նեղնող անողնըմ բնութիւն», մտածում էի ես՝ նաև յելով կարմրատակած ամպերին։

Ամբողջ օրը երկու քոյրերը փակուած մնացին իրանց սենեակում, և ես հակառակ իմ բոլոր ջանքերի անկարող եղայ տեսնել Մարգարիտին։ Վարկ կիջնէր նա բնմթրիքին, թէ ոչ, ես չգիտէի. բայց վաղուց էի սեղանատանը և ողասում էի սրտատրով՝ քայլելով յետ ու առաջ։

Նա ներս եկաւ գունատ ու տանջուած, աչքերի մէջ անօրինակ վիշտ։ Ես նրան յանախ էի տեսել տիսուր, բայց այսքան խորունկ ցաւ դեռ երբէք չէր մուալիել նրա բաց, բարձր ճակատը։ Նա քիչ կերաւ, շատ լուռ մնաց, տանախիկնոց հարցին պատախանեց հատ—հատ բառերով։ Երբեմն—երբեմն նայում էր ինձ մի հայեացքով, ար ես կարդում էի արգահատանք զէսի ինձ։ Տանախիկնը շարտնակ ներկայ էր, խօսել չէր լինում. Նա հազիւ ժամանակ գտաւ ինձ ասելու, որ զիշերը պարտէզ իջնեմ։ Երեկ ասելիքք լուրջ էր ու երկար, այլապէս նա չէր իջնի պարտէզ գիշերով, երբ այնպէս խոնաւ. էր ու ցուրս։

Ժամանակից շատ առաջ ես արգէն այնաւել էի, յիշողութիւններով հարտատ վայրում, ար երկու ինձորենի գլուխ գլխի տուած զոյց քոյրերի ովէս՝ հովանի էին անում մի նստարանի վրայ։ Մոայլ զիշեր էր, մինալորտը տամակ, որ թափանցում էր իմ զգեստները և հասնում մարմնիս։ Հով չկար, բայց և այնպէս մի—մի տերեւ պոկւում ծառից և փսփսուկով ընկնում իմ գլխի վրայ կամ ոտներիս առաջ։ Աշնան խղճուկ ու թօչնած տերեւ, որ մեռնում էր որպէս փշրուած յոյս՝ այլես երբէք չփերածնելու համար։ Հեռուից լսում էր վարարած գետակի շառաչը, նա դարձեալ ծեծում էր իր ափերը, դարձեալ հեղնում ու սգում և լուռ խաւարը արձագանդ էր

տալիս նրա ցաւոտ հեծեծանքներին ու խենթ քրքիւներին : Ե՞ն այս կեանքը . . . ինչ կատարւում է մեր աշքի առաջ, ինչ մենք աեւնում ենք, չօշափում և զգում, այն եղիկիվ է, լացի և հեգնութեան արժանի, իսկ այն՝ ինչ թագնուած է մեծ լսութեան տակ, միշտ խուսափում է մեզանից : Ո՞ւր է խորհուրդը մեր ցաւոտ զոյութեան : Մտքերս ուե էին :

Նուիրական լուսմուտը գարձեալ թարթում էր
վերից . բայց ևս սիրտ չունէի նրան նայելու . երկու
ձեռքով ու ծնողով յենուած ձեռնափայտիս, ևս
նայում էի դէպի հեռուն, և վշտացած ու հա ածա-
կան դեի պէս իմ հայեացքը կորչում էր թանձր
խաւարում, որի անհուն ծոցում ես փնդրում էի լու-
ծումը ինձ տանջող առեղծուածի : Կեանքի ցաւոտ
գաղանիքը ես փնդրում էի խաւարի մէջ, որի իւ-
րաքանչիւր մութ ծալքը ինձ համար ցափ մի ձև էր :
Ամպերի աակից հատ - հատ աստղեր երեւում էին ու
ծածկուում, որպէս ծնուռող ու մեռնաղ յոյսեր մարդ-
կացին հագիներաւմ :

390

Բայց մի՞թէ նրանք բոլորը պէտք է մեռնեն իմ
սգում, մի՞թէ այն հիւանդ աղջկայ գունատ ու-
րսականը, որ այնպէս ցաւագնօրէն և սպառնալի
հցցում է մեր մէջ՝ պիտի կարողանայ իր սառն,
զերեզմանացին չնշով խամրել մեր սիրոյ այնքան
փարթամ ծաղկելը. մի՞թէ Մարգարիտը նրա երկիւ-
ղից պիտի խոյս տայ ինձանից և դժբախտացնի թէ
ինձ, թէ իրան: Վերջապէս սկզ է կապել մեր բախ-
տերը նրա հետ. ինչու նրա սե ճակատագիրը, որ
արդիսք է մարգկային պարտաւորութիւնների իր
անհեթեթ հասկացողութեան, պիտի ծանրանայ նաև

մեզ վրայ : Աչխարհում իւրաքանչիւր արարած
կեանքի և երջանկութեան իր անլունարարելի իրա-
ւունքներն ունի . զո՞երը գեղեցիկ են ու նուիրա-
կան, երբ իմաստ ունին, ինչո՞ւ թաղել սեփական
կեանքը մի ուրիշ ոտների տակ, երբ դրանով ոչինչ
չի կարելի ուղղել :

Փախչել, փախչել, մտածում էի ես, եթէ Ոարգարիսը իսկապէս սիրում է ինձ, ապա նա յանձն կ'առնի հեռանալ ինձ հետ, մի սէր պարտակելու, ծածկելու համար աշխարհը չափազանց լայն է : Այս պէս էի մտածում ես, և իմ սեփական տրամաբանութիւնն այն աստիճանի խելացի, հիմնաւոր թուաց ինձ, որ խոռված հոգիս մի փոքր հանդստացաւ : Հաւատացած էի, որ Մարգարիտը կը համոզուի, մենք կը յայսնենք մօրը և կը հեռանանք : Քրոջը խարելը երբէք դժուար չեր լինի: Այս միտքն այնպէս գրաւեց ինձ, որ կ'ուղէի վալրկեան առաջ բաժնել Մարգարիտի հետ: Փախչել, շուտով փախչել, այս երկու բառերը կախուած էին իմ շրթունքից, և ես ակարայ անդադար կրկնում էի ինքս ինձ և հայում գէպի դռւոր, որտեղից պիտի յացտնուէր սպասածս կինը :

Եւ նա եկաւ, ինչպէս միշտ՝ թեհքնաբանը ։ Եւ ոտքի թռայ, ձեռներս տարածեցի դէպի երկչափ։ Ես ոտքի թռայ, ձեռներս տարածեցի կամչեցի։

— Փախչենք, փախչենք, Սարգարդուն,
տա ինձ, դա խալապոյն ելքն է: — Պատասխանի
փոխարէն նա երկու ձեռքս բռնեց և նայում էր
դէմքիս լռութեամբ, կարծես նոյնիսկ խաւարի մի-
ջից աշխատում էր հօգիս կարգաւ: Ես մնացի կար-
կարծ:

— Երեխա՛յ, Երեխա՛յ, ասաց նա զլուխն օրոշելով անուշ յանդիմանութեամբ .— ուր փախչե՞ք, մարդ ինքն իրանից ի՞նչպէս կարող է փախչել . վասնդի առաջ նսասիրութիւնն է խօսւմ քո մէջ , իմ ընկեր: Փախտուափի ժամանակ ամեն տեսակ բեռ կարելի է ձգել ճանապարհն , բացի այն, որ մենք կրում ենք մեր հոգում: Նստիր , նստիր այսակ ուրիշ ինձ:

— Ո՞ , ոչ , ոչ , նախ ասա՛ , որ դու ինձ սարսափելի բան հազարդելու չես, ասա՛ , որ դու դարձեալ իմն ես , որ ամեն ինչ կորած չէ , ասա՛ , որ այսօրուայ տխուր միջնադէպը անդառնալի անջատման նախարանը չէ:

— Նստիր , քեզ ասում եմ , այսքան լալկան փոքրօգութիւնը անվայել է մի աղամարդի , ես քեզ անուանում եմ երեխայ , բայց էլի . . . սարսափելի բան չկայ , միայն խօսք տուր ինձ լսել հանդարտութիւնը , և հաւատացած եղիր , ինչ էլ ասելու լինեմ , դա մեր երջանկութեան համար է:

Մենք տեղ բռնեցինք նստարանի վրայ:

— Այնպէս չէ՞ , , սի՞րելիս , դու կը կատարես , ինչ որ պահանջեմ քեզանից , շարունակեց նա . — միշում ես , դու ինձ խօսք ես տուել հէնց այս նստարանի վրայ , այս իսկ ծառերի տակ , որոնք մեր առաջն համբոյրի , մեր ուխտի վկաներն են եղել: Այժմ հասել է ժամանակը , ասա՛ , կամինում ես կատարել քո տաւած խոստումը , թէ ոչ:

— Բայց . . .

— Ոչ մի քայց» . ինչքան և քեզ սիրելիս լինիմ , ինձ համար մահու չափ ծանր կը լինի եթէ սիրածս աղամարդը խոստմնազանց լինի :

— Քո ցանկութիւնն ինձ համար օրէնք է , միայն աղաջում եմ , ասա՛ չուտով:

— Այդպէս , ես այդպէս էլ սպասում էի , այժմ լսիր առանց վրդովուելու և յուզուելու . դու պէտք է հեռանաս այստեղից վազը և եթ :

— Ահողո՞րմ . . . անողո՞րմ . . .

— Դու լաց ես լինում . . . ա՛խ դու երեխայ , կարծում ես , որ քո բացակայութիւնն ինձ համար առելի մի՞չ արժէ , քանի իմը քեզ համար : Կեանքն այդպէս , իմ ընկեր , իմ ին՛դ փիլիսոփայ , մեր է այդպէս , իմ ընկեր , իմ ին՛դ փիլիսոփայ , մեր վայելքի , երջանկութեան իւրաքանչիւր վայրկեանը մինք ստիպուած ենք ձեռք բերել դոհերով , այն էլ լսու է , որ զոհի և արցունքի մէջ համաչափութիւն լսու է , այս պէտք է արցունքի մէջ համաչափութիւն լսու է , այս պէտք է հեռանաս :

— Բայց ինչո՞ւ . . . ինչո՞ւ . . .

— Դու դարձեալ հեկեկում ես , մի՞թէ ես պէտք չունիմ քաջալերութեան , սփոփիշ խօսքերի , ուր վինդիմ միխթարութիւն , երբ դու արտասում ես : Գերազոյն անհրաժեշտութիւնն է մեր անմիջական անջատումը , հազարնդուենք , հոգիս , որ բոլոր չկորցնենք : Դու գիտես , որ հիւանդ գլուխների մէջ կորցնենք : Դու գիտես , որ հիւանդ գլուխների մէջ որեւէ գաղափար մեխի պէս ցցուում է անդառնալի որեւէ գաղափար մեխի պէս ցցուում է անդառնալի կերպով : Եկեղէ քրիստոնութեան է , որ դու նրան պիրում ես , ու անդադար կրկնում է , թէ ես նրա ծանապարհը փակում եմ : Նրա ատելութիւնը դէպի ինձ զարհութելի է . այսօր սենեակում նա քիչ մնաց ինձ զարհութելի է . այսօր սենեակում նա քիչ մնաց բոլոր շորերա պատառուեէր . եռ վար իջայ . յատկապէս նրա պահանջով , նկարը վերև տարայ , պատուցի , այլապէս ամեռովզ սենեակը քարուքանդ էր անում : Դա մի խենթ կատաղութիւնն էր , որպիսին ես դեռ

երբէք չէի տեսնել : Նա այսօր հին , կուտակուած մաղձն էր դուրս թափում , սարսափելի էր նրան տեսնել : Ես հաւատացած եմ , որ նա այդպէս էլ կը մնայ և՝ վազը , և՝ միւս օրը , և՝ միշտ , քանի դռ այստեղ ես . ահա թէ ինչո՞ւ պէտք է հեռանաս և անմիջապէս :

— 3 hours . . .

— Յեսոյ . . . ես այդ էլ եմ մտածել, ես գիտէի, որ դու այդ պիտի հարցնես, այսօր զբեցի, որ մայրս շուտով գայ, ես նրան կը պատմեմ բոլորը. ես կը յաբոնեմ նրան նաև իմ անդառնալի վճիռը քեզ հետ ամուսնանալու, ապա մենք քաղաք կը գանք, ուր մեր տեսակցութիւնը յոյս ունիմ անկարելի չի լինի:

— Знай... .

— Մեր ապագան, մեր երջանկութիւնը ինձ
հաւատա, սիրելիս, և վստահ եղի՛ք: Թո՛ղ որ այս
փոթորիկն անցնի, այս ծանր համդամանքները մի
փոքր պարզուեն նաև ինձ համար. մնացածը մենք
կը տեսնենք: Բառականացիք այս իմ հաշվիսաւոր
խոստումով — ես կամ քոնն եմ, կամ գերեզմանին:
Մի՛ լինիր այդքան պահանջող, չչո՞ր հս էլ եմ
ընկճուած այս անակնկալ դիպուածի ծանրութեան
տակ, դու այնպէս ես պահում քեզ, ասես հարուածը
միայն զու ես ստացել: Իսկ ե՞ս . . . չչո՞ր ես էլ եմ
կարօտ օգնութեան, քաջալերութեան, միսիթարու-
թեան...

Նրա ձայնը խղուեց, և արցունքները թափուեցին աչքերից :

Ես կամացուկ գրիեցի զլուխը և համբուրուս
էի թաց աչքերը ու մեղմին միսիթարում:

— Քո սիրով համար, հոգիս, չկայ այնքան ծանր

զոհողաթիւն, որ ես յանձն առնել չկարողանամ,
ես յարո կը մեկնեմ անպատճառ :

կապահակառման անկողնիս

Խաղերը։
Խոստացայ մեկնել, երբ միասին էինք, այժմ
մենակ մնալով՝ զգում էի այդ սարսափելի խոս-
տումիս բոլոր ծանրութիւնը։ Ուր մեկնեմ և ինչո՞ւ։
Ի՞նչպէս հարելի է զատել իրարից մարմինն ու հո-
գին և յետոյ ստիպել նրանց, որ ապրեն առան-
ձին-տուանձին։ Ի՞նչպէս կ'ուզէի վերտանին տեսնե-
նրան, որ իմ վշտի և երջանկութեան աղքիւրն էր,
ծունկ չոգել առաջը աղերսել որ յետ տայ ինձ
տուածս սարսափելի խոստումը, որ չստիպի ինձ
մեկնել։ Ես նրան կ'ասէի. «Ների՛ր ինձ, չո՞գիս
ես ոյժ չունիմ, ես անկարող եմ առանց քեզ ապրել։
Համարիր ինձ երեխայ, փոքրոգի, ուրիշ եւ ինչ կ'ու-

զես, բայց չեմ կարող, ևս կը մնանեմ առանց քեզ»։ Բայց նա չկար, մնանակ էի սենեակումս, խաւարը թանձրանում էր ու ճնշում իմ կուրծքը ինչպէս մի մոտք զանգուած։ Ի՞նչ պէտք էր անել. վեր կացայ, մօտեցայ լուսամուտին և նայում էի դէպի դուրսը, ուր նոյնպէս խաւար էր, որպէս իմ սրտում, նայում էի և մտածում, դուրս չզամ արդեօք և քայլեմ այդ խաւարի միջից հեռու, հեռու, դէպի լեռները և մթին ձորերը, գնամ՝ էլ երբէք յետ չդառնալու համար։ Զէ՞ որ ես համարեա հալածական էի, մերժուած ու խեղճ... գնամ, յետոյ... ուն դարձեալ այս «յետոյ» ն, ոչ նրանից ազատուելու ոյժ և ոչ ընկճելու քաջութիւն էի զգում։ Դուսս կամացուկ քսաց ձխանի վրայ, սիրսս թունդ ելաւ, ես թափով յետ դարձայ, նա՛ էր... քիչ մնաց բարձրաձայն ճշամ։ «Զե՞մ գնայ, չեմ գնայ, Մարդարիտ, ազատիր ինձ իմ ծանր խոստութից»։ Բայց նա իր սովորութեան համեմատ երկու ձեռքով փակեց բերանս։

— Առջւս, սո՛ւս, ի՞մ ընկեր... այս վերջին խենթութիւնն է, որ ես կատարում եմ քեզ համար... յանցաւոր խենթութիւն, այնպէս չէ՞... բայց նա խորը քնած է օրուայ ցնցումներից յետոյ... համբերել չկարողացայ... եկայ վերջին անգամ իմ բուռն սիրոյ ապացոյցը տալու... անջատումը հիմայ էլ այնպէս ծանր չի լինի քեզ համար, այնպէս չէ՞...,

Մոռացայ լոլորն, ինչ ուզում էի նրան ասել, իմ տէրն ու հրամայողն էր խօսում, և ես շէի կարող չնազանդուել, միայն լսում էի նրա հմայիչ ձայնը, գուրգուրիչ փափոցը խաւարի մէջ, լսում էի և երջանիկ էի, այդ երջանիկ վայրկեանների փոխարէն նրա պահանջած զոհաբերութիւնը, այդ ժամա-

նակաւոր անջատումը չափազանց չնշն էր։ Ո՛չ, ես մերժուած, հալածական չէի, Մարդարիտի սիրոյ մթիւնուած, հալածական չէի, Մարդարիտի սիրոյ այս ուժգութիւնը հեշտացնամ էր իմ վիճակը, վերահաստատում այնպէս անսպասելի կերպով խախտուած հաւատու։

Մենք լուս էինք, էլ խօսք չկար, հերթը զգաց- մունքին էր, Մարդարիտը լուս նաստած՝ զլուխը հե- նել էր իմ ուսին, մեղմիւ հեռում էր, ապա կամաց- կամաց խոր քրն մտաւ։

Եզդ չարաբասարիկ օրուայ ընթացքում կրած հոգեկան բուռն յոցքերը երկեի խիստ յոգնեցրել էին նրան։ Ես երջանիկ էի, որ նա այնպէս հանգստա- նում է իմ ուսին, այդ դիրքով նա սրանչելի էր։ Զէի համարձակուում անդամ ամենաչնչն շարժում գործել, որ շխանդարեմ նրա հանգիստը։ Լուսա- բացը հեռու էր, քոյլը շուտով չէր զարթնի, այդ ես գիտեի, վճռեցի անշարժ մնալ, հսկել և երբ արեելքում հորիզոնը գունատուի, արթնացնել Մար- դարիին, որ իր սենեակն անցնի։ Նա շարունակում էր իր խաղաղ և առողջ քունը։ Ես հաճովքով զգում էի նրա մեղմ շունչը իմ աջ այտի վրայ, լսում էի անուշ շնչառութեան ձայնը և մտածում էի այս էի անուշ շնչառութեան ձայնը որ իմ բախտը գրեց տարօրինակ դիպուածի մասին, որ իմ բախտը գրեց այդ քնած գեղեցկունու ձեռքում, որ կապեց մեր կեանքերը անդանալի կերպով։ Այս իրականութիւնը՝ չնայելով իր պատճառած հոգեկան այնքան բուռն, ցաւստ յոցվերին, անտրջի պէս գեղեցիկ էր, երազների հմայքն ունէր։ Այս առեղծուածական կինը մի փոխորիկ էր, որ ինձ տանում էր իր սովորութիւնը մէջ, ես և տասապում էի և երջանիկ էի։ Ների մէջ, ես և տասապում էի և երջանիկ էի։ Երկերի իւրաքանչյուր սէր մի փոխորիկ է, մտածում

էի ես, որ մեզ տանում է բարձունքներից չըմեցնող արագութեամբ . ով ճաշակում է նրա վսեմ քաղցրութրւնը, նա անհրաժեշտապէս պէտք է տանի և դառնութիւնները : Եւ նա հանգչում էր... ինձ վիճակուած փոթորիկը, հանգչում էր հէնց իմ ուսին, ինչպէս իմ անբաժան բախտը, ես վախենում էի նրանից և դողում էի նրա համար :

Գեաը շարունակում էր որոտալ հեռաւորութեան մէջ, և նրա ձայնը, որ քիչ առաջ խօսում էր ցաւից ու հեղնութիւնից, այժմ էլ այնպէս վհատեցուցիչ չէր . ես լուսմ էի նրա խուլ շառաչը առանց սե մտքերի, նրա որոտը նոյնիսկ մի ինչ-որ նիրհեցնող, օրօրող բան ունէր իր մէջ. ականջ էի դնում, և կամաց-կամաց նա ամրողապէս զրաւեց իմ ուշադրութիւնը : Ես վերսախն յիշեցի փոքրիկ աղջկայ դժբախտութիւնը, յիշեցի նրա ահազին վիշտը իր այծի կորուստի համար, և սիրոս ձմլուեց ցաւից: Փոքրիկ հով եկաւ և կամացուկ՝ սլալացրեց լուսամուտիս առաջին գանուող ծառի տերենները . մի թոշան նրա վրայ մեղմիւ ձթձթաց և կրկն քուն մտաւ: Յետոյ ինձ թուաց, թէ փոքրիկ աղջիկը եկել է իմ լուսամուտի տակ կանգնել, լաց է մնում աղխողորմ ձայնով և իր այծը ինդրում ինձանից: Լուսմ էի նրա հեծկլտանքը, վշտա, յուսահատ, որ հոգուս խորքն էր թափանցում. աշխատում էի վեր կենալ, նայել լուսամուտից, կամ վարիչնել, միմիթարել նրան, բայց շարժուել չէի կարողանում . . . Եւ յանկարծ փոքրիկ աղջկայ լալիկն մրմունջները, նրա մեղմ հառաչանքները, գետի որոտը, ծառերի սօսափիւնը դադարեց, և նրանց փոխարէն հէնց իմ ականջի տակ մէկը ճչաց ահա-

գին ձայնով՝ « գո՞զ, գո՞զ, էլլ՛, ուռուն » . . . Զարհուրելի էր, այդ ձայնը կարծես կոկորդից չէր հնչւում, այլ մի պատուած, աւերակ դարձած կրծքից, և իր հնչունների հետ միաժամանակ դուրս էր քաշում սրտի արիւնոտ կտորտանքը: Այդ վերջին « ուռուն » ը . . . դա սոսկ ցաւի հատաշանք չէր, այլ միաժամանակ անհուն վշտի և զայրոյթի աղաղակ, որ որքան աղեխարչ էր, նոյնքան սոսկալի: Այդպէս է ճչում նա, ով յանկարծակի մի աներեսոյթ ուժով տարւում է անդունզների վրայ, բաց աչքով տեսնում է մահը, զգում է նրա շունչը և մեռնել չփ կարողանում: Այդ սպանիչ ծիչը որոտի պէս ձայթեց իմ գլխին, փշաքաղեց մարմինս, ես գողալով ու շշմած ոտքի կանգնեցի և կիսախաւար սենեակում տեսայ ինչպէս Մարգարիտը երկու ձեռքով բազուկս սզմած՝ զողում է իմ կողքին, միենոյն վալրկենին ինչպէս մի յանկարծական երեսոյթ իմ աչքին ներկայացաւ մի այլ ահաւոր երեսոյթ: Ես տեսայ կլարային կից դրան չէմքում կիսամերկ, բազուկներն ու կուրծքը հողանի, հարուստ մաղերը խառնիխուռն փուտած ուսերին, աշքերը չոսած ու զայրացկոտ, զէմքը ծունած, բերանը բաց կարծես մի անհնարին սարապից, ձեռները բողոքող ու սպաննալի ձեռվ. բաց գոներից զէպի մեղ տարածած, նա' էր ճչում այնպէս զարհուրելի կերպով: Այս սպանիչ պատկերը ինչպէս մի շացուցիչ վայլակ անցաւ իմ տչքով. յետոյ կլարան կանգնած տեղը քրքչաց զիլ, երկար, և այդ քրքիջի հնչունները, նրա ալլանդակ եկեկջները գնալով գնալով նուազեցին, ալլայանկարծ մարեցին ինչպէս կտրուած լորի հեծեծանք, և նա ամբողջ հասակով փոռեց

յատակին : Միայն այդ ժամանակ Մարգարիտը թողեց
իմ բազուկը, ճշալով դուրս վաղեց և ընկաւ քրոջը
վրայ :

Եւ այդ բոլորը — այն ճիչը, այն քրքիչը, կլա-
րայի ու շախափառթիւնը՝ կասարուեց այնպիսի արա-
գութեամբ, որ ես կանգնած էր քարացած՝ առանց
հասկանալու, թէ տեսած ի՞նչ է, երա՞զ, թէ իրա-
կանութիւն... Ես ուշքի եկայ միայն այն ժամանակ,
երբ լսեցի Մարգարիտի օդնութիւն կանչող աղա-
ղակը : Մօտեցայ, մենք երկասվ զգուշաթեամբ
բարձրացրինք կիսամեռ կլարային և տեղաւորեցինք
անկողնի վրայ : Նա շուած աշքերը յանել էր առաւ-
տազին, նայում էր անթարթ ու յամառ հայեացքով՝
առեւ այնտեղից սպասերալ մէկին : Մարգարիտը եր-
կու ձեռքով ծածկեց իր գէմքը, ծունկ չոգեց նրա
կողքին և գլուխը կռացրած անկողնի վրայ՝ մեղ-
միւ հեկեկում էր : Ես կանգնած մնացի հակառակ
կողմում համբ ու քարացած, չգիտէի ի՞նչ անել,
ի՞նչ ասել : Սակայն իրերն ինձ համար կամաց-կա-
մաց սպարզում էին, կատարուել էր այն, ինչցց
այնքան զողում էր Մարգարիտը, մեր զիսին կու-
տակուած փոթորիկը սպալթել էր յանկործ, մեղնից
անկախ, մեղնից դուրս, և մենք շանթանարուած
էինք : Վերստին լիշեցի գիշերուայ անցքերը, լիշեցի
գետի գոռոցը, փոքրէլ աղջկայ հեծեծանքները իմ
լուսամուտի տակ, որ անշուշտ մի երազ էր. ասել
է, որ ես էլ քնով էի անցել, ինչպէս և Մարգա-
րիտը, լուսաբացին մօտ զարթել էր կլարան և բաց
դոնից տեսել էր մեզ, մնացածը հասկանալի էր :

Յանցագործ էինք առանց յանցապարտ լինելու,
գժրախտ էինք ու խորտակուած վերջնականապէս,

այժմ սարսափելի իրազմթեան հանգէպ սիրտ չէինք
անում իրար նացելու, Այդ լուս ու գունատ ու բուռա-
կանը, որ ձգուած էր մեր առաջ անկողնի մէջ, իր
քար լսութեան տակ ծածկում էր մի անողոք դա-
տավճիռ մեր գէմք արձակուած ով զիտէ ում ձեռ-
քով : Ուր է բանականութիւնը, հաշուի առնուած
իրերի բանականութիւնը, ուր է անհատականու-
թիւնը իր անբռնաբարեկի իրաւունքներով, ուր է
վերագոյն ներդաշնակութիւնը յանցանքի և հատուց-
ման մէջ, մեզ զեկավարող, մեր ողբալի զոյսութիւնը
սպայմանաւորող իրերը միթէ մեղնից անկախ, մե-
զանից դուրս են միշտ : Ով է մեզ առնում, ուր և
ինչո՞ւ : Անա մեծ լուսթեան մէջ մեզ անհասկանալի
ու խուար ոյժեր կամաց-կամաց, վալրիեան առ
վայրկեան գարբնել էին մեր բախտը կաշկանդող
շղթաները և այժմ դարան մտած որսորդների պէս
յանկարծակի կողոպտում, պրկում էին մեզ՝ անկա-
րոզ գարձնելով մի հատիկ քայլ անելու զէպի մեր
բող գարձնելով մի հատիկ քայլ անելու զէպի մեր
երազանկութիւնը կեանքի մեծ ճանապար-
հերազած երջանկութիւնը կեանքի մեծ ճանապար-
հերազած կենցածքը ու անզօր էինք այդ ոյժի ա-
ռաջ, որին համարում ենք կոյր դիպուած, և որը
երեխ մեզ անհասկանալի իր տրամաբանութիւնն,
իր զարհուրելի բանականութիւնն ունի, քայլում է
զէպի մութ նպատակներ՝ զատ-զատ բախտերն ու
անհատները իր ձեռքին իրը արիւնոտ շաղախ գոր-
ծածելով : Շաղախ են, շաղախ, և սէր ու բոյք,
կեանք ու արեւ, յոյզեր ու յոյսեր, ծիծազ ու արցունք,
երիտասարդութիւն ու վայելքներ, երազներ ու
ցաւեր, ողջ շաղախ են լոկ մի յաւիտենական չէնքի,
որի ինչ լինելը չփափենք և որը շինուում է շինուում,
բայց վերջ չունի :

Փշրուած էինք ու անյոյս . Մարդարիտն լալիս
էր, իսկ իմ գլխում դառնում էին ու մտքերը ժխորով,
և հոգիս միտում էր . Սարսափի պէս մի բան էր թա-
գաւորում սենեակում, մեր շուրջը՝ մեր գլխի վերե-
և մանաւանդ կլարայի բաց մնացած, չուծ աչքե-
րում: Ո՞ւ՞ այդ աչքերը, այդ քարացած բիբերը...
ես աշխատում էի չնայել նրանց, խոյս տալ այդ
սպանիչ հայեացքից, որ մարդկային չէր, կ'ուզէի
գոնէ, որ նա թարթէր, մի շարժում գործէր, մի
բան ասէր, թէկուզ անիծէր մեղ այնպէս; որ բառերը
հալուած մետաղի պէս կաթ-կաթ ընկնէին մեր
գլխին: այրէին, փոթոթէին: Բայց նա անշարժ էր
ինչպէս մի մարմարէ մահարձան մի հին գերեզմանի
վրայ . Նրա գունատ մահատեսիլ դէմքի և ոչ մի
ջիւը չէր շարժում, շրթունքը չէր դողում. կոսկերը
չէին թարթում, ճակատը չէր կնծուում, նրա հո-
գում յանկարձակի մեռան յոյզ ու իզձ, ցաւեր ու
երազներ՝ տեղի տալով գերեզմանային ցրտութեան
ու խստութեան: Եւ այդ արձանացած դիակը այ-
նուամինայնիւ նայում էր այն յամտու ու անվերջ
հայեացքով, որով մեռնողները կարծես պլարտում
են անհունը, ուր տիեզերքի աներեսոյթ ոյժերը մի-
լիոնների բախտերից ու երազներից դարձնում են
յափտենականի շնչքը: Նա նայում է, և՝ իր, և՝ մեր,
և՝ ամենքի ճակատագիրը, խօսում է գերմարդկային
լեզուով մեր կեանքը զեկավարող մութ, անսանձ
կարողութեան հետ, կեանքի առեղծուածի լուծումն
է փնդրում, այս գերագոյն ժամին վերջապէս ձգնում
է իմանալ, թէ ո՞ւր է խորհաւրդը մեր ու զոյտութեան,
ինչո՞ւ մինչեւ իսկ սէրը, որի վրայ իրը թէ հաս-
տառուած է տիեզերքը, նոյնպէս ցաւոս է, ինչո՞ւ

համար ինքը աշխարհ եկաւ, ապրեց ու տառապեց
և անցնում է այժմ որպէս մի չնչին հիւլէ տիեզե-
րական խօլ մրրկի մէջ:

Սարսափելի հայեացք, ընկնող, խեղզող հար-
ցեր, որոնցից կ'ուզէի ազատուել, նրանք ալրում
էին իմ ուղեղը շիկացած երկաթի պէս, ես սա-
սանուած էի... Կանգնած էի տեղում՝ շիմանալով
ինչո՞ւ և տառապում էի կարծես իրականութիւնից
կարուած մի եղերական աշխարհում: Սա մը տան-
ջանք էր, որի գիտակցութիւնն ունէի և որից
խուսափելու հնարաւորութիւնից զրկուած էի:

Սենեակում դեռ իշխում էր վաղորդեան կիսա-
խաւարը, մի պարզ, խորհրդաւոր ստուեր, որ պա-
տել էր կահ-կարասափքը, պատերը՝ ինչպէս մի նուրբ
քող, դիշերային մթութեան յետին մնացորդ, որ
անկարող էր եղել ծածկել մեղ պատահականութեան
այս կոյր և ահազին հարուածից:

Դրսում գիւղը կամաց-կամաց շարժւում և
գործի էր կենում. անասունները անհոգ բառաչով
դիմում էին դաշտ, լուսում էին ճանապարհով անց-
նող գիւղացիների հատ-հատ ձայներ. ամենօրեայ
կեանքն էր վերակաւում միտկերպ, անյոյզ և երջա-
նիկ անզիտակցութեամբ, իսկ մենք մեր գիտակ-
ցական ու մեծ յոյզերի փոխարէն քարացել էինք
մեր տեղում որպէս յանցաւորներ, որոնք անկարող
են խոյս տալ իրանց յանցագործութեան տեղից Ով
է Աստուածային գիտակցութեանը կցորդել ցաւերի
այս ահազին բամինը:

— Թո՞ղ ինձ մենակ:

Ես ակամայ չորս կողման նայեցի՝ զարմացած,
որ քար լուսթեան մէջ խօսող կայ: Սակայն այդ
նա՛ էր, Մարդարիտը,

— Բայց այս ժամկիս . . . այս կացութեան . . .
դնամ, տանստիշնոցը կանչեմ:

— Թողի ինձ, խնդրում եմ մնակ և ոչ ոքի մի՛ կանչեր, - կրկնեց նա առանց գլուխը բարձրացնելու :

Ծեշտը վճռական էր. զգացի, որ աւելորդ կը լինէր հակածառել, և յետոյ ես մի՞թէ կարող եր իմանալ, թէ ինչ է վնդրում այս խեղճ ու տանջուած հոգին իր միայնութեան մէջ։ Հոգիները ծովեր են, որոնց յատակը երբէք արենի չողը չի լուսաւորում։ Դուրս եկայ զգուշութեամբ, բայց անկարող եղայ անից հեռանալ, փակուեցի իմ սենեակում։

Արեւ կամաց-կամաց յարձրացաւ հորիզոնի վրայ, որտեղից ամպերը խապառ քաշուել էին. պայծառ երկնքի տակ բացուեց աշնանային մի սիրուն օր: Լուսամտաթից թափանցած շողերը ողողել էին սենեակս ոսկեգոյն ցոլքերով, որոնց մէջ լողում էին բոլոր առարկաները, բայց իմ հոգում դեռ իշխում էր մութ գիշերը: Մտքերի, տպաւորութիւնների բեռով ծանրացած գլուխս երկու ձեռքով ըրռանած՝ ընկայ աթոռի վրայ. ի՞նչ էր կատարւում ինձ հետ, ուր էի ընթանում այսպէս, ասել չեի կարող. զգում էի միայն, որ կեանքիս յենակէտը կորցնում եմ ինչպէս նաւարեկումից յետոյ ծովի ալիքների կատաղութեան մատնուած մի դժբախտ արարած,

= զեր մալրու ավելի՞ն :

թեմիւ սարսուռ անցաւ մարմնովս : Այդ մայրը... նրա գտլուսողը խոռվից ինձ . ի՞նչ կապ կար նրա և իմ մէջ . նա տակաւին ոչինչ չգիտէր, ոչինչ, եթէ զիտենար էլ, միթէ մեղաւոր էի նրա առաջ

միթէ յանցագործ էի. անշուշտ ոչ, բայց և այնպէս
դողում էի, կարծես այդ կինը դալիս էր յատկապէս
ինձանից հաջիւ պահանջնելու իր զաւակի դժբախ-
տութիւնան համար : Ընկերական, հասարակակիան յա-
րաբերութիւնների, իրար բաղխուսդ կրքերի, բախ-
տերի բարդ ցանցի մէջ մայրերը միշտ իրանց ա-
ռանձին և եղակի իրաւունքներն ունին, որոնք չեն
ևնթարկուում սովորական տրամարանութեան, որով-
հետև նրանց հիմունքը տարրեր է : Անկախ բոլոր
հանդամանքներից, անհատական իրաւունքներից,
օրէնքներից, բարոյական հասկացողութիւնից՝ մայրը
իր զաւակի երշանկութիւնն է վնդրում աշխարհում.
կատարեալ, գեղեցիկ երջանկութիւնը, որպիսին միայն
նա' զիսէ երազել, Ոչոք և ոչինչ չի կարող հեր-
քել նրա այս գերագոյն իդքը, որովհետև նա մայր
է, և նրա առաջ մեզաւոր են բոլոր նրանք, որոնք
իր սիրելիների դժբախտութեան պատճառ են հան-
գիսանում թէկուզ ակամայ : Վշտացած մայրութիւնը
մի ծանր վիրաւորանք է մայր բնութիւնը : Եւ ես
գողում էին երեկի հէնց այդ մայրութեան առաջ, իմ
գոյութիւնը հակառակ իմ ցանկութեան դարձել էր
ցաւերի ազրիւր նրա զաւակների համար . բացառ-
ութիւն չկար, նա մայր էր...

Մէկը զուռոս ծեծեց և առանց սպասելու իմ
այնին՝ թափով ներս ընկաւ, տանտիկինն էր, գու-
ատ, վախսեցած, խղճալի:

— Ախ, ո՞րպիսի գժբախտութը և ո՞ւշը
գուք երևակայել չէք կարող խեց զն օրիորդ, նա
ինամահ է... զիշերը կաթուածահար է եղել և ան-
լողնում քարացել: Մայրն եկաւ... խեղճ Մարգա-
րիտ. ի՞նչպէս է պատահել, երեխ գուք էլ լոել է Ք

որեւէ ձայն, այնպէս չէ^o, անհանգիստ էք եղել. իսկ Մարդարիսն ի՞նչպէս է վախեցել, նա էլ կարծես ուշքը կորցրել է, չի իմանում՝ ինչ է անում: լաւ է, որ մայրն եկաւ, պատրաստում են մեկնելու անմիջապէս, ինեղներ... ի՞նչպէս են արտասում, լսում էք...

ի՞նչպէս չէ... բոլոր ժամանակ, ինչպէս խօսում էր պառաւը, իմ ուշքը զրաւել էին միւս սենեկից լսուող մեղմ հեծեծանքները. մայրն էր արդեօք, թէ^o Մարդարիսը, ևս չփառէի, բայց դա այլևս հետաքրքիր էլ չէր. երկուսի արցունքն էլ հաւասարապէս ինձ էր վերաբերում, ևս բաժին ունէի, ես լավիս էի նրանց հետ, ապրում էի նրանց ցաւը, հոգիս լուռ մխում էր:

— Ո՞վ կը սպասէր, շարունակեց տանտիկնը. երէկ նա լաւ էր, իսկ այսօր, սարսափելի է, միայն նայում է. այս յարկի տակ այսպիսի դժբախտութիւն դեռ երբէք պատճանած չէր: Չեզ համար էլ երեխ ծանր է, ի՞մ սիրելի պարոն, հարեւանութիւնն ուրախ չեղաւ, բայց ի՞նչ արած, ո՞վ կը սպասէր, Տէ՛ր Աստուած, սկզբում ամեն ինչ այնպէս լաւ էր ընթանում և յանկարծ այսպիսի վախճան:

Սիս, այս պառաւը, որ զիտէ միշտ անուանելի լինել. չփառէի ինչպէս խօսակցութիւնն ընդհատել և ճանապարհ գնել նրան:

— Ի՞նչ պայծառ է օրը, այնպէս չէ^o, տիկին:

— Այս', օրը պայծառ է, այսուհան մենք չատ այսպիսի օրեր կ'ունենանք, սկսւում է լեռների փոքրիկ ամառը:

— Յետոյ այնուամենայնիւ ձմեռը կը դայ. դաժան, մահաշունչ,

— Հա՛, ինարկէ, աշխարհի բանն է. ամեն ինչ իր ձմեռն ունի. ինեղն կլարա, նրան շուտ վրայ հասաւ:

— Աշխարհի բաները...

Ես սկսեցի մեղմիւ սուէել չդիտեմ ինչ... տանտիկինս լոեց և զարմացած նայում էր, երևի արածս նրան թւում էր ատրօրինակ:

— Դուք գունատ էք, ինչո՞ւ էք գունատ:

— Մի՞թէ:

— Այս', չատ գունատ. ի՞նչ է պատահել, երևի գիշերը վա՞ս էք քնել. հատկանում եմ, բոլորովին մօտիկ այսպիսի դժբախտութիւն... ինարկէ դժուար էր քնել:

— Աշխարհի բաներն են այդպէս, մէկը գունատ է, միւսը լալիս է, իսկ օրը պայծառ է:

— Ինեղները, հա՛, լալիս են... ես էլ խօսքով ընկայ, հաղար ու մի բան պէտք է անել, մեկնում են ախր: Դուք ցած գնացէք նախաճաշելու, այսօր մենակը կը լինիք, ո՞ւն, պառաւները, մոռացայ, որ եկել էի ձեզ նախաճաշի կանչելու:

Վերջապէս թողեց ինձ. այնքան բան ունէի մտածելու: Վայրիեւանները խոներով բեռնաւորուած՝ պաշարել էին գլուխս, չգիտէի ինչից սկսել, ուր յանդել, որամարանութիւնը խոյս էր տուել, և ուղեղումն ստեղծուել էր մոքերի մի ժխոր: Մի բան միայն գիտէի խիստ որոշ, որ «Երանք մեկնում են այսպիսի օրուց, որ այդ կամացիւ ու զարմացնում էր, ոչ վշտացը-նում, նայնիսկ ինձ թւում էր անհրաժեշտ, որ նրանք մեկնեն: Յետ ինձ ոչ զարմացնում էր, ոչ վշտացը-նում, նայնիսկ ինձ թւում էր անհրաժեշտ, որ նրանք մեկնում են, մեկնում են»...

Եւ նրանք մեկնեցին երեկոյեան դէմ, երբ հասաւ յատկապէս պատուիրուած փակ կառքը: Ես դուրս եկայ միայն այդ ժամանակ և մօտեցայ մօրը. խօսք

չունէի ասելու, նայել էլ չէի կարողանում, նա երևի հասկացաւ յուղմունքս և ինքը առաջինը մեկնեց ձեռքը :

— Շնորհակալ եմ, ոլարո՞ն, դուք անչափ բարի էք, դուք միշտ անսպէս բարի էք եղել, մենք ձեզ էլ երբէք չենք մոռանայ :

Մարգարիտը ձեռքս բռնելով հազիւ կարողացաւ շնչալ. «Սպասեցէք նամակիս»: Եւ կառքը շարժուեց գանգաղոթեամբ. ևս ու տանտիկինը կանգնած մի տոժամանակ նայում էինք գնացողների յետեից, յետոց կառքը պտոյտ դորձեց, անցաւ փոքրիկ բրի յետեր, և ամեն ինչ ծածկուեց :

Նոյն վայրկեանին կարծես աշխարհն ամոյացաւ ինձ համար, և ես մնացի մենմենակ, անսպատակ, անմիտ քաշ տալու իմ արտասուելի դոյտթիւնը անծայր անսպատաների միջով: Դարձեալ նոյն չարագուշակ սուլոց՝ «Արանք մեկնեցին, նրանք մեկնեցին, մեկնեցին»...

— Տէ՛ր Աստուած Տէ՛ր Աստուած, մրմիջում էր պառաւը, որպիսի դժբախտութիւն... դարձեալ մնացինք մենակ... շուտով երեի դուք էլ կը չուէք տարափոխիկ թռչունի պէս, և ես կրկին կը մնամ մենմենակ. այնպէս տիսուր է այստեղ ձմեռը, քամիներ են փչում, ձիւն է թափում անընդհատ, դիշերը անլոյս, վհատեցուցիչ և մարդ մենակ, մենակ...

Ես լուս նայում էի այս խղճուկ պառաւին, որ այժմէն սգում էր իր միայնութիւնը և ամեններն չէր կասկածում, որ աւելի մենակները, աւելի մառացուածները կան աշխարհում. սարսափելի միայնութիւն բազմութեան մէջ, ամրոփի մէջ: Մենակ, մենակ, մարդեկ բոլորը մենակ են, և հոգիների ձմեռն աւելի խեղդող է, քան բնութեանը:

XIV

Հինդ օր էր... զժոխքի օրեր, զեռ այն նամակը վար: Եռորջս իշխող զատարկութիւնը ոչնչով չէր լցում: Տանտիկինս անձանօթ իմ հոգու սև փոթորկին, խօսում էր անընդհատ, միամիտու միմար և առանց հատկանալու արածը՝ չօշափում էր իմ թարթ վէրքերը: Ես փախչում էի սնից, նրանից, թարթ, նասում էի գետափին և ամբողջ ժամերով գլուխ ձեռներիս մէջ առաջ լուսմ էի նրա շառաչը, միակերպ, ծանր: Եւ առն էի վերապահնում երեկոյեան մոտը ու մոլար, հարեւան սենեակում իշխող քար լուսթիւնը խեղդում էր ինձ, իսկ սպասուող սամակը զեռ չկար:

— Տիկին, ես այսօր մեկնում եմ:

— Մեկնում էք, ես այդպէս էլ զիտէի. տարափոխիկ թռչուններ, բարի զնաք, բայց այսուեկ մի նախակ ունիք, հէնց այս բռնէին բերին, աւելացրեց սանտիկինս անտարբերութեամբ:

Ծնկներս դողացին, միրաս թնդաց, խլեցի նամակը, չսապով սենեակս բարձրացայ և դողոչուն մատներով բարի արի. նրանից էր...

«Քոյրս մեռաւ, իմ դժբախտ բարեկամ, մենք նրան թաղեցինք երէկ և նրա հետ իմ սիրառ, խոցոտուած, արիւնոտ սիրառ: Ամեն ինչ միջացացաւ... փոթորիկը պայթեց, անցաւ՝ թողներով իր յիտեից մահ ու գերեզման: Հոգուս տառապաներն անհուս է, արցունիները բարացել են անտեղ, և նրանց վրայ թեատարած սաւառնում է ոչնչութիւնն ու խաւարը:

«Այս զիշեր երկար ժամանակ թափառել եմ մեր պարտիզի ծառերի տակ. բոլ մասին էի մոտածում, իմ խեղճ ընկեր, և ամեն անգամ, երբ քո պատկերը ներկայանում էր աչքիս, իսկոյն յայտնուում էր բրոջս ուրուականը, գունատ, աչքնրը

չուած, կիանքի, երջանկութեան ծարաւը յաւիստեան քարացած դէմքին, զալիս կանգնում էր մեր երկուսի մէջ, մեռելատիպ ու զարնուրելի: Յատ փախայ պարտիվից, ուր ծառերը ողջ ուրուականներ էին, և ամեն տեղ նա՛ էր, նա՛ էր .. Ծ, այդ ուրուականը, լոնչպէս ազատուեմ նրանից, ո՞ւր փախչեմ...

« Դու չգիտես, թէ սուկումի ու ցաւի այս օրերում ինչ ահազին չափերի է հասել իմ դըքախտ սէրը դէպի քեզ, և ես... ների՛ր ինձ, նոզի՛ս, ևս աշխատում են խեղդել այն. կ'ուզէի մաս-մաս՝ ինչպէս իմ արինուս սրտի կտորները, դուրս քաշել իմ կրծքից այդ խղճուկ սէրը, որ հ'նձեծում է ու լալիս հիւանդ երիսւոյից պէս զիշեր ցերեկէ և չի ուզում բաժանուել ինծանից: Մեր ցաւոտ կիանքի ընթացքում քրոջս ուրուականը երկու ճանապարհների հանգոյցում սպառնալիք կերպով ցցուած մի արծան է, որ ցոյց է տալիս մեր ուզին դէպի հակառակ կողմեր: Քայլենք, քայլենք լուսթեամբ:

« Եւ այսպէս մար ճանապարհներն այսուհետեւ տարբեր են իմ ընկեր, ոչինչ չի կարող նրանց միացնել, որովհետեւ ոչինչ չի կարող հեռացնել իմ աչքից քրոջս ուրուականը, որ քայլառքայ ընթանում է ինձ հետ ամեն տեղ: Գիշերներ ունեցայ, սոսկումի, զարհուրանիք զիշերներ, երբ իմ երեւակայութիւնը փորձում էր խաղաղ անցեալ պատկերների հետ, և միշտ քո փոխարէն նա՛ այն ուրաւականը ցցուեց աչքիս առաջ, խաւարի մէջ, միշտ քարացած հոյեացը դէպի անհունը, միշտ իր մահնատեսի գուհատութիւնը, իր տանջանիք սպառնալիք կերպով ի ցոյց դրած երկնքին, աշխարհին, ինձ: Ա՛հ, ևս մի կենդանի ողջակէզ եմ այն աստծուն, որի անունն է կոյր պատահականութիւն եւ որ այնքան հզօր է մարդկացին բախտերը տնօրինեիս: Ի՞նչ յանցոնիք եմ

բաւում այս զարհուրելի զոնով, ես չգիտեմ, բայց զգում եմ, որ անկարող եմ ուրիշ կերպ վարուել:

« Ոչինչ ազատ, ոչինչ ինքնուրոյն, ինքնազլուխ այս մեր ողբայի աշխարհում: Մեռելներ ու կենդանիներ, ծանօթներ ու անծանօթներ, թշնամիներ եւ բարեկամներ ողջ միացած են իրար հետ աներեւոյթ կապերով, քաշըշում, տրորում, մաշում, կրծուում են իրար եւ կիանքը դարձնում ցաւերի, դժբախտութիւնների մի անհատնում շարք: Եւ այդ բոլորի վրայ իշխում է միշտ մեծ լուսթիւնը, համբ հսկայական վհուկը, միակինքնակալը, միակ տէրը, միակ անհատներ եւ հասարակութիւններ սոզում են երջանկութեան երազների յիտեւից երրէք չնասնելու համար:

« Ես երկար մտածել եմ քո եռութեան մասին, իրաւունք ունիս, իմ դժբախտ բարեկամ, նրա տակ է թագնուած իսկական կեանքը, նա է, որ իր առանձին օրէնքներն ու տրամարանութիւնն ունի, որ փշրում է եւ անցնում դէպի մի զերագոյն նպատակ, եւ մենք այն չենք տեսնում, չենք հասկանում, խարում ենք մեզ: Ե, կիանքի մեծ նշանաբառութեան մասին մենք ամենքս չենք խօսում երբէք, լուսթիւնը նրա հսկայական զերեզմանն է: Այդպէս են եւ մեր ուզիները...

« Երաբանցիւր ոք, որ անցնում է իմ առաջից, ես ակամայ նայում եմ դէմքին, եւ ինձ թւում է, թէ նա՛ էլ ինձ պէս իր նոզում կրում է գամբարանների մի ամբողջ շարք ծնուած ու մեռած յոյսերի, երազների, իղձերի, հուր տեհների դամբարաններ, որ նա լրութեամբ տանում է թաղելու մեծ լուսթեան ծոցում:

« Սէրք դարձաւ մեր հոզու զերեզմանափորը, նա եւ՛ փորում է, եւ՛ լալիս: Բայց ես չեմ լալիս, ես լուռ եմ այժմ. կրծքիս տակ ամեն ինչ քար կորեց, եւ յոյշերս նրանց վրայ թառել են, որպէս

սեւաւոր թուզուններ, անշարժ ու համբ: Մօրս էլ
ոչինչ չասացի, ի՞նչ օգուտ իմ խօսկելոց, աւելի
լաւ է մենակ ման ածեմ հոգուս գերեզմանները,
ոչ որ, ոչ որ ըլ տեսնի նրանց քեզանից բացի,
մեր հոգիները բոյրեր են: Լուռ, լուռ եւ՝ դու իմ
դժբախտ բարեկամ, խորդն ու ճիշը չեն օգնի.
Թող ապրեն մեր խոհերը մեր տանջուող հոգի-
ներում, որպէս թօշնած: Գունատ ծաղիկներ,
որոնք մի օր փարթամ էին ու բուրալից եւ որոնք
էլ երբէք չեն փթթի: Դու տեսնի ես այն հին
գրքերը, որոնց ուշագ հին օրերից չորացած ծաղկի
թերթիկներ կան. ահա մեր կեանիք:

«Մի՛ փորձիր ինծ գտնել, այդ անօգուտ կը
լինի. երբ ստանաս իմ այս նամակը, ես ու մարս
արդէն հեռու կը լինինք պատեղից՝ գնում ենք
դէպի անձանօթ երկրներ: Ինծ հետ՝ իմ հոգու
մէջ տանում եմ քո պատկերը, քո բոց հայեացքը
քո զիսթիչ յափշտակութիւնը, քո խենթ ու ազ-
նիւ սէրը, ինչպէս և' քո ցաւը, որը ես ապրում
եմ, որը պաշտում եմ և տառապում: Փախչում
եմ դէպի օտար, հեռու հորիզոններ, և նա էլ ինծ
հետ է, այն գունատ, յամառ ուրուականը որ
կարծես իր բաժին երջանկութիւնն է ֆնդրում:
«Ների՛ր, ների՛ր ինծ, բայց մեր անջատումը
յաւիտեան է:

Նամակը ձխուծ՝ վայր թողեցի ձեռքիցս և
հեկեկալով բնկայ անկողնի վրայ ։ ։ ։ ։

Կառքի չուղարկեմ լոյթու է... ՏԵՌ
Աստված...

Տանտիկինն էր . գլուխս բարձրացրի , նա
կանգնած էր շեմքում անշարժ , մատը շրթունք-
ներին դրած մտածկոտ՝ և նայում էր յատակին
ընկած նամակին :

2258

2259

2413

